

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊՏԻ ՍԵՌԻ ԽՆՐԱԿԱԿԱ ԸՆՏՐՈՒԹՅԱԿ ԵՒ

ՍԵՌՈՎ ՊԼՅՍԱԿՈՐԿԱԾ ՀՊԻՈՒԹՅԱԿ

ԱՐՇԵՍԱԿԱԿ ԸՆԴՀԱՏԱԿ ԿԱԽԱՐԹԵԼՍԱԿ

ՈՒՂԿԱԾ ՊԵՏԱԿԱԿ ԲԱՐԱԲԱԿԱՆՈՒԹՅԱԿ ԵՒ

ԾՐԱՐԵՐԻ ՄՇԱԼԴԻՏԱՐԿԱԿԱ ԶԵԿՈՒՅՑ



Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար
“Combating Gender-Biased Sex Selection in Armenia”



Ճրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից
This project is funded by
the EUROPEAN UNION



Մարդկային զարգացման
միջազգային կենտրոն
International Center for
Human Development

**Հայաստանի Հանրապետությունում
պտղի սեռի խտրական ընտրության և սեռով
պայմանավորված
հղիության արհեստական ընդհատման
կանխարգելմանն ուղղված
պետական քաղաքականության և ծրագրերի**

Մշտադիտարկման զեկույց

Շապիկի լուսանկարը՝ [iStock.com/7postman](https://www.istock.com/7postman)

Սույն զեկույցի բոլոր առցանց հղումները հասանելի էին 2016թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ:

Հասարակույթներ

ԱԶԿ	Արմավիրի զարգացման կենտրոն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՅՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՉԼՄ	զանգվածային լրատվության միջոցներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԲՀ	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄԿՅԽ	Մարտունու կանանց համայնքային խորհուրդ
ՄԴԶ	Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ
Փոխցանց	«Տեղական մասնակցության և ոչ խտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանց

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն.....	6
2. Փոփոխության տեսություն.....	12
3. Կիրառված մեթոդաբանություն.....	14
3.1. Հիմնական մարտահրավերները և մեթոդաբանության մոտեցումները.....	19
3.2. Փաստական տվյալներ և խորհրդատվություն.....	25
3.3. Հանրային իրազեկում և շահերի պաշտպանություն.....	29
3.4. Լոբբինգի մոտեցումներ.....	33
4. Փաստական հիմքեր և գիտական հիմնավորումներ.....	39
4.1. Հայաստանում սելեկտիվ աբորտների տարածվածության, պատճառների և ժողովրդագրական տվյալների մասին հետազոտություններ.....	39
4.2. Փաստերի վրա հիմնված հանրային քաղաքականություն և ծրագրեր.....	45
5. Հանրության ջանքերի համախմբում՝ հանրային քաղաքականության և ծրագրերի շրջանակներում.....	56
5.1. Հանրային իրազեկման քարոզարշավներն ու շահերի պաշտպանությունը.....	56
5.2. Ինստիտուցիոնալ համագործակցություն.....	68
5.3. Հանրային իրազեկման և շահերի պաշտպանության նպատակով կարողությունների հզորացում.....	71
6. Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման հանրային քաղաքականության վրա ազդեցություն.....	79
6.1. Քաղաքականության հետազոտություններ, վերլուծություն, առաջարկություններ.....	79
6.2. Ինստիտուցիոնալ համագործակցություն.....	86
6.3. Հանրային քաղաքականության մասին իրազեկման աշխատանքներ.....	88
7. Եզրակացություններ.....	94

8. Առաջարկություններ.....	102
8.1. Հանրային քաղաքականության մշակում, մշտադիտարկում և զնահատում.....	102
8.2. Փաստական հիմքի ապահովում և հետազոտությունների իրականացում.....	104
8.3. Կարողությունների հզորացում և իրազեկում.....	105
8.4. Իրավական կարգավորում և քաղաքականության նւղղություններ.....	107
8.5. Ինստիտուցիոնալ համագործակցություն.	108

1. Ներածություն

1. Նորածինների սեռերի շեղված հարաբերակցությունը և «կորսված աղջիկների» երևույթը վերջին տասնամյակներին լուրջ խնդիր է դարձել մի շարք երկրներում, այդ թվում՝ Հնդկաստանում, Նեպալում, Պակիստանում, Բանգլադեշում, Չինաստանում,¹ Վիետնամում և Հարավային Կովկասի երկրներում:
2. Ներկայում այս մտահոգիչ երևույթն առկա է նաև Արևելյան Եվրոպայում՝ Բալկանյան և Հարավային Կովկասի երկրներում՝ այդ թվում նաև Հայաստանում, ուր նորածինների սեռերի խախտված հարաբերակցությունը լուրջ մարտահրավեր է: Հայաստանում այս երևույթի անմիջական պատճառը մասնագետները միաձայն համարում են սելեկտիվ աբորտը, որին նախորդում է պտղի սեռը պարզելու նպատակով արվող ռադիոլոգիական հետազոտությունը, և ինչի արդյունքում Հայաստանում 2011 թվականին մասնագետների գնահատականով տարեկան չէր ծնվում շուրջ 1400 աղջիկ:²
3. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալների համաձայն՝ Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնության շարունակական աճ գրանցվել է անկախության ձեռքբերումից անմիջապես հետո և հետագա տարիներին շատ բարձր է եղել՝ 100 նորածին աղջկա հաշվով, 102-107 տղայի ծննդյան կենսաբանական նորմի փոխարեն, վերջին տասնամյակում Հայաստանի մարզերում նորածին տղաների թիվը 100 աղջկա հաշվով 111-ից 124 էր: Այս հարաբերակցությունը նորածինների սեռերի անհամամասնության առումով աշխարհում դիտարկված ամենաբարձր

1 Dudwick, Nora. 2015. "Missing Women" in the South Caucasus: Local perceptions and proposed solutions. <http://www.worldbank.org/content/dam/Worldbank/Highlights%206%20Features/eca/armenia/missing-girls-report-english.pdf>:

2 Քրիստոֆ Զ. Գիլմոտ, Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. Ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն, Երևան, 2013թ.: http://www.unfpa.am/sites/default/files/Sex_Imbalance_report_Arm_final-with%20cover-final.pdf:

ցուցանիշներից է այն զիջում էր միայն Չինաստանին (118) և Ադրբեջանին (116):¹

4. Երեխայի սեռի ընտրության առաջնային գործոնը, թերևս, կանանց նկատմամբ զգալի խտրականությունն է և տղայի համեմատ՝ աղջիկ երեխայի նվազ արժևորումը: Մյուս երկու գործոններն են վերարտադրողական առողջության և ախտորոշման համապատասխան տեխնոլոգիաների մատչելիությունը և ծնելիության ցածր մակարդակը, ինչն առաջին գործոնի առկայության պարագայում ճնշում է ձևավորում ընտանիքում ապագա երեխայի սեռի վերաբերյալ որոշում կայացնելու առումով:
5. ՄԱԲՀ գնահատականի համաձայն՝ նման իրողության շարունակականությունը կհանգեցնեք Հայաստանի բնակչության սեռատարիքային կազմի պատկերի Էական խաթարմանը. 2020թ-ին բնակչության սեռատարիքային կազմում մեծամասնություն կկազմեին երիտասարդ տղամարդիկ, իսկ 2040թ-ին անհամամասնությունը կհասներ 30,000-ի:² ՄԱԲՀ ուսումնասիրությունները վկայում են նաև, որ սեռով պայմանավորված հղիության արիեստական ընդհատումները հանգեցնում են ժողովրդագրական հավասարակշռության խախտման, արտագաղթի մեծացման, թրաֆիքինգի և սեռական բռնությունների աճի, ուստի և՛ հանցագործությունների թվի ընդհանուր աճի:
6. Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արիեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման, քաղաքականության ձևավորման և կրած փոփոխությունների դինամիկան գնահատելու, իրականացվող քաղաքականության դասերի համադրելիությունն ապահովելու առումով մասնավորապես կարևորվում է առանձին երկրներում այս ուղղությամբ վարվող քաղաքականության դինամիկայի ուսումնասիրությունը:
7. Հետաքրքրական է, մասնավորապես, մի շարք երկրներում այս մարտահրավերին պետականորեն արձագանքելու փորձը: Այսպես, Կենտրոնական Չինաստանում 2000թ. իրականացված ուսումնա-

1 Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. տեղեկատվական գրքույկ. Երևան, 2013թ.: <http://www.unfpa.am/sites/default/files/Booklet-on-skewed-SRB-final.pdf>.

2 Նույն տեղում:

սիրությունը փաստում է, որ կանանց շուրջ 36%-ը հաստատում է, որ ունեցել է սելեկտիվ աբորտ: Իգական պտղով հղիությունների շուրջ 25%-ն արհեստականորեն ընդհատվել է, մինչդեռ արական պտղի դեպքում ընդհատվել է հղիությունների շուրջ 2%-ը:¹ Այդուհանդերձ, այս իրականությունը երկար տարիներ չէր ընկալվում ու չէր ընդունվում Չինաստանի պաշտոնական շրջանակների կողմից: Մինչև 1990-ականների կեսերը Չինաստանի պաշտոնական և գրեթե պաշտոնական շրջանակները միաձայն մերժում էին վիճակագրական տվյալներն ու փաստերը կապել ժողովրդագրության ոլորտում վարվող պետական քաղաքականության հետ: Չինաստանի պաշտոնական և կիսապաշտոնական շրջանակների արձագանքն ու գնահատականը խնդրի վերաբերյալ տեղացի և միջազգային մասնագետների հնչեցրած մտահոգություններին միանշանակ էր՝ «կեղծ ահագանգ» է, անհիմն ու չարական քննադատություն: Իսկ «կորուսյալ կանանց» առկայությունը և անհերքելի տվյալները բացատրվում էին վիճակագրության թերություններով՝ նորածիններին, հատկապես՝ աղջիկներին պատշաճ չեն հաշվառում:² Այդուհանդերձ, պաշտոնական վերաբերմունքն արմատականորեն փոխվեց 1990-ականների վերջին, և հատկապես՝ 2000-ականների սկզբին, երբ հրապարակվեցին 2000-ականների համապետական մարդահամարի արդյունքները, որոնք բացահայտեցին նորածինների թվում սեռերի անհամամասնության անընդունելի շեղումը՝ երկրում միջինում 100:120:³ Ներկայում, Չինաստանում հրապարակայնորեն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներում բաց խոսում են 30-40 միլիոն չծնված աղջիկների մասին: Գիտական շրջանակներում բազմաթիվ հետազոտություններ են արվել, կա չինարեն մեծածավալ գրականություն, վերջին տասնամյակում հրապարակվել են բազմաթիվ աշխատություններ ու հրատարակվել գրքեր ու ծավալուն հոդվածներ:⁴

8. Հատկանշական է, որ առանձին մասնագետների գնահատականներով, գրեթե նույնը կարելի է ասել Հայաստանի պարագայում:

1 Chu J. Prenatal sex determination and sex-selective abortion in rural central China. *Popul Dev Rev* 2001;27:259-81. <http://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/j.1728-4457.2001.00259.x/abstract>:
 2 Peng P (ed). Zhongguo Jiefa Shengyu Quanshu (The Complete Book of Family Planning in China). Beijing: China Population Press. 1997,939,959,984 in ICHD Healthcare. <http://ichd.org/?aid=2&com=module&module=static&id=1104>:
 3 Nie J.-B. Non-medical sex-selective abortion in China: Ethical and public policy issues in the context of 40 million missing females. (2011) *British Medical Bulletin*, 98 (1), pp. 7-20. <https://academic.oup.com/bmb/article/98/1/7/468425/Non-medical-sex-selective-abortion-in-China>:
 4 Chen W. Zhongguo de Rengonliuchan (Abortion in China). (Chapter 6) Beijing: Scientific & Technical Documents Publishing House, 2005.

Այսպես, սույն մշտադիտարկման զեկույցի նպատակով անցկացված փորձագիտական հարցազրույցների մի շարք մասնակիցներ նշում են, որ խնդրի վեր հանման վաղ շրջանում, մասնագիտական, ակադեմիական և պաշտոնական շրջանակներում շատերը մերժում էին հիմնախնդրի առկայությունը, բերելով տարբեր փաստարկներ: Թերահավատության փաստարկներ, թեպետ հազվադեպ, հնչում են նաև այժմ, անգամ հեղինակավոր ու մեծ փորձ և վաստակ ունեցող մասնագետների կողմից:

9. Խնդրի լուծման նպատակով 1980-ականներից Չինաստանը որդեգրել է առավելապես իրավական սահմանափակումների վրա հենված պետական քաղաքականություն, որի համաձայն թե՛ առանց բժշկական ցուցման պտղի սեռի որոշման հետազոտությունը, թե՛ առանց բժշկական ցուցման սեռով պայմանավորված սելեկտիվ աբորտները տարիներ շարունակ արգելված են: Այս դիրքորոշումն, ընդհանուր առմամբ, համահունչ է միջազգային հանրության շրջանում առկա համաձայնությանը. երեխայի սեռի ընտրությունը և, մասնավորապես, պտղի սեռով պայմանավորված աբորտը բարոյապես դատապարտելի է, երբեմն իրավական առումով՝ անթույլատրելի: Նման մոտեցումը հիմնավորված է երկու հուժկու փաստարկով. սեռով պայմանավորված աբորտը ներթուստ անընդունելի է, քանի որ բացահայտ կերպով սեքսիստական է և կանանց ու աղջիկների հանդեպ խտրականության խայտառակ դրսևորում է, և միաժամանակ, անթույլատրելի է, քանի որ հանգեցնում է սոցիալական կործանարար հետևանքների, այդ թվում՝ նորածինների սեռերի ահռելի անհամամասնությունների:¹
10. Այդուհանդերձ, գերազանցապես իրավական սահմանափակումների վրա հենված պետական քաղաքականության արդյունավետությունը բավարար չի թվում. Չինաստանում բարելավման շուշափելի ձեռքբերումներ դեռևս չկան, իսկ երևույթի հետևանքները միայն ահագնացող բնույթ են կրում: Իրավական կարգավորման և սահմանափակումների արդյունավետության տեսանկյունից Չինաստանի փորձը շատ կարևոր է, քանի որ այն փաստում է, որ, չնայած խիստ պաշտոնական քաղաքականությանը, սահմանափակումներին ու սահմանված պատժամիջոցներին՝ սեռով պայմանավորված սելեկտիվ աբորտները շարունակում են տարած-

¹ Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, Առողջապահության ոլորտում սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և գործող պրակտիկայի վերլուծություն, 2016թ.: <http://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=1104>:

ված մնալ վերջին երեք տասնամյակներին և Չինաստանը, թերևս, բախվում է երևույթով պայմանավորված անհամեմատ ավելի ծանր հետևանքների, քան աշխարհի որևէ այլ երկիր, այդ թվում՝ Չայաստանը:

11. Չինաստանի փորձը վկայում է, որ աբորտները սահմանափակելու, երեխայի սեռի ընտրությունն ու երեխայի սեռի նախաձեռնողյան հետազոտությունը սահմանափակելուն՝ երեխայի սեռի խտրական ընտրության դրսևորումների դեմ պայքարելուն ավելի արդյունավետ այլընտրանք է երևույթի խորքային պատճառների դեմ պայքարը, այդ թվում՝ հասարակության մեջ կանանց կարգավիճակի ու դերի աստիճանական բարձրացումը, ինչը կհանգեցնի տղա երեխային հավասար՝ աղջիկ երեխայի արժևորմանը, և, համապատասխանաբար, սելեկտիվ աբորտների նվազմանը:¹
12. Ինչպես Չինաստանում, այնպես էլ Չայաստանում պտղի սեռի ընտրության խնդիրների շուրջ քննարկման կիզակետում ինչպես Էթիոպիայի, բարոյականության, արժեքների, իրավունքների, փիլիսոփայության հարցերն են, այնպես էլ խնդրի սոցիալական հետևանքներն են՝ հասարակության համար դրա վտանգավորության աստիճանն ու ժողովրդագրական մարտահրավերին ի պատասխան վարվող քաղաքականության արդյունավետությունը:
13. Առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության սահմանափակման միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երեխայի սեռի ընտրության երևույթի՝ մշակութային նորմերում խորապես արմատացած լինելու հանգամանքը բարդացրել է դրա ընկալումն ու ընդունումը մասնագիտական, ակադեմիական և պաշտոնական շրջանակների կողմից որպես խնդիր, որը հղի է պետության համար բազմաթիվ կործանարար հետևանքներով:
14. Չայաստանի պարագայում, բարձրաստիճան պաշտոնական, մասնագիտական և քաղաքականության մեջ որոշում կայացնող գործիչների կողմից պտղի սեռի խտրական ընտրության երևույթի ճանաչումը և ընդունումը որպես ազգային անվտանգության խնդիր տևել է շուրջ երեք տարի՝ 2011թ. ՄԱԲԶ-ի կողմից խնդրի մասին բարձրաձայնելուց մինչև 2014թ. 33 վարչապետի՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների

¹ Նույն տեղում:

կանխարգելմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտության մասին առաջին հանձնարարականը: Այդ ժամանակահատվածում խնդրով զբաղվող պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները և միջազգային զարգացման գործընկերները կարողացել են կիրառել քաղաքականության վրա ազդեցության հաջողված և արդյունավետ մեխանիզմներ, երևույթի ռիսկերի ու բացասական հետևանքների մասին իրազեկման առանձին ծրագրեր, որոնց արդյունքում որոշակիորեն փոխակերպվել են հիմնախնդրի վերաբերյալ պաշտոնական և հասարակական շրջանակների մոտեցումները:

15. Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման ոլորտում պետական քաղաքականության, ինչպես նաև միջազգային ու հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի ընդհանրական վերլուծությունը ցույց է տալիս, որ խնդրի կարգավորման նպատակով Հայաստանը որդեգրել է համապարփակ կամ փոխլրացման քաղաքականություն՝ գուճորդելով օրենսդրական սահմանափակումները և երևույթի իրավական կարգավորմանն ուղղված առաջարկները նախաձեռնություններով, որոնք առավելապես ուղղված են հասարակության իրազեկմանը, աղջիկ երեխայի արժևորմանը, խտրականությունը սնող կարծրատիպերի փոխակերպմանը և այդ փոխակերպումներին հասնելու համար անհրաժեշտ մարդկային կապիտալի և ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորմանը:

2. Փոփոխության տեսություն

16. Ինչպես վերը նշվել է, Հայաստանում առկա են միջազգային պրակտիկայով ապացուցված պտոդի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության ընդհատման բոլոր երեք հիմնական նախապայմանները՝ հասարակությունում տղա երեխաների գերապատվություն, առկա և հասանելի բժշկական տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս նախապես իմանալ երեխայի սեռը և խուսափել անցանկալի իգական սեռի երեխաներից և ծնելիության ցածր մակարդակ: Արդյունքում, նորածինների սեռերի անհամամասնությունը հանրապետության մակարդակով և, հատկապես, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզերում, ուր նորածինների սեռերի հարաբերակցությունը 2011թ. կազմում էր 124 տղա յուրաքանչյուր 100 աղջկա դիմաց, համարվում է աշխարհում արական սեռի նորածինների գերակշռության ամենաբարձր մակարդակներից մեկը:¹
17. Խնդրի երկարակետությունն ու ահագնացումը մեծապես պայմանավորված են վերը նշված երեք գործոնների միաժամանակյա առկայությամբ, ինչը թույլ է տալիս կանխատեսել իրավիճակի բարելավում պատճառներից առնվազն մեկի վերացմամբ: Տեխնոլոգիաների սրընթաց ու անկասելի զարգացումը, մատչելիությունն ու տնտեսական կենսունակությունն փաստացի անհնարին են դարձնում դրանց սահմանափակման ուղղված ջանքերը, իսկ ծնելիության մակարդակի հետագա անկման կանխումն ու այն մինչև պարզ վերարտադրություն ապահովող մակարդակի հասցնելը երկարատև ու խիստ թանկարժեք գործընթաց է պահանջում:
18. Ուստի, պետական քաղաքականությունն առաջին հերթին պիտի կիրառեր այն զինանոցը, որը կարող է ծառայել միաժամանակ թե՛ ծնելիության մակարդակի հետագա նվազման կանխարգելմանը,

¹ Քրիստոֆ 2. Գլյունտո, Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. Ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն, Երևան, 2013թ.: http://www.unfpa.am/sites/default/files/Sex_Imbalance_report_Arm_final-with%20cover-final.pdf:

թե՛ հայ հասարակության մեջ և ընտանիքում աղջիկ երեխայի դերի արժևորման խթանմանը: Նման զինանոցն իր արդյունավետությունն ապացուցել է ժողովրդագրական նույնքան լուրջ մարտահրավերների հաջողությամբ դիմակայած մի շարք երկրներում, այդ թվում՝ Շվեդիայում, Դանիայում, Նորվեգիայում և Ֆինլանդիայում:

19. Ուսումնասիրությունները վկայում են, որ ցածր ծնելիության պարագայում բնակչության և զարգացման խնդիրները լուծելու տարբերակներից է բարեկեցության մակարդակի աճի զուգորդումը աշխատուժում կանանց մասնակցության բարձրացմամբ, միաժամանակ ապահովելով կանանց՝ զբաղվածությունն ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունը: Վերջինիս ապահովելուն ուղղված քաղաքականությունը ենթադրում է երեխաներ ունեցող ընտանիքներին ուղիղ դրամական փոխանցումների, երեխայի խնամքի նպաստների, մանկախնամ հաստատությունների սուբսիդավորման, երեխայի խնամքի արձակուրդի գործիքների համակցված կիրառում:
20. Բացի այդ, հասարակության իրազեկումը՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների և դրա բացասական հետևանքների մասին, սելեկտիվ աբորտի արգելքի օրենսդրական ամրագրումը ու օրենսդրության պահանջների կատարման հանդեպ վերահսկողությունը, վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների վերահսկելի կիրառումը, ինչպես նաև կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովումը, կանանց ու աղջիկների կարգավիճակի աստիճանական բարձրացումն ու հասարակության մեջ նրանց դերի բարձրացումը կհանգեցնեն տղա երեխային հավասար՝ աղջիկ երեխայի արժևորմանը, հետևաբար՝ երեխայի սեռի խտրական ընտրության մակարդակի նվազեցմանը և ծնելիության աճին:

3. Կիրառված մեթոդաբանություն

21. Քաղաքականության մշակման և իրականացման մշտադիտարկումը քաղաքականության մշակման փուլի անբաժանելի բաղադրիչն է: Այն հնարավոր միջամտությունների ազդեցությունը կառավարելու, գործողությունները կատարելագործելու և հաշվետվողականությունն ապահովելու կարևորագույն գործիք է: Քաղաքականության մշտադիտարկումը գործընթաց է, որի միջոցով շահագրգիռ կողմերը հետևում և գնահատում են, թե որքանով է այս կամ այն քաղաքականության մշակումը, հաստատումը, ընդունումը և իրականացումը համապատասխանում հայտարարված նպատակներին, խնդիրներին, արդյունքներին և գործողություններին: Այն, որպես կանոն, ներառում է՝ քաղաքականության մշակման միջավայրի գնահատում, շահագրգիռ կողմերի ներգրավման մակարդակի և որակի գնահատում, քաղաքականության մշակման ընթացքի և օրենսդիր իշխանության կողմից քաղաքականության ամրագրում, ֆինանսավորման և պլանավորման միջոցով քաղաքականության իրականացում, ինչպես նաև քաղաքականության իրականացման արդյունքների գնահատում:

22. *Քաղաքականություն փոփոխելը մտցնելը* բարդ գործընթաց է, որն ընթանում է բազմաթիվ ուժերի և դերակատարների փոխազդեցության ներքո: Հազվադեպ է հնարավոր լինում հասնել առանձին ցանկալի փոփոխության, իսկ կոնկրետ քաղաքականության վրա իրական ազդեցություն ունեցած ջանքերը բնույթով խիստ յուրահատուկ են, ուստի դրանց հաջող կրկնությունը կամ կրկնօրինակումը քիչ հավանական է՝ հաջողակ փորձի կիրառմանը խոչընդոտող բազմաթիվ գործոնների պատճառով: Քաղաքականության իրականացման ընթացքում կամ դրա ավարտից հետո գործընթացի վերաբերյալ տվյալների հավաքագրումն ու օգտագործումը, ընդհանուր առմամբ, կարևոր նշանակություն ունեն հաշվետվողականության համակարգերը բարելավելու, կատարված աշխատանքի

տանքը ներկայացնելու, ինչպես նաև փորձից դասեր քաղելու և հետագա աշխատանքը բարելավելու համար:

23. Քաղաքականության մշտադիտարկման մասին սույն գեկույցով փորձ է արվում ՀՀ կառավարությանը և քաղաքականությունը մշակողներին, քաղաքացիական հասարակությանը, իրավապաշտպաններին և միջազգային զարգացման գործընկերներին քաղաքականության մի շարք գործնական առաջարկներ տրամադրել: Չեկույցը կարող է էական դերակատարում ունենալ Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման խնդիրների շուրջ քաղաքական երկխոսությունը խթանելու գործում:
24. Սույն մշտադիտարկման շրջանակներում իրականացվել է քաղաքականության վերլուծություն, ուսումնասիրվել են համապատասխան ազգային ռազմավարությունների փաստաթղթերը, առանձին ոլորտներում վարվող պետական քաղաքականությունը, ռազմավարական ծրագրերը, գործողությունների ծրագրերը, ինչպես նաև իրավական կարգավորման փաստաթղթերը, և հատկապես՝ Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության վրա դրանց ունեցած ազդեցությունը:
25. Սույն գեկույցի շրջանակներում քաղաքականությունը դիտարկվում է ոչ որպես մեկ առանձին որոշում, այլ ավելի լայն իմաստով՝ որպես փաստաթղթերի և որոշումների շարք, որը լավագույնս նկարագրվում է որպես գործընթացների, գործողությունների կամ միջոցառումների ամբողջություն (Neilson, 2001թ.):
26. Սույն գեկույցը կենտրոնանում է քաղաքականության հնարավոր ազդեցության հինգ հիմնական տարրերի վրա (Jones and Villar, 2008թ., Keck and Sikkink, 1998թ.): Մասնավորապես՝
 - բանավեճի շրջանակում և քաղաքական օրակարգում խնդիրների ներառում. սա ենթադրում է խնդրի հանդեպ **վերաբերմունքի փոփոխություն**, նոր խնդիրների վրա ուշադրության հրավիրում և հիմնական շահագրգիռ կողմերի իրազեկվածության, վերաբերմունքի կամ ընկալումների վրա ազդեցության ապահովում.
 - կառավարության և քաղաքականության այլ դերակատարների կողմից **պաշտոնական դիսկուրսում պարտավորութ**

յունների ստանձնման խրախուսում. կարևորվում է մասնավորապես, առանձին խմբերի ճանաչմանը կամ միջազգային հայտարարագրերի հաստատմանն ուղղված լեզվի և հռետորաբանության վրա ազդեցությունը.

- **ընթացակարգային փոփոխությունների** ապահովում ազգային կամ միջազգային մակարդակով. փոփոխություններ քաղաքական որոշումների կայացման գործընթացում, այդ թվում՝ քաղաքական երկխոսության համար նոր հնարավորությունների ստեղծում.
- **քաղաքականության բովանդակության** վրա ազդեցության ապահովում. թեպետ օրենսդրական փոփոխությունը քաղաքականության փոփոխության հիմնական արդյունքը չէ, այն հանդիսանում է այդ փոփոխության կարևոր քաղադրիչներից մեկը.
- հիմնական դերակատարների **վարքագծի փոփոխության** վրա ազդեցության ապահովում. քաղաքականության իմաստալից և կայուն փոփոխություն կատարելու համար հարկավոր է տարբեր մակարդակներում կատարել վարքագծի և քաղաքականության իրականացման փոփոխություններ:

27. Գոյություն ունեն քաղաքականություն վրա ազդեցություն գործելու զանազան միջոցներ: Դրանց դասակարգման եղանակներից մեկի հիմքում ընկած է հետևյալ մոտեցումների տարբերակումը՝ «*ներքին ազդեցության*» մոտեցումներ, որոնք ենթադրում են սերտ համագործակցություն որոշում կայացնողների հետ, ի տարբերություն «*արտաքին ազդեցության*» մոտեցումների, որոնք նպատակ ունեն փոփոխությունների վրա ազդեցություն ապահովել ճնշումների և դիմակայության միջոցով: Տարբերում են նաև փաստական տվյալների և հետազոտությունների արդյունքների, ինչպես նաև առավելապես արժեքների և շահերի վրա հիմնված մոտեցումներ:

28. «Արտաքին ազդեցությունը» կառավարելու և գնահատելու համար կիրառվող մոտեցումները և գործիքները համեմատաբար նման են միմյանց. այսպիսով, քաղաքականության մշտադիտարկման մասին սույն զեկույցում դրանք ներկայացվում են պարզեցված՝ որպես քաղաքականության վրա ազդեցություն գոր-

ծելու երեք հիմնական մոտեցումներ՝ փաստական տվյալներ և խորհրդատվություն, հանրային արշավներ և խորհրդատվություն և լորբինգ ու բանակցություններ:

29. Սույն զեկույցում կիրառվել են քաղաքականության վրա ազդեցություն գործելու ընթացքում կանոնավոր կերպով կամ հնարավորության դեպքում համապատասխան տվյալներ հավաքելու մի շարք հայտնի գործիքներ: Ստորև ներկայացվում է ազդեցության գործողությունների դասակարգումը:

Ազդեցության տեսակը	Որո՞նք: Ինչպիսի՞ միջոցներով:	Արդյունքներ: Ի՞նչն է ենթակա չափման:	Ինչպե՞ս: Ինչպիսի՞ եղա՝ տակով:	Գործիքներ
Փաստական տվյալներ և խորհրդատվություն	Ազգային և միջազգային քաղաքականության քննարկումներ կամ բանակներ Պաշտոնական (ֆորմալ) և ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ) հանդիպումներ	Արդյունքներ Ընկալում և կիրառում Ազդեցություն	Հետազոտություն և վերլուծություն, «Լավագույն փորձի» փոխանակում Ապացույցների վրա հիմնված փաստարկ Խորհրդատվական աջակցության տրամադրում Նոր քաղաքական մոտեցումների մշակում և փորձարկում	Հետազոտությունների, համատարածքների և ինտերնետային կայքերի գնահատում Տեղեկությունների գրանցումներ, հոլանների վերլուծության նոր ոլորտներ, օգտատերերի, հարցումներ RAPID մեթոդաբանությամբ արդյունքների գնահատում (քաղաքականության որոշակի փոփոխության գործում տվյալ գործողությունների ազդեցության գնահատում), Դրվագային հետազոտություն, Ամենաշահակալի փոփոխություն
Հանրային իրազեկում և շահերի պաշտպանություն	Հանրային և քաղաքական քննարկումներ Հանրային հանդիպումներ, ելույթներ, ներկայացումներ Հետաատեսություն, լրագրեր, ուղիտ և այլ լրատվամիջոցներ	Թիրախային խմբի վերաբերմունքը, վարքագիծը և այլն Լրատվամիջոցների ուշադրությունը Լրատվամիջոցների կողմից այս կամ այն խնդրի ձևակերպումը՝ շրջանակումը (framing) և դրանց ազդեցությունը	Հանրային հաղորդակցում և արշավներ «Հանրային կրթություն» Ուղերձներ Խորհրդատվություն	Հարցումներ, ֆոլյու խմբեր, ուղղակի պատասխաններ Լրատվամիջոցների հրապարակումների տեղեկատվական մատյաններ, լրատվամիջոցների գնահատում Ձևակերպումների շրջանակումների վերլուծություն Լուսաբանում
Լորբինգ և բանակցություններ	Պաշտոնական (ֆորմալ) հանդիպումներ Կիսապաշտոնական (կիսաֆորմալ) և ոչ պաշտոնական (ոչ ֆորմալ) միջոցներ Անդամակցություն հանձնաժողովներին և խորհուրդներին և մասնակցություն դրանց գործունեությանը	Դերակատարներ. Փոխհարաբերություններ. Քաղաքական գործընթաց և հաստատություններ	Անհատական հանդիպումներ և քննարկումներ Փոխհարաբերություններ և փոստիություն Ուղղակի խթանում և դիվանագիտություն	Հանդիպումների արձանագրում. մարդկանց վարքագծի ուսումնասիրություն. Տեղեկատվության հիմնական աղբյուրների հետ հարցազրույցների կազմակերպում. ազդեցության մանրամասն հետազոտում

30. Սույն զեկույցի շրջանակներում ուսումնասիրվել են նաև համապատասխան քաղաքականություն սահմանող և կարգավորիչ փաստաթղթերը: Ընդ որում, մեծ ծավալով օգտագործվել են ԵՄ-ի

Ֆինանսավորմամբ իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում գործող Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության գծով փորձագետների (GIUSSEPPE) կողմից իրականացված և հրապարակված քաղաքականության վերլուծականներն ու քաղաքականության առաջարկները:

31. Սույն զեկույցում ուսումնասիրվել են ավելի վաղ իրականացված քաղաքականության հետազոտությունները, և այն կազմելիս հաշվի է առնվել նաև Արևելյան Ասիայի, Հարավային Կովկասի և Արևելյան Եվրոպայի երկրների փորձը, ինչպես նաև՝ այս ոլորտում տեղական և միջազգային այլ փորձագետների կողմից ավելի վաղ առաջարկված քաղաքականության այլընտրանքները:
32. Քաղաքականության մշտադիտարկման մասին սույն զեկույցը կազմելիս աշխատանքային խումբը սերտորեն համագործակցել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի, կառավարության այլ համապատասխան ճյուղային նախարարությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի, Հանրային խորհրդի, Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի, մարզերում գործող գենդերային հարցերով հանձնաժողովների, քաղաքացիական հասարակության և միջազգային զարգացման գործընկերների հետ:
33. Իրավիճակի ինչպես ազգային, այնպես էլ տեղական համատեքստը և տեղերում տարածվող միտումները լուսաբանելու նպատակով հարցումներ են կատարվել այս ոլորտի փորձագետների և գործնական աշխատանքով զբաղվող մասնագետների, այդ թվում՝ «Տեղական մասնակցության և ոչ խտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցում (Փոխցանց) ընդգրկված մասնագետների շրջանում:
34. Սույն զեկույցը կազմելու համար շատ արժեքավոր նշանակություն են ունեցել իրագրվածության բարձրացման ընթացիկ արշավի արդյունքների առնչությամբ Ծրագրի գործընկերների՝ «Սելվ դը Զիլդրեն» կազմակերպության (ՄԴԶ), «Արմավիրի զարգացման

կենտրոն» ՅԿ-ի (ԱՉԿ) և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՅԿ-ի (ՄԿՅԽ) տրամադրած նյութերը:

35. Բացի այդ, իրավիճակի տեղական համատեքստը և տեղերում տարածվող միտումները լուսաբանելու համար՝ հարցումներ են իրականացվել, մասնավորապես, Փոխցանցի անդամների շրջանում:

3.1. Հիմնական մարտահրավերները և մեթոդաբանության մոտեցումները

36. Քաղաքականության վրա ազդող գործողությունների և դրանց արդյունքների ու քաղաքականության որևէ փոփոխության (կամ լճացման վիճակի) **միջև կապի** առկայության որոշումը կարող է շատ բարդ լինել: Քաղաքականության փոփոխությունը խիստ բարդ գործընթաց է, որը «զծային» կամ «ռացիոնալ» ճանապարհով չի զարգանում, այլ ձևավորվում է զանազան ուժերի և դերակատարների փոխազդեցությամբ պայմանավորված քաղաքական գործընթացների ազդեցությամբ: Նման պայմաններում գրեթե անհնար է վստահորեն կանխատեսել, թե տվյալ գործողություններն ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ քաղաքականության վրա, և անգամ դրանք ձեռնարկելուց հետո խիստ դժվար է հստակ որոշել դրանց ողջ ազդեցությունը: Խոսքը պատճառահետևանքային կապի հաստատման դժվարության մասին է, որը հայտնի է որպես գնահատման ոլորտում երկար պատմություն ունեցող «վերագրման խնդիր» (անգլ.՝ «attribution problem») (Iverson, 2003թ.): Օրինակ՝ ազդեցության գնահատման փորձարարական և կիսափորձարարական մեթոդաբանությունները, որոնք կարող են կիրառվել վերագրման խնդրի վերլուծության համար այլ համատեքստերում, քաղաքականության ազդեցության պարազայում հարմար չեն, քանի որ այստեղ բարդ է գտնել հավանական հակադրելի ենթադրություն: Ոմանք պնդում են, որ լրացուցիչ խնդիրներ են առաջանում քաղաքականության վրա ազդելու նպատակով ձեռնարկվող գործողությունների (օրինակ՝ հետազոտության տարածման) համար պահանջվող ներդրումների և վերջնական արդյունքների չափման հետ կապված (Ekboir, 2003թ.):

37. Երկրորդ, ավելի ավանդական մշտադիտարկման մոտեցումների համար լրացուցիչ խնդիրներ են առաջանում **քաղաքականության վրա ազդելու նպատակով ձեռնարկված գործողությունների բնույթի պատճառով**: Նախանշված որոշակի փոփոխություններ արձանագրելու, այսինքն «անմիջապես լիակատար հաջողության» հասնելու դեպքերը հազվադեպ են, ընդ որում՝ փոփոխությունների կատարման ընթացքում որոշ նախանշված նպատակներ երբեմն փոփոխվում են կամ առհասարակ դուրս մղվում: Ստացված արդյունքների կարևորության գնահատումը և կազմակերպության կամ որևէ քարոզարշավի ավելի ծավալուն նպատակներին դրանց համապատասխանության կամ ստեղծված իրավիճակին դրանց հարմարեցման որոշումը որոշ չափով սուբյեկտիվ է: Այլ կերպ ասած՝ քաղաքականության համատեքստը մեծ հավանականությամբ կարող է փոխվել առանց որևէ արտաքին միջամտության, և այդ կամ այլ արտաքին գործոնների առկայության պարագայում կարող է առաջանալ քաղաքականության վրա ազդեցություն գործելու համար նախանշված նպատակները փոփոխելու անհրաժեշտություն: Դա նշանակում է, որ քաղաքականության փոփոխմանն ուղղված գործունեության սկզբում նախանշված նպատակները չեն կարող ծառայել որպես դրա առաջընթացի գնահատման լավագույն ցուցանիշ: Քաղաքականության փոփոխության գործընթացը, որպես կանոն, տևական է, և այդ երկար ժամանակահատվածում ազդեցություն գնահատելը կարող է չհամապատասխանել աջակցող կազմակերպությունների ծրագրերի իրականացման և գնահատման սովորական ռիթմերին: Բացի այդ, քաղաքականության վրա ազդեցության և շահերի պաշտպանության շատ գործողություններ առավել արդյունավետ են այն դեպքերում, երբ դրանք իրականացվում են միավորումներով, կոալիցիաներով և ցանցերով, ինչը դժվարացնում է տվյալ փոփոխության կատարման գործում այս կամ այն առանձին կազմակերպության ունեցած ներդրումի գնահատումը (անգամ ներդրման կամ վերագրման մասին որոշակի կարծիք կազմելուց հետո):

38. Երրորդ, հանդիպում են նաև լրացուցիչ **գործնական խնդիրներ**, որոնք խոչընդոտում են քաղաքականության վրա ազդող գործողությունների վերաբերյալ **գիտելիքների մշակմանը և օգտագործմանը**: Թեև ՄՉՄԿ-ն ինստիտուցիոնալ մակարդակով մշտադիտարկման կարողությունների Էական խոչընդոտներ չունի, մշտադիտարկում իրականացնող խումբը չի ունեցել մանրակրկիտ մշտադիտարկում իրականացնելու համար բավարար

ժամանակ և միջոցներ, ինչը նույնպես կարող է հանգեցնել ամենասկզբից խնդիրների և նպատակների ոչ հստակ սահմանմանը կամ ձևակերպմանը: Ոլորտային քաղաքականության վրա ազդելու գործունեությունը ներառում է քաղաքական և երբեմն խիստ հակասական գործընթացներ, ինչը բարդացնում է տարբեր դերակատարների կարծիքները հարցնելու և դրանք մեկնաբանելու առավել արդյունավետ ձևը գտնելու հնարավորությունը: Քաղաքականության վրա ազդելու նպատակով տարվող աշխատանքը շատ դեպքերում եզակի է իր բնույթով, հազվադեպ է կրկնվում կամ կրկնօրինակվում, և ինչպես արդեն նշվել է, դժբախտաբար գոյություն ունեն «լավագույն փորձի» փոխանակմանը խոչընդոտող գործոններ: Բացի այդ, քաղաքականություն մշակողներին, հավանաբար, չի ուրախացնի այն լուրը, որ իրենց կայացրած որոշումները կարող են վերագրվել որևէ այլ դերակատարի ազդեցությանը:

39. *Փոփոխության տեսությունը* հանդիսանում է քաղաքականության ազդեցության մշտադիտարկման կարևոր գործիք ոչ միայն քաղաքականության վրա ազդեցության և որոշումների կայացման գործընթացը բարելավելու, այլև հաշվետվողականության և ծրագրում չներգրավված շահագրգիռ կողմերին հաշվետվություններ ներկայացնելու առումով: Քաղաքականության մշտադիտարկման վերոնշյալ խնդիրները լուծելու համար քաղաքականության մշտադիտարկման մասին սույն գեկույցը կազմելիս կիրառվել է փոփոխության տեսությունը: Գոյություն ունի փոփոխության տեսության երեք հիմնական տեսակ.
40. *Պատճառահետևանքային շղթա.* փոփոխության տեսության, թերևս, առավել հայտնի տեսակն է, որով ներկայացվում է տարբերի հաջորդականությունը կամ «շղթան» և դրանց միջև առկա տրամաբանական կամ պատճառահետևանքային կապերը: Այն սովորաբար ներառում է պահանջվող ներդրումները, գործողությունները, արդյունքները, հետևանքները և ազդեցությունը, ընդ որում՝ որոշակի ենթադրություններից կախված՝ յուրաքանչյուր տարր հանգեցնում է հաջորդին կամ դրա պատճառ հանդիսանում: Փոփոխության տեսության այս տեսակի թերությունն այն է, որ պատճառահետևանքային կապերի վերաբերյալ տեսական բովանդակությունը և վարկածները կարող են ակնհայտ չլինել:

41. *Ազդեցության հարթություններ.* դիտարկում է փոփոխության տարբեր հարթությունները: Այս տեսակը ներառում է վերջնական արդյունքների մի շարք ոլորտներ, որոնցից յուրաքանչյուրը համարվում է կարևոր՝ քաղաքականության վրա ազդեցություն գործելու առումով: Մրանք տարբեր փոփոխություններ են, որոնք, միասին վերցրած, նպաստում են քաղաքականության փոփոխության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Այդ հարթությունները սահմանում են մշտադիտարկման ենթակա ոլորտները:
42. *Դերակատարի վրա կենտրոնացած տեսություններ.* որոշ համակարգերի կիզակետում է տարբեր դերակատարների վարքագծի փոփոխությունը: Համարվում է, որ դերակատարները հանդիսանում են փոփոխության հիմնական շարժիչ ուժը, իսկ քաղաքականության մշակումը մեծապես կախված է քաղաքականության դերակատարներից և ցանցերից, նրանց վարքագծից, փոխհարաբերություններից, հեռանկարներից և քաղաքական շահերից: Դերակատարների վրա կենտրոնացած փոփոխության տեսությունը հնարավորություն է տալիս մանրամասն մշտադիտարկման կիզակետում պահել այդ դերակատարների գործողությունները, այն է՝ վարքագծի փոփոխությունները:
43. Գոյություն ունեն փոփոխության տեսության զանազան գաղափարները միավորելու տարբեր եղանակներ: «Պատճառահետևանքային շղթայի» պարզ մոդելը կարող է լինել չափից ավելի գծային կամ պարզունակ քաղաքականության ազդեցությունը հասկանալու համար և կարող է այնպես սահմանափակել մշտադիտարկման շրջանակը, որ այն չարտացոլի տվյալ համատեքստի զարգացումները:
44. Բացի այդ, պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի նպատակով իրականացվող միջոցառումների գնահատման ժամանակ ամենատարբեր համատեքստերի հետ առնչությունն անխուսափելի է: Այսպիսով, մշտադիտարկման առարկա է այն խնդիրը, թե ինչպես կարելի է քաղաքականություն իրականացնել պատճառահետևանքային տարբեր մեխանիզմների միջոցով, որոնք տարբեր հնարավոր համատեքստերի հետ փոխազդեցությամբ կհանգեցնեն ցանկալի արդյունքի: Օրինակ, համապատասխան գրականության վերլուծությունից հետևում է, որ քաղաքականության վրա հետազոտության ազդեցությունը կարող է դրսևորվել զանազան ձևերով՝ կախված նրանից, թե արդյո՞ք կառավարությունը

հետաքրքրված է տվյալ հարցով, կամ ունի արձագանքելու համար անհրաժեշտ կարողությունները (Carden, 2009թ.): Շեշտը պետք է դրվի ոչ թե խիստ բարդ համակարգ ստեղծելու, այլ իրատեսական և պարզ մոդել մշակելու վրա, որով հստակ կսահմանվեն փոփոխության վերաբերյալ մշտադիտարկողների ենթադրությունները և մտքերը:

45. Քաղաքականության մշտադիտարկման մասին զեկույցը սկսվում է մի նկարով, որտեղ պատկերված է, թե ինչն է փոփոխությունը վերածում «թիրախի», այն է՝ պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման: Փոփոխության տեսությունն իրատեսական պատկերացում է տալիս այն մասին, թե որ ուժերն են ազդեցություն գործում ցանկալի թիրախային խմբի կամ արդյունքի վրա: Դա թույլ է տալիս քաղաքականության ազդեցության մշտադիտարկման շրջանակներում ընդգրկել հասարակագիտության տեսությունը, և, ինչը նույնպես շատ կարևոր է, իրատեսական ակնկալիքներ ձևավորել արդյունքների և այս կամ այն քաղաքականության հնարավոր ազդեցության աստիճանի մասին:
46. Քաղաքականության մշտադիտարկման մասին սույն զեկույցը կազմելիս հաշվի են առնվել Ստաչոլիակի առաջարկած քաղաքականության փոփոխության հետևյալ տեսությունները՝ համապատասխան համադրությամբ (2007թ.).
 - «Մեծ թռիչքներ» կամ Ընդհատվող հավասարակշռության տեսություն. սեյսմիկ էվոյուցիոն տեղաշարժերի նմանությամբ՝ քաղաքականության և ինստիտուտների զգալի փոփոխությունները կարող են կատարվել ճիշտ պայմանների առկայության պարագայում.
 - «Կռալիցիա» տեսություն կամ Շահերի պաշտպանության կռալիցիայի համակարգ, ըստ որի՝ քաղաքականության փոփոխությունը կատարվում է նույն քաղաքական համոզմունքները կիսող մի շարք անհատների համաձայնեցված գործունեության միջոցով.
 - «Քաղաքականության հնարավորություններ» (անգլ.՝ «Policy Windows») կամ Օրակարգի կազմման տեսություն, ըստ որի՝ քաղաքականությունը կարելի է փոփոխել այն հարմար պահին, երբ դրա ջատագովները հաջողությամբ կապում են

բաղաբականության գործընթացի երկու կամ ավելի բաղադրիչները, այն է՝ խնդրի սահմանումը, խնդրի բաղաբական լուծումը կամ խնդրի շուրջ առկա բաղաբական մթնոլորտը:

- «Ուղերձներ և ձևակերպում» կամ «Յեռանկարների տեսություն», ըստ որի՝ անհատների բաղաբական նախապատվությունները կամ դրանք ընդունելու պատրաստակամությունը տարբերվում են կախված՝ տարբերակների ձևակերպումից կամ ներկայացումից:
- «Ուժային բաղաբականություն» կամ «Իշխող վերնախավերի» տեսություն, ըստ որի՝ բաղաբականության փոփոխությունը կատարվում է որոշումների կայացման կամ որոշումների կայացման գործընթացի վրա ազդեցություն գործելու լիազորություն ունեցող անձանց հետ համագործակցությամբ, և
- «Ժողովրդական զանգվածների» կամ «Համայնբային կազմակերպման տեսություն», ըստ որի՝ բաղաբականության փոփոխությունը կատարվում է համայնքի անդամների հավաբական գործողության միջոցով, ովքեր փորձում են փոխել իրենց կյանքի վրա ազդեցություն գործող խնդիրները:

47. Սույն զեկույցում դիտարկվել են նաև այն ուղիները, որոնցով բաղաբականությունը նպատակ ունի ազդել թիրախի վրա: Ուստի, պատճառահետևանքային շղթան կամ «կապող ուղին» կարելի է կապել թիրախային խմբի կամ արդյունքի վրա ազդող գործոնների մոդելին՝ բաղաբականության ցանկալի ազդեցությունը սահմանելու համար: Այն կարող է վերաբերել բաղաբականության արդյունքներին, ընդհուպ մինչև՝ միջանկյալ արդյունքների շղթան և ավելի ծավալուն և երկարաժամկետ արդյունքները: Որպես այլընտրանք, երբ տվյալ բաղաբականությունը դիտարկվում է արդեն հիմնվելով փաստացի արդյունքների և ոչ թե կանխատեսումների վրա, գործընթացի ժամանակ կարելի է փորձել գտնել վերջնական որոշումներին կամ արդյունքներին հանգեցնող իրադարձությունների հիմնական շղթաները: Հավանական է, որ հաջողության համար անհրաժեշտ որոշակի արդյունքները որևէ մեկ բաղաբականության կամ ծրագրի անմիջական վերահսկողությունից դուրս են:

48. Թեև ներդրվող միջոցների և ռեսուրսների համար պատասխանատու են կառավարությունը և այլ հիմնական շահագրգիռ կողմերը,

գործողություններում և արդյունքներին ուղղված աշխատանքում շատ դեպքերում կարող են ներգրավված լինել նաև տեղական դերակատարները, և քաղաքականության վրա ազդող ցանկացած գործողություն, ամենայն հավանականությամբ, կլինի արդյունքների և ազդեցության վրա ազդող բազում գործոններից միայն մեկը (Smutylo, 2001թ.): Ցանկալի է նաև, որպեսզի պատճառահետևանքային շղթայի ձևավորման ընթացքում փոփոխությունների նկատմամբ քաղաքականությունների շրջանակներում իրականացվող վերահսկողությունն աստիճանաբար նվազեցվի, քանի որ փոփոխությանը տեր է պետք ոչ թե արտաքին, այլ տեղական մակարդակով: Այն պետք է լինի կայուն, հատկապես եթե այն վերաբերում է քաղաքականությանը (politics) և ոլորտային քաղաքականությանը (policy):

49. Ազդեցությունն ուսումնասիրելու յուրաքանչյուր մոտեցման համար սույն Ձեկույցով նախատեսված են.

- ընդգրկված գործողությունների բնորոշ տեսակները, և
- փոփոխության բնորոշ տեսությունները՝ գնահատման ենթակա հարակից միջանկյալ արդյունքներով և այդ արդյունքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու գործիքների և մեթոդների նկարագիրը:

3.2. Փաստական տվյալներ և խորհրդատվություն

50. **Տիպական գործողություններ.** որոշ իրավիճակներում քաղաքականության վրա ազդող գործողությունները ղեկավարվում են փաստական տվյալներով և վերլուծությամբ, փաստական տվյալների վրա հիմնված քաղաքականության մշակման սկզբունքներով և գիտելիքների վրա հիմնված միջոցներով: Նման գործողությունների ակնառու օրինակ են ավելի վաղ՝ 2010-2011թթ. Հայաստանում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) միջոցառումները: ՄԱԲՀ-ն ստանձնեց հետազոտություն կատարելու գործում ՀՀ կառավարությանը, քաղաքացիական հասարակությանը և զարգացման համայնքին աջակցելու և խորհրդատվություն տրամադրելու գործը: Քաղաքականության վրա ազդելու աշխա-

տանքը կարող էր իրականացվել հետազոտությունը պատվիրելու կամ կատարելու, հետազոտության արդյունքները տեղեկատվական քաղաքականության միջոցով տարածելու (օրինակ՝ ՄԱԲՀ և ՄՁՄԿ 2011 թվականից սկսած), համառոտագրեր հրապարակելու և սեմինարներ կազմակերպելու (օրինակ՝ ՄՁՄԿ 2015 թվականից սկսած), անհատական հանդիպումներին հետազոտության արդյունքները որոշումներ կայացնողներին ներկայացնելու և աշխատանքի ծրագրման և կատարման գործում նրանց ներգրավելու (օրինակ՝ ՄԱԲՀ եւ ՄՁՄԿ) միջոցով: Ազդեցության գործողությունների այս տեսակի ամուսնով՝ քաղաքականության մշտադիտարկման մասին սույն զեկույցը կազմելիս օգտվել են գիտության և հետազոտության ոչ տեսական ազդեցության վերաբերյալ բավականին ծավալուն գրականությունից և հետազոտության տարածման մշտադիտարկման տվյալներից:

51. **Փոփոխության տեսություն, արդյունքներ և գործիքներ.** քաղաքականության վրա հետազոտությունների և փաստական տվյալների ազդեցության բացատրության կարևոր կողմերից է «պատճառահետևանքային շղթա» փոփոխության տեսությունը: Այս ամուսնով՝ հետազոտականաշխատանքի շնորհիվ ստացվում են արդյունքներ (շոշափելի արդյունք և ծառայություններ, օրինակ՝ համառոտագրեր, հարցազրույցներ, միջոցառումներ), որոնք նպաստում են տեղեկատվության «ընկալմանը», հետազոտությանն ուղղակիորեն արձագանքմանը (օրինակ՝ դրանից օգտվելու կամ այն մեջբերելու միջոցով), իսկ հետագայում ազդում են հետևանքների կամ ընդհանրական ազդեցության վրա, այլ կերպ ասած՝ փոփոխություններ վարքագծում և մարդկանց կյանքում:
52. «Պատճառահետևանքային շղթայի» տեսությանը համապատասխան կազմված սույն զեկույցում կիրառվել են արդյունքները, տեղեկատվության ընկալումը և օգտագործումը գնահատելու տարբեր մեթոդներ: Արդյունքների գնահատումը ներառում է տվյալ քաղաքականության, ծրագրի կամ հաստատության շոշափելի արդյունքների ուսումնասիրությունը, ինչը հնարավոր կդարձնի պատկերացում կազմել դրանց որակի, արժանահավատության, համապատասխանության, հասանելիության և ազդեցիկ փաստական տվյալների հետ կապված այլ գործոնների մասին:
- *Արդյունքների գնահատումը* կարող է ներառել գիտական հոդվածների, հետազոտության զեկույցների, համառոտագրերի

կամ ինտերնետային կայքերի ուսումնասիրություն: Դրանց գնահատման համար առկա են տարբեր չափորոշիչներ (Hovland, 2007թ.): Մշտադիտարկող խումբը հարցումներ է իրականացրել նաև «թիրախային խմբի» մաս կազմող կամ այն ներկայացնող մարդկանց շրջանում:

- *Տեղեկատվության ընկալման և դրանից օգտվելու գնահատման* շրջանակներում ուսումնասիրվում է, թե որքանով են այլ մարդիկ ընդունում և օգտվում հետազոտության արդյունքներից կամ խորհուրդներից, օրինակ՝ որքան են մեջբերում կամ նշում դրանք կառավարության քաղաքականությունը սահմանող փաստաթղթում կամ որևէ լրագրում: Այս առումով սույն զեկույցում օգտագործվել են Ծրագրի շրջանակներում իրականացված «Լրատվամիջոցների մշտադիտարկման հետազոտության» միջանկյալ արդյունքները: Թիրախային խմբերի կողմից ստացված արդյունքների օգտագործման և գնահատման ծավալը և միջոցները պարզելու համար կարելի է օգտվել նաև համապատասխան փորձագետների կամ ֆոկուս խմբերի շրջանում իրականացված հարցումների արդյունքներից:

53. Թեև այս գործիքների միջոցով կարելի է ստանալ փաստական տվյալների և խորհրդատվության ազդեցության վերաբերյալ օգտակար տեղեկություններ, դրանք միշտ չէ, որ արժանահավատ տեղեկություններ են պարունակում: Առաջին, արդյունքների վերլուծությունը միշտ չէ, որ ամենաօգտակար քայլն է մշտադիտարկման գործընթացում, քանի որ փաստական տվյալների որակը և ներկայացումը կարող է լինել միայն մեկ փոքր գործոն ազդեցությունը որոշելու գործում: Երկրորդ, մեջբերումների և հղումների ցուցանիշներով առաջնորդվելիս հանդիպում է երկու խնդրի: Մի կողմից, հետազոտություններից հազվադեպ են օգտվում ուղղակիորեն, սակայն շատ դեպքերում դրանք քաղաքականություն մշակողների վրա ազդեցություն են գործում աստիճանաբար և առանց որոշակի ձևի՝ «լուսավորության» միջոցով՝ նրանց մոտ առաջ բերելով նոր ընկալումներ և գաղափարներ: Մյուս կողմից, այս կամ այն հետազոտության մեջբերումը կարող է ունենալ մարտավարական նշանակություն՝ արդեն իսկ ընդունված որևէ որոշում արդարացնելու համար, որի վրա տվյալ հետազոտությունը որևէ փաստացի ազդեցություն չի գործել:

54. Այդ պատճառով էլ մշտադիտարկում իրականացնող խումբը կատարել է ավելի խորքային ուսումնասիրություններ՝ օգտվելով քաղաքականության մշակման գործընթացում գիտելիքների կիրառման վրա ազդեցություն գործող քաղաքական բարդ փոխհարաբերությունները հասկանալու համար ավելի համապատասխան հայեցակարգային շրջանակից: Այդ ուսումնասիրությունների ընթացքում իրականացվել են հարցազուրյցներ և մասնակցային վարժություններ շահագրգիռ կողմերի հետ՝ առաջնորդվելով և՛ հանրամատչելի, և՛ հիմնականում միայն ակադեմիական, փորձագիտական և կառավարության աշխատակիցների շրջանում հայտնի գրականությամբ և բավականին բարձր մակարդակով վերլուծելով այս «չմշակված տվյալները»:

– *«RAPID» արդյունքների գնահատման* գործիք. գործունեության վերջնական արդյունքների վերլուծության գործիքի և քաղաքականության վրա հետազոտության գործած ազդեցությունը հասկանալու հայեցակարգային շրջանակի վրա հիմնված այս գործիքի միջոցով կարելի է գնահատել տվյալ քաղաքականության մեջ կամ քաղաքականության միջավայրի համար տվյալ ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության և այլ գործողությունների ունեցած ներդրումը: Դա կատարվում է հետևյալ կերպ՝ համատեքստի, ծրագրի, հիմնական դերակատարների և նրանց վարքագծի նկարագրություն, ժամանակի ընթացքում դրանց փոփոխություն և հիմնական վարքագծային փոփոխությունների վրա ծրագրի գործած ազդեցությունը: Այս հարցերը պարզելու համար հարկավոր է աշխատանքային ժողով անցկացնել խմբի անդամների և ցանկալի է նաև՝ ծրագրի գործընկերների հետ, ինչպես նաև իրականացնել վերլուծություն և կազմել մանրամասն նկարագիր:

– *Դրվագային հետապոտություններ.* Այս հետազոտությունները ենթադրում են քաղաքականության փոփոխության ընթացքի ուսումնասիրություն՝ հետադարձ հայացք նետելով մինչ դրա սկիզբը, ինչպես նաև փորձելով հասկանալ այդ փոփոխության կատարման մեջ ներգրավված զանազան ուժերի դերը, իրադարձությունները, փաստաթղթերը և որոշումները: Այդ նպատակով անհրաժեշտ է կազմել տվյալ քաղաքականության փոփոխությանը նպաստած գործոնների նկարագիր, նախքան

այդ նկարագրում հետազոտության հարաբերական դերը գնահատելը:

- *Առավել նշանակալի փոփոխություն* (MSC). Ենթադրում է մի շարք շահագրգիռ կողմերից նշանակալի փոփոխության մասին պատմությունների հավաքագրում և առավել նշանակալի պատմությունների համակարգված ընտրություն՝ հատուկ նշանակված շահագրգիռ կողմերից կամ ծրագրային աշխատակազմից կազմված ընտրական հանձնախմբի կողմից: Սա թույլ է տալիս իրականացնել կատարված աշխատանքի շարունակական և անուղղակի մշտադիտարկում: Առավել նշանակալի փոփոխության մեթոդն օգնում է տվյալ քաղաքականությունը կամ ծրագիրն իրականացնող թիմին կամ հաստատությանը հասկանալ, թե արդյո՞ք նրանց հաջողվել է իրագործել իրենց նպատակները, և եթե այո՞, ապա ինչպես է դա նրանց հաջողվել:

3.3. Հանրային իրազեկում և շահերի պաշտպանություն

55. **Տիպական գործողություններ.** Քաղաքականության վրա ազդեցության որոշ մոտեցումներ ենթադրում են հանրային ուղերձների և արշավների միջոցով մեծ թվով անհատների ներգրավում կամ որևէ հարցի քաղաքական քննարկում: Այդ մոտեցումներով կարող է փորձ արվել հանրային աջակցությունն ապահովել նոր քաղաքականության համար՝ հանրային հանդիպումների և ելույթների միջոցով տարածել առաջարկվող բարեփոխման հիմնավորումը կամ հեռուստատեսության և ռադիոյի միջոցով բարձրացնել այս կամ այն հարցի շուրջ հանրային իրազեկվածության մակարդակը: Այս գործողություններով փորձ է արվում քաղաքականության վրա ազդել «արտաքին ազդեցության», այլ ոչ թե՛ որոշումներ կայացնողների հետ փակ հանդիպումների միջոցով: Տվյալ հաստատությունը կարող է նման աշխատանք տանել լրատվամիջոցներով ուղերձներ տարածելու, հանրային միջոցառումներ, ելույթներ և հանդիպումներ կազմակերպելու և ազգային և տեղական կուլիցիաներ ստեղծելու միջոցով: Շատ դեպքերում նման մոտեցում-

ներով միաժամանակ միավորվում են մի շարք նախաձեռնություններ:

56. Տասնամյակներ շարունակ քաղաքականության վրա ազդեցության այս մոտեցումը որդեգրել են քաղաքացիական հասարակության խմբերը աշխարհի տարբեր անկյուններում: Այն կիրառվել է նաև Հայաստանում՝ անցած տարիներին Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարելու համար: Մեծ փորձ է կուտակվել նաև անհատական վարքագծի փոփոխության և «հանրային կրթության» խթանմանն ուղղված հանրային տեղեկատվական արշավների ոլորտում: Նման տեղեկատվական արշավներ կազմակերպելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքելու բազում ուղիներ կան, սակայն բավականին դժվար է հստակ որոշել այս կամ այն ծրագրի ազդեցության հստակ ծավալը: Որևէ հարցի շուրջ հանրային երկխոսության նման բազմակողմանի գործոնի և «հանրային վերաբերմունք և կարծիք» արդյունքի նման այլ արդյունքների դեպքում, որոնք պայմանավորված են բազմաթիվ գործոններով, չափազանց բարդ է առանձնացնել որևէ առանձին արշավի ազդեցությունը, և այդ նպատակով կիրառվող մանրակրկիտ և ընդգրկուն հետազոտական միջոցները խիստ սակավաթիվ են:
57. **Փոփոխության տեսություն, արդյունքներ և գործիքներ.** ընդհանուր առմամբ, հանրային տեղեկատվական արշավների նպատակն է ազդեցություն գործել թիրախ խմբին անմիջապես ուղերձներ հղելու կամ դրանք լրատվամիջոցներով հաղորդելու միջոցով:
58. Վարքագծի փոփոխության և քաղաքական խնդիրներում հանրային շահի մի շարք մոդելներից ելնելով՝ հարկ է նշել մի շարք արդյունքներ՝ իրազեկվածություն որևէ խնդրի կամ արշավի վերաբերյալ, որևէ խնդրի, մոտեցումների, նորմերի և վարքագծի չափանիշների առանձնահատկության կամ կարևորության ընկալում և փաստացի վարքագիծ: Այս տեղեկությունները կարելի է պարզել մի շարք միջոցներով.
- *Հարցումների* միջոցով կարելի է գնահատել որոշակի խմբերի վերաբերմունքը և եզրակացություններ անել ժամանակի ընթացքում դրա փոփոխությունների և դրա վրա քաղաքականության ազդեցության մասին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղեկատվական արշավները թիրախավորում են

մեծ թվով մարդկանց՝ որոշ դեպքերում կարելի է կիրառել կիսափորձարարական մեթոդներ: Նման դեպքերից են օրինակ, երբ միևնույն մարդիկ հայտնվել են թիրախային խմբում մի քանի անգամ, երբ տեղեկատվական արշավն իրականացվում է փուլերով կամ կարելի է հստակ որոշել թիրախային բնակչության հատվածները (օրինակ՝ հեռուստատեսային հեռարձակման պարագայում՝ հեռուստացույց ունեցող մարդկանց թիվը): Որոշակի ժամանակահատվածում կատարված փոփոխություններն ուսումնասիրելու մեկ այլ միջոց է (թեև վերագրումը որոշելու տեսակետից նվազ օգտակար) ընտրանքային հարցումների իրականացումը, որոնց շրջանակներում կանոնավոր հարցումներ են անցկացվում թիրախային խմբում պատահաբար ընտրված մարդկանց շրջանում: 2011-2017թթ. ընթացքում քաղաքականության փոփոխության գնահատումն ամփոփելու նպատակով ավելի ուշ՝ 2017 թվականին Ծրագրի շրջանակներում կիրականացվի Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածության և պատճառների վերաբերյալ հարցումը: Հարցման ժամանակ նախատեսվում է կիրառել վերը ներկայացված հնարքները՝ ՄԱԲՀ-ի հայաստանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ 2011 թվականին ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ առողջապահության նախարարության, Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի կողմից իրականացվող ելակետային հետազոտության մեթոդաբանությունների հիման վրա: Քաղաքականության ընթացիկ մշտադիտարկման շրջանակներում այս գործիքը չի կիրառվել, հետազոտության արդյունքները կհամադրվեն քաղաքականության ընթացիկ մշտադիտարկման արդյունքների հետ:

- *Ֆոկուս խմբերի քննարկումները* կարևոր գործիք են հանդիսանում որևէ խնդրի, գաղափարի կամ իրադարձության վերաբերյալ թիրախային խմբի կարծիքը և տվյալ թիրախային խմբի շարժիչ ուժը հասկանալու համար: Արդյունավետ անցկացվող քննարկումների արդյունքում կարելի է ստանալ ավելի շատ և մանրամասն տեղեկություններ, քան հարցումների միջոցով, թեպետև ավելի քիչ տեղեկություններ «ծավալի» մասին: Թեև գոյություն ունեն ազդեցությունը կամ վերագրումը որոշելու ավելի պարզ միջոցներ, տվյալ արշավի նկատմամբ վերաբեր-

մունքը կարելի է գնահատել որոշակի ժամանակահատվածի տարբեր փուլերում, կամ կարելի է իմանալ տվյալ արշավի մասին խմբերի հատուկ կարծիքը: Մշտադիտարկումն իրականացնող խումբը տվյալ գործիքը կիրառել է համապատասխան թիրախային խմբերի նկատմամբ:

- *Ուղղակի պատասխանները և հարցվողները* կազմում են թիրախային խմբի վրա ազդեցության գնահատման «մեղմ» մոտեցումը: Մոտեցումներից մեկը ենթադրում է ստանալ թիրախային խմբի կողմից հարցումների թիվը կամ հանրային ժողովների մասնակիցների թիվը: Մյուս մոտեցման շրջանակներում կարելի է հարցազրույցներ կազմակերպել այն անհատների հետ, ովքեր ենթադրաբար կարող են հնարավորինս համապարփակ կերպով գնահատել տվյալ թիրախային խմբին:
- Շատ դեպքերում խիստ կարևոր է *իրականացնել լրատվամիջոցների մշտադիտարկում*: Լրատվամիջոցներով տարածվող լուսաբանումը, ամենայն հավանականությամբ, նպաստում է ուղերձներն ավելի հետևողականորեն և հաճախ հանդիսատեսին հասցնելուն, ինչը կարելի է գնահատել մի շարք միջոցներով: Բացի այդ, լրատվամիջոցների կողմից որոշակի հարցերը ներկայացնելու կամ քննարկելու ձևը նույնպես խիստ կարևոր է, քանի որ դրանով է մեծապես պայմանավորվում տվյալ հարցի նկատմամբ հանրային վերաբերմունքը: Ինչպես արդեն նշվել է, մշտադիտարկում իրականացնող խումբը օգտվել է լրատվամիջոցների մշտադիտարկման միջանկյալ արդյունքներից: Մասնավորապես, խումբն օգտվել է լրատվամիջոցներում տեղեկատվական արշավների կամ խնդիրների լուսաբանման ձևն արձանագրող լրատվամիջոցների գործունեության գրանցումներից: Դրանք ներառում են մեջբերումներ, տեղեկություններ խնդրի վերաբերյալ հղումների ամսաթվի և ժամի մասին՝ համակցված լրացուցիչ տեղեկություններով՝ լրատվամիջոցների վրա գործած ազդեցության մասին ավելի լավ պատկերացում տալու համար:
- Խիստ դժվար է որոշել լրատվամիջոցներով տեղեկատվության ներկայացման և թիրախային խմբի վրա դրա գործած ազդեցության միջև կապի առկայությունը: Այդ նպատակով հարկավոր է պարզել, թե իրենց առօրյա կյանքում կամ աշխատանքում մարդիկ տեղեկատվության ինչ միջոցներից են օգտվում, և ինչ

չով Է որոշվում մարկանց վրա տեղեկատվության ազդեցությո-
ւունք: Պատճառահետևանքային կապերի և գործընթացների
մանրամասն ստուգումը խիստ բարդ Է: Հնարավոր մոտե-
ցումները ներառում են *սպիտակ գրքի տեսքով գնահա-
տումը*, այսինքն՝ քանի անգամ Է թիրախ խումբը լսել տեղե-
կատվական արշավի մասին, քանի անգամ Է այն ենթարկվել
ազդեցության և արդյո՞ք որևէ ուշադրություն Է դարձրել դրան:
Ծրագրի շրջանակներում իրականացվող լրատվամիջոցների
մշտադիտարկման արդյունքում այս հարցերից ոմանք հետա-
զայում կստանան պատասխան: Քաղաքականության մշտա-
դիտարկում իրականացնող խումբն այս միջանկյալ արդյունք-
ները համեմատել Է հարցազրույցների արդյունքների հետ՝
պարզելու, թե արդյո՞ք մարդիկ հիշում են որևէ ուղերձ կամ
արշավ: Այս առումով որպես օգտակար ուղեցույց կարող են
ծառայել լրագրերի ընթերցողների թիվը և հեռուստացույց
կամ ռադիոընդունիչ ունեցող անձանց թվերը: Միևնույն ժա-
մանակ, լրատվամիջոցների մշտադիտարկման արդյունքում
կիրականացվի *խնդիրների, ուղերձների ձևակերպման (fram-
ing) վերլուծություն*, քանի որ մշտադիտարկման ընթացքում
կդիտարկվի հարցերի ներկայացման կամ քննարկման ձևը՝
տվյալ լրատվամիջոցի (ինտերնետային լրատվական հարթակ-
ներ) լուսաբանած հիմնական թեմաները, փոխաբերություն-
ները, փաստարկները և նկարագրություններն ուսումնասի-
րելու միջոցով: Դիտարկման հիմքում ընկած Է ձևակերպման
տեսությունը, ըստ որի՝ հարցերի ձևակերպումը մարդկանց
վրա լրատվամիջոցների գործած ազդեցության հիմնական
բաղադրիչներից Է: Կարելի Է համեմատել տեղեկատվական
արշավի ընթացքում տվյալ խնդրի մեկնաբանությունները և
գործածվող լեզուն, և ժամանակի ընթացքում խնդրի ձևա-
կերպման փոփոխությունը կարող Է մշտադիտարկման հա-
մար կարևոր տեղեկատվություն հանդիսանալ: Ազդեցության
ենթարկվելու և խնդիրների, ուղերձների ձևակերպման վերլու-
ծությունից բացի՝ գոյություն ունեն շատ քիչ միջոցներ, որոնք
կարող են տեղեկատվություն տրամադրել լրատվամիջոցների
կողմից հարցերի լուսաբանման և հանրային վերաբերմունքի
կապի մասին:

3.4. Լոբբինգի մոտեցումներ

59. **Տիպական գործողություններ.** շատ դեպքերում քաղաքականության վրա ազդեցություն գործելու հիմնական միջոցը որոշում կայացնողների, դաշնակիցների և այլ հիմնական դերակատարների հետ ուղղակի փոխհարաբերությունն է: Այն կարող է ներառել բանակցություններին կամ ժողովներին մասնակցությունը, ուղղակի հաղորդակցումը նախարարների հետ կամ գործընկերների և այլ շահագրգիռ անձանց հետ ոչ ֆորմալ բննարկումները: Մեծ աշխատանք է կատարվել Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարելու քաղաքականության վրա ազդելու համար՝ համոզելու, բանակցությունների և լոբբինգի միջոցով: Ավելի ֆորմալ մակարդակներում նույն աշխատանքը տարվել է փաստերի վրա հիմնված երկխոսության միջոցով, մինչդեռ այլ մակարդակներում այդ նպատակով պահանջվել է անցկացնել պակաս ֆորմալ բննարկումներ և բանավեճեր: Սույն զեկույցի հիմքում ընկած են տարբեր անձանց հետ դերակատարների փոխհարաբերությունները և ուղղակի կամ ավելի հաճախ՝ անուղղակի ազդեցության համար կիրառված բյուջետային աջակցությունը և այլ նյութական խրախուսական միջոցները:
60. Քաղաքականության ուղղության ձևավորման գործում վաղուց արդեն ճանաչվել է այս տեսակ գործունեության խիստ կարևոր նշանակությունը: Որոշ հետազոտություններով պարզվել է, որ դեմամդեմ փոխհարաբերությունը քաղաքականության որոշակի գաղափարների կամ հետազոտական արդյունքների կիրառումը դյուրացնող ամենաուժեղ գործոնը է (Innvaer et al., 2002թ.): Այդուհանդերձ, այս փոխհարաբերության մշտադիտարկմանը նվիրված գրականությունը շատ քիչ է: Ընդհանուր ամսամբ, այս ոլորտում հանդիպում են լավագույն փորձի փոխանակմանը խոչընդոտող լուրջ դրդապատճառներ, ինչպես նաև գործոններ, որոնք խոչընդոտում են համապատասխան գիտելիքների և տեղեկությունների արձանագրմանը: Այդուհանդերձ, մասնագետ լոբբիստներից և բանակցողներից կարելի է որդեգրել որոշ ուղեցույցներ, ինչպես նաև այս ոլորտում կատարվող աշխատանքի համակարգված կառավարման և հաճախորդներին հաշվետու լինելու «լավագույն փորձը»: Թեև ընթացիկ քաղաքականության մշտադիտարկումն իրականացվում է ոչ ֆորմալ կերպով, այս աշխատանքը միտված

Է որոշ հիմնական գործոնների վերաբերյալ տեղեկություններ հավաքելուն և դրանց արձագանքելուն:

61. Փոփոխության տեսություն, արդյունքներ և գործիքներ. քաղաքականության վրա ազդեցության գործունեության այս տեսակի փոփոխության տեսության, արդյունքների և գործիքների համար հիմք են հանդիսանում դերակատարները, նրանց փոխհարաբերությունները և աշխատանքային հաստատությունները: Հաջողված լոբբինգի մի դեպքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հստակ և թիրախավորված քաղաքականության նպատակների հետ մեկտեղ անհրաժեշտ են հիմնական ռազմավարական կարողություններ, մասնավորապես այնպիսի, որոնք թույլ կտան բացահայտել բնական դաշնակիցներին, փոխհարաբերություններ և փոխվստահություն հաստատել քաղաքականության դերակատարների հետ և հասկանալ քաղաքականության մշակման գործընթացի և ինստիտուցիոնալ հասանելիության բնույթը (Coen, 2002թ.): Իսկ ըստ Մակ Գրաթի (McGrath)՝ լոբբիստի հիմնական աշխատանքային գործիքներ են՝ հիմնական դերակատարների և որոշումներ կայացնողների, այդ թվում՝ նրանց անձնական պատմության, ակնկալիքների և շահերի մշտադիտարկումը և որոշակի քաղաքականության նպատակների շուրջ կոալիցիաների և միավորումների ստեղծումը, շատ դեպքերում՝ բավական կարճ ժամանակով (McGrath, 2002թ.):
62. Մեկ այլ օրինակ ներկայացնում է Գլեդվելը (Gladwell)՝ պնդելով, որ ազդեցությունը տարածվում է երեք տեսակի մարդկանց միջոցով՝ *միավորողներ*, գործնական կապեր հաստատող մարդիկ են, ովքեր գիտեն ում փոխանցել տեղեկատվությունը, և ովքեր բավականաչափ հարգված են, որպեսզի կարողանան ազդեցություն գործել հիմնական դերակատարների վրա, *գիտակներ*՝ տեղեկատվության գծով մասնագետներ, ովքեր ձեռք են բերում տեղեկատվություն և կրթում ուրիշներին, և *վաճառողներ*՝ հզոր, խարիզմատիկ և համոզիչ անհատներ, ովքեր վայելում են շրջապատի վստահությունը և հավատը, և ում ասածներին ականջ են դնում (Gladwell, 2000թ.):
63. Ուստիև, նման ազդեցությունը կառավարելու գործում առանցքային նշանակություն ունի տարբեր դերակատարների, նրանց շահերի, գաղափարախոսությունների, կարողությունների, քաղաքականության և ծրագրային նպատակներին նրանց համա-

պատասխանության, այլ դերակատարների հետ նրանց փոխհարաբերությունների և այս ամբողջ համատեքստի փոփոխության կանոնավոր ուսումնասիրությունը, ինչը պետք է հիմք հանդիսանա տվյալ անձի՝ ազդեցությունը գնահատելու և հասկանալու համար: Ընդ որում՝ կարևոր է նաև հասկանալ հիմնական ինստիտուտները և միջավայրերը, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացի վրա դրանց ազդեցությունը. երկխոսության և որոշումների կայացման գործընթացի կառուցվածքից և կանոններից կախված՝ տարբեր միջավայրեր կարող են ազդել քաղաքականության արդյունքների վրա: Մակայն հարկ է նշել, որ այս աշխատանքը տարվում է խիստ փոփոխվող համատեքստերում, որոնք առավելապես հիմնված են ոչ ակնհայտ գիտելիքների և փորձի, ինչպես նաև մարդկանց մոտեցումների, հույզերի, դիրքորոշումների և ակնկալիքների մասին արագ և սուբյեկտիվ դատողությունների վրա:

64. Մշտադիտարկման ֆորմալ և ստանդարտ բնույթի մասին ակնկալիքները պետք է պատշաճ կերպով հարմարեցվեն մշտադիտարկող թիմի նպատակներին, իսկ պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի քաղաքականությունների և ծրագրերի համատեքստում պարզապես անհնար է պարզել վերագրման հարցը: Այդուհանդերձ, կարելի է կիրառել որոշակի գործիքներ և մոտեցումներ.
- Ժողովների և բանակցությունների դիտարկումների *արձանագրությունների ուսումնասիրությունը* օգտակար և ոչ ծախսատար գործողություն է: Կարելի է պարզապես ուսումնասիրել ժողովի արձանագրությունը կամ մանրամասն հաշվետվությունը, քննարկումների մասին հաշվետվությունները կամ օգտվել ժողովի դիտորդական ստուգացանկից՝ առանձին խնդիրների քննարկումը, առանձին դերակատարների ներգրավումը կամ վարքագիծն արձանագրելու համար:
 - *Մարդկանց և նրանց միջև փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների ուսումնասիրությունը* նույնպես կարևոր գործիքներից է: Քաղաքականության ցանցերի վերաբերյալ գրականության մեջ նշվում է «քաղաքականության ջատագովների» և «կարծիք ձևավորողների» կարևորության մասին, ովքեր կարող են դյուրացնել որոշ քաղաքականությունների ներընդունումն ու կիրառումը (Greenhalgh et al., 2004թ.): Կարելի է կիրառել ուսումնասիրության պարզ ձևեր՝

արձանագրել, թե ինչ գործողություններ են իրականացվել այս դերակատարների հետ և երբ: Փոխհարաբերությունների որակի և նման մարդկանց հասանելիության ուսումնասիրությունից կարելի է կարևոր տեղեկություններ ստանալ քաղաքականության վրա ազդելու աշխատանքը կառավարելու նպատակով: Այն թույլ է տալիս ցուցանիշներ ստանալ նաև միջամտության արժանահավատության և ազդեցության վերաբերյալ: Մշտադիտարկում իրականացնող խումբը մշակել է հիմնական դերակատարների տվյալների բազա՝ ներառելով ոչ միայն քաղաքականության ջատագովներին: Բազան ներառում է տեղեկություններ նրանց քաղաքական կապիտալի և կարողության¹ վերաբերյալ, ինչպես նաև որոշումների կայացման գործընթացում նրանց կատարած աշխատանքի և դերի, նրանց ակնկալիքների և շահերի, և հնարավորության դեպքում նրանց միջև փոխհարաբերությունների վերաբերյալ:

- *Յարգվողների հետ հարցազրույցների կալմանկերպում.* «տեղեկատվական ցանցի» հիմնումը համարվում է արդյունավետ լոբբինգի Էսկան բաղադրիչը (Lehmann, 2003թ.): Այն արդյունավետ միջոց է քաղաքականության վրա դերակատարների ազդեցությունը հասկանալու համար: Ինստիտուտների և գործընթացների վերաբերյալ գիտելիքներ ունեցող անձանց կամ որոշակի դերակատարների շրջանում հարցազրույցները կարող են վերածվել անգնահատելի ուղեցույցի: Նման դերակատարներից են գենդերային խնդիրների, բնակչության և զարգացման, սոցիալական աջակցության և առողջապահության ոլորտներում մասնագիտական փորձ ունեցող անձինք, որոնք երկար տարիների աշխատանքային փորձ ունեն համապատասխան կառույցներում կամ ի պաշտոնե որոշումների կայացման գործընթացում հստակ դեր ունեն: Գործողության սկզբում մշտադիտարկում իրականացնող խումբը, ՄՁՄԿ-ի ղեկավարության հետ սերտորեն խորհրդակցելով, վերհանել է համապատասխան տեղեկատվություն տրամադրելու հնարավորություն ունեցող անձանց: Տեղեկատվության բավականին քաղաքականացված բնույթի պատճառով աշխատանքներ են տարվել համապատասխան անձանց հետ հարաբերություններ կառուցելու ուղղությամբ:

¹ Անգլ.՝ political intelligence. Կարողություն բացահայտելու իշխանություն, ուժ ունեցող դերակատարներին, վերլուծելու հարաբերություններն իշխանության, որոշումների կայացման տեսանկյունից, տիրապետելու առանցքային տեղեկատվության, անդամագրվելու փոփոխության լծակներ ունեցող դերակատարների ցանցին, ձևակերպելու համապատասխան ուղերձներ:

- *Խորքային վերլուծություն*. գոյություն ունեն մի շարք գործիքներ, որոնց միջոցով կարելի է ավելի շատ տեղեկություններ հավաքել լոբբիստական գործունեության ազդեցության վերաբերյալ: Նպատակահարմարության, շահերի և ազդեցության աղյուսակը (AIIM)¹ ի մի է բերում քաղաքականության թիրախների նկատմամբ տարբեր դերակատարների տեսակետները և փաստական տվյալները (ինչպես նաև ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունները): Սոցիալական ցանցի վերլուծությունը կարող է կիրառվել որպես դերակատարների փոխհարաբերությունները և տեղեկատվության կամ ռեսուրսների փոխանակումը գնահատելու և հասկանալու միջոց: Իշխանության, ուժային հարաբերակցության վերլուծությունը կամ քաղաքական տնտեսության վերլուծությունն ապահովում է որոշումների կայացման կառույցների աշխատանքն ուսումնասիրելու գործիքներ: Այս առումով հետաքրքիր հնարավորություններ կարող են ընձեռել ԵՄ համատեքստում կիրառված երեք խոստումնալից գործիքներ՝ *գործընթացի ուսումնասիրություն*, որի միջոցով փորձ է արվում բացահայտել այն քայլերը, որոնց միջոցով հանդիպումների և այլ միջոցառումների արդյունքում հնարավոր է եղել վերջնական արդյունքներ ապահովել, *վերագրված ազդեցություն*, որի միջոցով քաղաքականության մշակման գործընթացի կարևոր իրադարձությունների դիտորդներից կարծիք են հարցնում որոշակի դերակատարի կամ գործողության ազդեցության վերաբերյալ, և *գերադասելի արդյունքին հասնելը*, որի պարագայում դերակատարների ազդեցությունը որոշվում է քաղաքականության վերջնական արդյունքներում նրանց «ցանկալի» դիրքորոշումների արտացոլման աստիճանով (Duer, 2008թ.):

¹ Alignment, Interests, Influence Matrix

4. Փաստական հիմքեր և գիտական հիմնավորումներ

4.1. Հայաստանում սելեկտիվ աբորտների տարածվածության, պատճառների և ժողովրդագրական տվյալների մասին հետազոտություններ

65. 2011թ. սեպտեմբերին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) Հավասար հնարավորությունների հանձնաժողովը հրապարակել է զեկույց՝ Հայաստանում, Ալբանիայում, Ադրբեջանում և Վրաստանում նախաձեռնյալ փուլում սեռի ընտրության տարածվածության վերաբերյալ: Ըստ զեկույցի տվյալների՝ Հայաստանում, Ալբանիայում և Ադրբեջանում տղաների և աղջիկների հարաբերակցությունը կազմում էր համապատասխանաբար 112/100, իսկ Վրաստանում՝ 111/100, մինչդեռ տղաների և աղջիկների բնական հարաբերակցությունը 105/100 է:
66. Չեկույցի պատրաստման մեթոդաբանության հիմքում գրականության և խնդրի հետ առնչվող տվյալների վերլուծությունն էր, Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող և նորածինների սեռերի համամասնության ամենաբարձր շեղում ունեցող պետությունների (Ալբանիա, Հայաստան, Ադրբեջան և Վրաստան) խորհրդարանական պատվիրակություններին հասցեագրված հարցաշարերի վերլուծությունը, ինչպես նաև 2011թ. հունիսին Հայաստան և Վրաստան կայացած փաստահավաք այցի արդյունքների ուսումնասիրությունը:

67. Չեկոյցը նշում է, որ Հայաստան կատարած փաստահավաք այցի ընթացքում սեռի խտրական ընտրությունը խորհրդարանականների, բժիշկների, հետազոտողների, միջազգային կազմակերպությունների և պաշտոնատար անձանց կողմից ճանաչվել է որպես խնդիր, որը սկիզբ է առել 1990-ականներից և հասել իր գագաթնակետին 2000 թվականին, երբ ծնունդների սեռերի հարաբերակցության գործակիցը 118/100 էր՝ ցույց տալով հայաստանյան հասարակության հստակ նախապատվությունը տղա երեխաների հանդեպ: Չեկոյցը նաև առանձնացնում է գինեկոլոզների և մանկաբարձների էթիկայի հանձնաժողովի բացակայությունը երկրում, որոշ բժիշկների և ռադիոլոզների բացասական վերաբերմունքի դրսևորումները իգական սեռի պտղի ծնվելու մասին տեղեկատվություն հայտնելիս, հղիության արհեստական ընդհատում առաջացնող դեղորայքի ազատ վաճառքը, միայն աղջիկ երեխաներ ունեցող կանանց նկատմամբ սոցիալական և ընտանեկան ճնշումների տարածվածությունը երկրում և հայաստանյան հասարակական կազմակերպությունների պասիվ դերակատարումը սեռի խտրական ընտրության բացասական հետևանքների մասին իրազեկման աշխատանքների մեջ:

68. Չեկոյցի արդյունքների հիման վրա ԵԽԽՎ-ն դատապարտել էր նախաձննդաբերական փուլում պտղի սեռի ընտրության պրակտիկան՝ որպես երևույթ, որը արմատացած է գենդերային անհավասարության մշակույթում և խրախուսում է կանանց նկատմամբ բռնության մթնոլորտը: Այն կոչ է անում ազգային կառավարություններին լրացուցիչ ջանքեր գործադրել գենդերային հավասարության և խտրականության վերացման ուղղությամբ, բժշկական համայնքի հետ մշակել ուղենիշներ՝ կանխելու սեռի խտրական ընտրությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այն անհրաժեշտ է կանխելու սեռով պայմանավորված ժառանգական հիվանդությունների փոխանցումը, ինչպես նաև չտրամադրել պտղի սեռի մասին տեղեկություն, եթե չկա ժառանգական հիվանդությունների փոխանցման վտանգ, և իրականացնել խնդրի պատճառների խորքային հետազոտություններ և լայնամաշտաբ իրազեկման աշխատանքներ՝ երևույթի բացասական հետևանքների մասին՝ համապատասխան միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ:¹

1 Stump, Doris. 2011. Prenatal sex selection. Report to the PACE Committee on Equal Opportunities for Women and Men.

69. Դրան զուգահեռ 2011թ. ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, որն աշխատում է Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնության ուսումնասիրման ուղղությամբ դեռևս 2007թ-ից, ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ), Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի և ՀՀ ԱՎՃ համագործակցությամբ իրականացրել է «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» հետազոտությունը, որի նպատակն էր պարզել Հայաստանում երեխայի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների տարածվածությունը, հիմնական պատճառները և հասարակական ընկալումը:¹
70. Հետազոտությունը նշում է, որ, ՀՀ քաղաքացիական կացության գրանցումներով իրականացվող պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, 1993 թվականից արձանագրվել են նորածինների սեռերի կենսաբանորեն ընդունված նորմալ հարաբերակցությունից զգալիորեն բարձր ցուցանիշներ՝ 110-120 տղա՝ 100 աղջկա դիմաց: ՄԱԲՀ ուսումնասիրության շրջանակներում ևս, ինչպես և ՀՀ ԱՎՃ տվյալներով, տղա-աղջիկ հարաբերակցության առանձնահատուկ անհամամասնություն էր արձանագրվել երրորդ և հատկապես չորրորդ ծնունդների դեպքում, ինչը թույլ էր տալիս ենթադրել սեռի պլանավորման և ցանկալի սեռի նպատակով կատարվող սելեկտիվ աբորտների մասին: ՄԱԲՀ զեկույցում սեռերի անհամամասնության պատճառների բացահայտումը կատարվել էր՝ ուսումնասիրելով տղա կամ աղջիկ երեխայի գերապատվության պատճառների շրջանակը, հղիությունների պատմություններն ու դրանց արդյունքները, երեխայի սեռը որոշելու համար նախաձննդյան փուլում անցկացվող ստուգումները և դրանց արդյունքները:
71. Համաձայն հետազոտության արդյունքների՝ տղա երեխաներին նախապատվություն տվող ընտանիքները մոտ վեց անգամ ավելի են, քան աղջիկներին նախապատվություն տվող ընտանիքները, և եթե առաջին և երկրորդ երեխաների տղա-աղջիկ հարաբերակ-

¹ ՀՀ առողջապահության նախարարություն, Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ. «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պատճառներն ու տարածվածությունը Հայաստանում» զեկույց, «Սեռական և վերարտադրողական առողջության ծառայությունների հզորացում» ծրագիր, 2011թ.: http://www.unfpa.am/sites/default/files/Sex-selective_abortions_report_Arm.pdf:

ցույցումը չի տարբերվել նորածինների սեռերի բնական հարաբերակցության գործակցից, ապա երրորդ և հատկապես չորրորդ ծննդաբերությունից ծնված երեխաների տղա-աղջիկ հարաբերակցությունը Էականորեն տարբերվում է ծնելիության բնականոն գործընթացը բնութագրող ցուցանիշներից (1.5 և 1.7):

72. Ուսումնասիրության արդյունքները նաև փաստում են, որ ցածր է կանանց իրազեկվածությունը Հայաստանում հղիության արհեստական ընդհատման օրենսդրական կարգավորման մասին: Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տղաների նկատմամբ նախընտրությունը հիմնականում պայմանավորված է տոհմի շարունակման անհրաժեշտության ընկալմամբ, ընտանիքում տղամարդու ազդեցիկ դիրքով, հասարակության մեջ տղաների շատ ավելի ակտիվ դերակատարությամբ, սոցիալական մոբիլությամբ, ունեցվածքի ժառանգորդ լինելու հանգամանքով, ինչպես նաև հետագայում հասարակության մեջ կնոջ ինքնադուրս-նորման հեռանկարների բարդությամբ և կնոջ ավելի խոցելի վիճակով:¹
73. 2012-2013թ ՄԱԲՀ-ն մշակել և ներկայացրել է «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն» ուսումնասիրությունը, որի նպատակն էր իրականացնել գոյություն ունեցող վիճակագրական տվյալների համակարգված վերլուծություն՝ սեռերի հարաբերակցության անհամաչափության հետևանքների, դրանց ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական պատճառների, ինչպես նաև Հայաստանի բնակչության դինամիկայի վրա դրանց հնարավոր ներգործության որոշման համար:
74. Ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնականում կառուցված է ՀՀ ԱՎՃ կողմից ներկայացված 2001թ. մարդահամարի՝ ներառյալ 10 տարեկանից ցածր տարիքի 478,000 երեխաների վերաբերյալ տեղեկությունների, և 2001-2010թթ. ընթացքում երկրում գրանցված 386,000 ծնունդների մասին տվյալների խորքային վերլուծության վրա:
75. Չեկույցի արդյունքների համաձայն՝ Հայաստանում ծնունդների ավելի բարձր կարգերը պայմանավորված են եղել ընտանիքում տղա երեխայի բացակայությամբ, իսկ նախածննդյան փու-

1 Նույն տեղում.

լում սեռի ընտրությունը ընտանիքի ռազմավարության վրա ազդող գենդերային նախապատվության հիմնական գործոնն է: Նորածինների սեռային անհամամասնությունը Հայաստանում ի հայտ է եկել 1990-ականների կեսից, և 2011թ. դրությամբ կազմել է 114 տղա՝ յուրաքանչյուր 100 աղջիկ հաշվով: Ընտանիքի կազմը նորածինների սեռի վրա ազդող առաջին գործոնն է Հայաստանում և երրորդ ծնունդների սեռերի հարաբերակցության գործակիցն այդ իմաստով 2001-2010թթ. հասել էր ռեկորդային՝ 173-ի նշագծին, ինչը հատկապես արտահայտված է ՀՀ մարզերում և որպես նորածինների սեռերի անհամամասնության այսչափ բարձր ցուցանիշ գրանցված չէ որևէ այլ երկրում:

76. Չեկույցը նաև արձանագրում է նորածինների սեռերի առկա անհամամասնության ժողովրդագրական հետևանքներն ապագայում: Նորածինների սեռի անհամամասնության պահպանման դեպքում այն կանխատեսում է գենդերային խզում, ինչի արդյունքում մինչև 2060թ. չի ծնվի շուրջ 93,000 աղջիկ: Չեկույցը զանգվածային Էմիգրացիան ներկայացնում է որպես միակ գործոն, որը կարող է մեղմել չափահասների սեռական կազմում անհամամասնությունը:¹
77. Որպես հավելում Հայաստանում սեռերի անհամամասնության խնդրի վերաբերյալ արդեն իսկ գոյություն ունեցող գիտական բազայի, 2012թ. ՄԱԲՀ-ն իրականացրեց հետազոտություն, որի նպատակն էր վերհանել նախածննդյան փուլում սեռի ընտրության կանխարգելման լավագույն միջազգային փորձը և ներկայացնել առաջարկություններ Հայաստանում կանխարգելման արդյունավետ միջոցառումների համար: Վերլուծությունը կատարվել էր անկախ փորձագետ Լաուրա Ռահմի կողմից դաշտային աշխատանքների արդյունքների, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների մասին գիտական աշխատությունների վերլուծության, ինչպես նաև նախածննդյան փուլում սեռի ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման միջազգային լավագույն փորձի և նորածինների սեռերի շեղված հարաբերակցությունը վերականգնելու գործիքների ուսումնասիրության վրա:²

1 Քրիստոֆ 2. Գիլմոտո, Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն, Երևան, 2013.

2 Rahm, Laura. 2012. International Best Practices for the Prevention of Prenatal Sex Selection: Recommendations for Action for Armenia. Presented to Garik Hayrapetyan, UNFPA Armenia Assistant Representative.

78. 2011թ ՄԱԲՀ նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնության խնդրին նվիրված համաժողով, որի ընթացքում քննարկվեցին նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում ժողովրդագրական ցուցանիշների հիման վրա, նորածինների սեռերի համամասնության շեղումները միջազգային տեսանկյունից, Հայաստանում ծնելիության և բնակչության կայունացման և տղամարդկանց միգրացիային առնչվող հարցեր, հղիության պատմությունների և ելքերի մասով 2011թ. հետազոտության արդյունքները, հայաստանյան հասարակությունում տղա երեխայի գերապատվության հիմքում ընկած սոցիալ-հոգեբանական գործոնները և սոցիալական և գենդերային նորմերը:¹
79. Նորածինների սեռերի անհամամասնության վերաբերյալ հետազոտություններում ներկայացված եզրակացություններն ու նախնական դատողությունները հավաստելու, ինչպես նաև հետագա ուսումնասիրությունների ուղղությունները նախանշելու և խնդրի ու լուծումների մասին ավելի խորը և համապարփակ պատկերացում կազմելու նպատակով 2012-2013թթ. ՄԱԲՀ-ն նախաձեռնեց երկու փորձագիտական հանդիպում բժիշկ-փորձագետների, ազգագրագետների, գենդերային հարցերով փորձագետների, մարդաբանների, սոցիոլոգների և այլ հարակից մասնագետների մասնակցությամբ:² Բացի այդ, 2015թ. ՄԱԲՀ-ն և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ԱՍՀՆ) իրականացրել են Հայաստանի տուն-ինտերնատներում բնակվող տարեցների ու նրանց զավակների վերաբերյալ հարցում, որի արդյունքների համաձայն տարեցները դառնում են տուն-ինտերնատների բնակիչ՝ անկախ տղա կամ աղջիկ երեխա ունենալու փաստից:

1 Հարցազրույց. Շովինար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Միեր Մանուկյան, հաղորդակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016:

2 Հարցազրույց. Շովինար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Միեր Մանուկյան, հաղորդակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016:

4.2. Փաստերի վրա հիմնված հանրային քաղաքականություն և ծրագրեր

80. ՄԱԲՅ՝ Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնության մասին հետազոտությունների արդյունքներն ու եզրակացությունները և դրանց հիման վրա անցկացրած իրազեկության բարձրացման և շահերի պաշտպանության միջոցառումներն առաջին նշանակալի քայլերն էին պտղի սեռի ընտրության խնդիրը հրապարակայնացնելու և սեռական խտրականությանը վերաբերող հանրային բանավեճ խթանելու հարցում: Դրանք առաջինն էին Հայաստանում և Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանում, որ հստակ ցույց տվեցին, որ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընտրության արդյունքում Հայաստանը տարեկան կորցնում է շուրջ 1400 աղջիկ, ինչը մեծ հարված է Հայաստանի՝ առանց այն էլ ծանր վիճակում գտնվող ժողովրդագրական իրադրությանը:
81. Սույն մշտադիտարկման զեկույցի փորձագիտական հարցազրույցների մասնակիցների հավաստմամբ՝ Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնության վերաբերյալ հետազոտությունների արդյունքները և ձեռք բերված փաստական հիմքերը մեծապես ազդել են խնդրի վերաբերյալ հանրային քաղաքականության և նախաձեռնված իրավական կարգավորումների վրա: «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն» ուսումնասիրության մեջ տեղ գտած ժողովրդագրական կանխատեսումները, որոնք վերաբերում էին նորածինների սեռերի անհամամասնության նմանօրինակ դինամիկայի պահպանման դեպքում մինչև 2060թ. Հայաստանում շուրջ 93,000 չծնված աղջիկներին և այդ կանխատեսումներից բխող սոցիալական խիստ մտահոգիչ հետևանքներին, դարձան այն հիմնական փաստարկը, որը օգնեց համոզել քաղաքականության պատասխանատուներին՝ ճանաչել Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնությունը որպես ազգային անվտանգության խնդիր և հատուկ նշանակության խնդիր՝ մոր և մանկան առողջության պահմանման պետական քաղաքականության շրջանակներում: Դրանք նաև ընդգծեցին երևույթի կանխարգելման համար անհրաժեշտ մեխանիզմների ձևավորման խնդիրը, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններին զուգահեռ՝ սեռով պայմանավոր-

ված հղիության ընդհատման վտանգավոր հետևանքների, երևույթի պատճառների ու դրսևորման մեխանիզմների վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացման, համակարգային կանխարգելիչ միջոցառումների մշակման ու իրականացման, ինչպես նաև հասարակության մեջ կանանց դերի բարձրացման, կանանց և տղամարդկանց հավասար արժևորման խթանման համալիր միջոցառումների իրականացման կարևորությունը:¹

82. Այսպես, արդեն 2014թ. մայիսի 20-ին ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովում տեղի է ունեցել «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» թեմայով աշխատաժողով, որին մասնակցել են ՀՀ ԱԺ պատգամավորներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Աշխատաժողովի մասնակիցներն ընդգծել են խնդրի կարգավորման համար արդյունավետ ուղիներ գտնելու ընթացքում ապացուցողական հենքի, փաստերի և միջազգային պրակտիկայի ուսումնասիրման անհրաժեշտությունը:²

83. ՄԱԲ-ի հետազոտությունների արդյունքները և շահագրգիռ կառույցների՝ դրանց վրա հիմնված աշխատանքը օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների հետ հանգեցրեց Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների օրենսդրական կարգավորման և այդ թեմայով ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների ներամմանը 2014թ. փետրվարի 27-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում:³ Ի լրումն, ՄԱԲ-ը և Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄՉՄԿ) փորձագետների, ինչպես նաև ԱՄՆ

1 Հարցազրույցներ. Ծովինար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Մեր Մանուկյան, հարդրակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016, Կարինե Սարիբեկյան, Մոր և մանկան առողջության վարչության պետ, ՀՀ առողջապահության նախարարություն, 23.09.2016, Անուշ Սուբիասյան, փորձագետ, ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով, 23.09.2016 և այլուք:

2 Քննարկում ՀՀ ԱԺ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողովում, ՀՀ ԱԺ պաշտոնական կայք http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=20&month=05&year=2014&NewsID=6612&lang=arm:

3 «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 303-Ն, ընդունվել է՝ 27.02.2014, ուժի մեջ է մտել՝ 12.04.2014:

բաղաբաականությունն մշակողների ջանքերով պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելումը ներառվել է ՀՀ գենդերային բաղաբաականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրում:¹

84. Հիմնվելով ՄԱԲՀ «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում. ժողովրդագրական տվյալներ և վերլուծություն» հետազոտության Հայաստանում նորածինների էականորեն խախտված սեռային հարաբերակցության տվյալների վրա, հաշվի առնելով խնդրի կարգավորման միջազգային փորձը և ուղղորդվելով ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի N 303 Ն որոշմամբ ընդունված մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելումը օրենսդրորեն կարգավորելու 5-րդ կետի պահանջներով՝ 2014թ. ՀՀ ԱՆ մշակել և ներկայացրել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: Նախագծերի նպատակն էր կանխարգելել սեռով պայմանավորված հղիության ընդհատումները՝ բուժաշխատողի կողմից հղի կնոջը, նրա ընտանիքի անդամներին, երրորդ անձանց հղիության մինչև 30 շաբաթը լրանալը երեխայի սեռի վերաբերյալ տվյալների չտրամադրմամբ, ինչի խախտումը կհանգեցնեք վարչական պատասխանատվության:²
85. Առաջարկվող փոփոխությունները, սակայն, բացասական եզրակացության էին արժանացել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության և խնդրով զբաղվող այլ մասնագետների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, այդ թվում՝ ՄՉՄԿ փորձագետների կողմից՝ կոռուպցիոն բարձր ռիսկեր պարունակելու, ծնողների տեղեկացված լինելու իրավունքը խախտելու, ինչպես նաև կիրարկման և վերահսկողության

1 «Գենդերային բաղաբաականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը և գենդերային բաղաբաականության 2011 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում, N 19, 20.05.2011:

2 Հարցազրույց. Կարինե Սարիբեկյան, մոր և մանկան առողջության վարչության պետ, ՀՀ առողջապահության նախարարություն, 23.09.2016:

արդյունավետ մեխանիզմների բացակայության պատճառաբանությամբ և չէին ներկայացվել ՀՀ Ազգային ժողով:¹

86. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները և դրանց հետևանքները որպես ազգային անվտանգության խնդիր ճանաչելով՝ ՀՀ վարչապետը 2014թ. նոյեմբերի 6-ի 01/29.7/Ղ217064]-14 N 46 հանձնարարականով ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարներին հանձնարարել է մշակել պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների համապարփակ ծրագիր: Գործողությունների ծրագրի հիմնական գերակայությունները մշակվել են ՄՉՄԿ, ՄԱԲՀ և պետական գերատեսչությունների և կազմակերպությունների մասնագետների համատեղ ջանքերով:
87. Համապատասխանաբար, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման նպատակով և, ի կատարումն ՀՀ վարչապետի 11.04.2015թ. թիվ 02/14.7/5916-15 հանձնարարականի, ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. մայիսի 08-ի N 1129-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015թ. մայիսի 13-ի N 75-Ա/1 համատեղ հրամանով հաստատվել է «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը»: Պետական ծրագրում հիմնականում ներառվել են Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ՄՉՄԿ ՀԿ, «Սթիթչինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդ» կազմակերպության, «Արմավիրի գարգացման կենտրոն» ՀԿ-ի (ԱԶԿ), «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի (ՄԿՀԽ) և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլը» կազմակերպության (ՄԴԳ) կողմից 2015թ. մայիսի 1-ից իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի գործողությունները:²
88. Նման մոտեցման նպատակահարմարությունը պայմանավորված է եղել ՀՀ պետական բյուջեում միջոցների սղությանմբ և, դրա պայմաններում համապարփակ ծրագրային մոտեցումներով, ինչպես

1 Հարցազրույցներ. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ՀՀ Առողջապահության նախարարության, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՀՀ ԱԺ ներկայացուցիչներ:

2 Ի լուծմն ԵՄ ֆինանսավորման, գործընկեր կազմակերպություններն ապահովում են ծրագրի ֆինանսական միջոցների շուրջ 5 տոկոսը:

նաև գործողությունների ֆինանսական և ռեսուրսային ապահովության գործոններով:

89. Վերը նշված համատեղ հրամանով հաստատվել է Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագրի իրականացման նպատակով աշխատանքային խմբի կազմը:
90. Ծրագրի հիմնական բաղադրիչները ներառում են երեխայի սեռի ներարգանդային ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված բաղաբականության վերլուծությունն ու նոր գործիքների մշակում, երևույթի վտանգավոր հետևանքների վերաբերյալ բնակչության տեղեկացվածություն, իրավագիտակցության բարձրացում, կանխարգելման համար առողջապահական, սոցիալական, կրթական ծառայություններ մատուցողների և կազմակերպությունների կարողությունների հզորացում և աղջիկ երեխայի արժևորման աշխատանքների իրականացում: Դրանք մեծապես հիմնված են ՄԱԲՀ ուսումնասիրությունների արդյունքների, ՄՉՄԿ մասնագետների առաջարկությունների, ինչպես նաև մասնագետների հետ ֆորմալ և ոչ ֆորմալ խորհրդակցական հանդիպումների արդյունքների վրա:¹
91. ՄԱԲՀ՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների մասին հետազոտությունների տվյալների, ինչպես նաև առողջապահական, ժողովրդագրական, սոցիալական, իրավական և այլ հարակից ոլորտների մասնագետների, միջազգային, մասնավորապես՝ ՄԱԲՀ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ խորհրդակցական հանդիպումների արդյունքների հիման վրա, ինչպես նաև Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և ՄՉՄԿ-ի ու գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում գործող փորձագիտական խմբի ներգրավմամբ 2015թ. հունիսին ՀՀ ԱՆ կողմից մշակվել և 2016թ. հունիսին ընդունվել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որն օրենսդրորեն ամրագրում է հղիության երկրորդ տրիմեստ-

¹ Հարցազրույցներ. ՀՀ Առողջապահության նախարարության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցիչներ:

րում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքը, ինչը նախկինում օրենսդրության մեջ ուղղակիորեն արտացոլված չէր:¹

92. Օրենքը սահմանում է, որ հղիության արհեստական ընդհատումը 12-ից մինչև 22 շաբաթական հղիության ժամկետը կատարվում է բացառապես բժշկական (այդ թվում՝ սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության դեպքում) կամ սոցիալական ցուցումների առկայության դեպքում՝ կնոջ գրավոր համաձայնությամբ: Բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված, 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է:
93. Ընդհատումը կարող է իրականացվել միայն մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող հիվանդանոցային առողջապահական հաստատություններում: Ընդհատման բժշկական միջամտությունը իրականացնելուց անմիջապես առաջ բժիշկը պարտավոր է կնոջը տրամադրել անվճար խորհրդատվություն ընդհատման հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ, իսկ ընդհատման միջամտությունից անմիջապես հետո պարտավոր է կնոջը տրամադրել անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն՝ անցանկալի հղիությունից պաշտպանվելու միջոցների ընտրության վերաբերյալ, ինչի մասին բժշկի կողմից գրառվում է ընդհատման համար դիմած կնոջ բժշկական փաստաթղթերում և հաստատվում կնոջ ստորագրությամբ:
94. Հղիության արհեստական ընդհատման բժշկական, սոցիալական ցուցումները, հակացուցումները, անհրաժեշտ հետազոտությունների ցանկերը հաստատելու, հղիության արհեստական ընդհատման գործընթացում ներդրվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու լիազորությունը վերապահված է ՀՀ առողջապահության նախարարին:
95. Համապատասխան լրացում է կատարվել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության

¹ Հարցազրույցներ. Կարինե Մարիբեկյան, Մոր և մանկան առողջության վարչության պետ, Գայանե Ավագյան, Մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ, ՀՀ առողջապահության նախարարություն, 23.09.2016 և 26.09.2016:

օրենսգրքում», որը նպատակ ունի նախագծով թուլյատրվող հղիության արհեստական ընդհատման գործընթացում սահմանված պահանջների խախտման դեպքերի համար սահմանել վարչական պատասխանատվություն:¹

96. Ի լրումն, հաշվի առնելով Միգոպրոստոլ (վաճառվում է Սայտոտեկ, Միրոյուտ առևտրային անվանումներով) դեղի դեղաբանական ցուցման, հակացուցման, նշանակման, իրացման, փոխարինելիության առանձնահատկությունները, ինչպես նաև հղիության ժամանակ դեղի օգտագործումից առաջացած բարդությունները՝ 2014թ. օգոստոսի 1-ից դրա բացթողումն իրականացվում է բժշկի նշանակման համաձայն՝ դեղատոմսով: Միգոպրոստոլ (Սայտոտեկ, Միրոյուտ) դեղն ընդգրկված է «Դեղատոմսով բաց թողնվող դեղերի ցանկում», որոնք ամբուլատոր հիվանդների համար դուրս են գրվում ՀՀ կառավարության 14.08.2001թ. N 759 որոշմամբ հաստատված N 3 դեղատոմսային ձևաթղթով, որը նախատեսված է սովորական դեղերի համար:
97. Հղիության արհեստական ընդհատման օրենսդրական նոր կարգավորման մասին սույն մշտադիտարկման զեկուլցի մշակման նպատակով անցկացված հարցազրույցների ընթացքում հնչած կարծիքները միանշանակ չեն: Դրական համարելով խնդրի կարգավորման նախաձեռնությունը՝ որպես պետության հստակ դիրքորոշում և ուղերձ առ այն, որ երեխայի սեռի ընտրությունը և, մասնավորապես, պտղի սեռով պայմանավորված արքորը բարոյապես դատապարտելի է և իրավական առումով անթուլյատրելի՝ խնդրի բացառապես օրենսդրական ճանապարհով կարգավորումը չի ապահովի ակնկալվող արդյունքները, քանի որ հարցը բազմաշերտ է և դրա արմատները հասարակության մեջ առկա գենդերային կարծրատիպերն են:
98. Մասնագետների մեծամասնությունը վստահ է՝ երևույթի դեմ պայքարը պիտի ուղղվի առավելապես դրա խորքային պատճառներին: Լուծումները պիտի ուղղված լինեն, մասնավորապես, կանանց կարգավիճակի աստիճանական բարձրացման ու հասարակության մեջ նրանց դերի բարձրացմանը, ինչը կնպաստի տղա երեխա-

¹ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-134-Ն, ընդունվել է՝ 29.06.2016, ուժի մեջ է մտել՝ 06.08.2016: «Կարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-135-Ն, ընդունվել է՝ 29.06.2016, ուժի մեջ է մտել՝ 06.08.2016:

յին հավասար՝ աղջիկ երեխայի արժևորմանը, և, համապատասխանաբար, պտղի սեռի խտրական ընտրության պատճառների թուլացմանը: Միաժամանակ, նոր օրինագծի արդյունավետությունը բարձր կլինի միայն կիրարկման և վերահսկողության պատշաճ մեխանիզմների առկայության դեպքում: Այս առումով հատկապես կարևորվում է բացառապես բժշկասոցիալական ցուցիչների համաձայն հղիության արհեստական ընդհատումների իրականացման արդյունավետ վերահսկողությունը: Այն պիտի հնարավորինս բացառի իրական՝ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման ցանկության հիմնավորումը բժշկասոցիալական այլ ցուցիչով:¹

99. Մասնագետները նշում են, որ նոր օրինագիծը կարող է որոշակիորեն բարձրացնել հղիության արհեստական ընդհատումների գործընթացի վերահսկելիությունը, քանի որ սահմանում է հղիության արհեստական ընդհատման գրավոր ընթացակարգ, և վարչական պատասխանատվություն այն անձանց համար, ովքեր չեն պահպանի ընթացակարգի պահանջները, ինչպես նաև վարչական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված դեպքում հղիության արհեստական ընդհատումը առանց բժշկական հանձնաժողովի որոշման իրականացնելու համար: Բացի այդ, մինչև 12 շաբաթական հղիության ընդհատման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար տրված երեք օրացուցային օր ժամկետը կարող է նպաստել ընդհանուր ընդհատումների թվաքանակի նվազմանը:² Միաժամանակ, երևույթի քրեականացումն էականորեն դժվարացնելու է դրա մշտադիտարկումը, ուսումնասիրությունն ու տվյալների հավաքագրումը:

100. Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և ՄՁՄԿ-ի ու գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրն, ըստ Էռլթյան, Չայաստանում նորածինների սեռերի անհամամասնության վերաբերյալ ՄԱԲՀ հետազոտությունների արդյունքների և ներկայացված առաջարկությունների վրա հիմնված առաջին լայնածավալ ու համապարփակ ծրագիրն էր երկում: Միաժամանակ,

1 Չարցագրույց, Լուսինե Սարգսյան, Իրավական վերլուծության վարչության պետ, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ:

2 Չարցագրույցներ, Կարինե Սարիբեկյան, Մոր և մանկան առողջության վարչության պետ, Գայանե Ավագյան, Մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ, ՀՀ առողջապահության նախարարություն, 23.09.2016 և 26.09.2016:

վեր հանված փաստերն ու դրանց բարձրաձայնումը, խնդրի աստիճանական հրապարակայնացումն ու ակտուալացումը, միջազգային զարգացման գործընկերների ռեսուրսների մոբիլիզացիան հնարավորություն ընձեռեցին միջազգային և հասարակական մի շարք կազմակերպություններին՝ մշակելու և իրականացնելու ծրագրեր և միջոցառումներ նախաձեռնողյան փուլում պտղի սեռի ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ուղղությամբ:

101. Այսպես, Վորլդ Վիժն Հայաստանը, Վորլդ Վիժն ԱՄՆ ֆինանսավորմամբ իրականացնում է 2016-2019թթ. «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագիրը, որի նպատակն է «փոխել և կանխել կանանց ու աղջիկներին վնասող կարծրատիպային վերաբերմունքն ու վարքագիծը և նպաստել այնպիսի միջավայրի ստեղծմանը, որտեղ աղջիկներն ու տղաները ծնվում ու արժևորվում են հավասարապես»:¹ Վորլդ Վիժն Հայաստանը փորձելու է «Հայաստանի համայնքներում վերացնել պտղի սեռի ընտրության դրդապատճառները, իր աշխատանքներում նպատակային կերպով ընդգրկելով տղամարդկանց, կանանց և երիտասարդներին առողջ ու հարգանքի վրա հիմնված ընտանեկան հարաբերություններ կառուցելու, խնդրի նկատմամբ իրազեկվածությունը բարձրացնելու, ինչպես նաև հասարակության մեջ կնոջ դերն արժանիորեն գնահատելու ուղղությամբ»:² Ծրագիրն իրականացվում է Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի, Շիրակի մարզերում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Աշխատանքները իրականացվում են 510 գույզի/1020 անձի և 1,050 երիտասարդի հետ, շուրջ 600 ընտանիք ներգրավված են “Celebrating Families” մոդելին:³

102. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և ՄԱԲՀ-ն 2012-2013թթ. աշխատանքներ են իրականացրել, ինչին հետևել է «Նախաձեռնողյան փուլում պտղի սեռի խտրական ընտրությունը Հայաստանում» հետազոտական ծրագիրը, որն իրականացվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի շվեյցարական ազգային կոմիտեի և Ցյուրիխի համալսարանի կողմից՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի ներգրավմամբ: Թեև ծրագրի նախապատրաստական աշ-

1 Տե՛ս՝ <https://goo.gl/Lymqwm>:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում: Նաև՝ Հարցազրույց, Սևան Պետրոսյան, Հոգատարություն հանուն հավասարության ծրագրի ղեկավար, Վորլդ Վիժն Հայաստան, 20.09.2016:

խատանքները մեկնարկել են դեռևս 2013թ, սակայն բուն հետազոտական աշխատանքները՝ մեկնարկել են 2016թ. ապրիլին և տևելու են մինչև 2017թ. հոկտեմբերը: Այն նպատակ ունի բացահայտել Հայաստանում նախաձեռնողյան փուլում սեռի ընտրության խորքային պատճառները և վերլուծել երևույթի սոցիալական նորմերը: Հետազոտության արդյունքները կարող են նպաստել շահերի պաշտպանության և հանրային իրազեկման արշավների, հանրային բաղաբականության ու կարգավորման առաջարկությունների մշակման աշխատանքներին: Ուսումնասիրության մեթոդաբանության հիմքում ընկած են Վինյեթ հետազոտական գործիքը (Vignette Studies) և անուղղակի գուգորդությունների թեստը (Implicit Association Test), որոնց հաջողություն է քանակական հետազոտությունը: Վինյեթ հետազոտական գործիքը (Vignette Studies) կիրառվելու է նախաձեռնողյան փուլում երեխայի սեռի ընտրության ամենաբարձր, միջին և ամենացածր գործակիցը ունեցող ՀՀ երեք մարզերում և թիրախավորելու է 300 տնային տնտեսություն: Ձեռք բերված հետազոտական նկարագրերը չափելու են պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման պրակտիկաները երկու տեսանկյունից՝ աղջիկ երեխայի արժևորում և ընտանիքում որոշում կայացնելու կարողություն: Անուղղակի գուգորդությունների թեստը (Implicit Association Test) օգնելու է բացահայտել աղջիկ երեխաների նկատմամբ թաքնված խտրականությունը նույն տնային տնտեսությունում ապրող կանանց, ամուսինների և ամուսինների մայրերի շրջանում:¹

103. ՄԱԲՀ 2011թ. ուսումնասիրությունների արդյունքում վեր հանված նորածինների սեռերի անհամամասնության երևույթը Հայաստանում, տարածվածությունն ու պատճառները, ինչպես նաև ներկայացված առաջարկությունները հիմք են հանդիսացել նաև 2013-2015թթ. ընթացքում ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից վերարտադրողական առողջության և պտղի սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման կանխարգելման ուղղությամբ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հայտարարած մրցույթի շրջանակներում դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման համար:

104. Այսպես, նշված ժամանակահատվածում վերարտադրողական, սեռական առողջության, անպտղության, անվտանգ մայրության,

¹ Հարցազրույց. Լուսինե Երեմյան, Երեխաների իրավունքների մոնիթորինգի և զննատման բաժնի ղեկավար, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակ:

ինչպես նաև նախաձեռնողյան փուլում պտղի սեռի ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների բացասական հետևանքների մասին Երևանում և ՀՀ մի շարք մարզերում հանրային իրազեկման և կրթական ծրագրեր են իրականացրել «Յաղարծին» երիտասարդական ՀԿ-ն, «Ոչ պետական բուհերի ուսանողական կենտրոն» ՀԿ-ն, «Ազաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն ՀԿ-ն, «Դիսըբիլիթիինֆո» տեղեկատվական ՀԿ-ն, «Սոցիալ-հոգեբանական և վիճակագրական հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ն, «Լուսինե» կանանց ՀԿ-ն, «Յույսի Մեծամոր» ՀԿ-ն, «Յաշմանդամների «Փարոս» կրթության և մշակույթի զարգացման կենտրոն» ՀԿ-ն, «Սոցիալական և երիտասարդական աշխատողներ» ՀԿ-ն, «Ընտրության իրավունքով» առողջապահական ՀԿ-ն, «Էխո» հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաներին աջակցող ՀԿ-ն, «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ-ն, «Ոստայն հայոց» կրթամշակութային ՀԿ-ն, «Երիտասարդական հանրապետություն» սոցիալական ՀԿ-ն, «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ՀԿ-ն:¹

¹ Հարցազրույց. Արուսյակ Պողոսյան, Ծրագրերի իրականացման ծառայության ղեկավար, Հայաստանի երիտասարդական հիմնադրամ, 24.09.2016: ՀԵՅ՝ վերարտադրողական առողջության և պտղի սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման կանխարգելման ծրագրերի ամփոփ տեղեկանք:

5. Հանրուլթյան ջանքերի համախմբում՝ հանրային քաղաքականության և ծրագրերի շրջանակներում

5.1. Հանրային իրազեկման քարոզարշավներն ու շահերի պաշտպանությունը

105. Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության մեջ մեծապես կարևորվել են նախաձեռնողյան փուլում սեռի ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հետևանքների, դրսևորումների և պատճառների, ինչպես նաև դրանց վերացմանն ուղղված քայլերի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումները:
106. Այսպես, 2014թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից ընդունված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը, բացի պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների իրավական կարգավորման անհրաժեշտությունից, կարևորում է նաև տվյալ թեմայով ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:¹
107. Բացի այդ, հանրային իրազեկման արշավներն ու շահերի պաշտպանությունը հանդիսանում են 2015թ. մայիսին ՀՀ ԱՆ և ՀՀ

¹ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 303-Ն, ընդունվել է՝ 27.02.2014, ուժի մեջ է մտել՝ 12.04.2014:

ԱՄՆ կողմից հաստատված պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման պետական ծրագրի առանցքային գործողություններից մեկը:¹ Մասնավորապես, ծրագրի 2-րդ և 3-րդ կետերը նախատեսում են 2015-2016թթ. ընթացքում պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատման վտանգավոր հետևանքների վերաբերյալ բնակչության տեղեկացվածության, իրավագիտակցության բարձրացում և համակարգային կանխարգելիչ միջոցառումների իրականացում, ինչպես նաև պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների կանխարգելման համար ամողջապահական, սոցիալական, կրթական ծառայություններ մատուցողների և կազմակերպությունների կարողությունների հզորացում:

108. Պետական ծրագրի 2.1.1 ենթակետով նախատեսվել է մշակել պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված քարոզչության տարբեր գործիքներ՝ ելնելով մարզային առանձնահատկություններից և հնարավորություններից: ՄՉՄԿ կողմից ստեղծված և վերապատրաստված 400-ից ավելի անդամ ունեցող Փոխցանցը ՄՉՄԿ աջակցությամբ մշակել է պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քարոզչական գործիքներ տղա երեխայի նախապատվության պատճառների ու հետևանքների, սելեկտիվ աբորտների բացասական հետևանքների, կանանց ու աղջիկների հանդեպ խտրականության բացամաման, ցածր ծնելիության խնդիրների և հարակից թեմաների մասին:

109. Պետական ծրագրի 2.1.2 ենթակետը նախատեսում է մարզերում և Երևան քաղաքում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված քարոզչական աշխատանքների իրականացում՝ ներառյալ մարզերում խորհրդատվական աշխատանքային խմբերի ստեղծում, 25 համայնքներում համայնքային ակտիվ խմբերի ստեղծում ու վերապատրաստում, 50 հանդիպում համայնքների բնակիչների հետ, տե-

¹ 2015թ. մայիսին ՀՀ ամողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների կողմից N 1129-Ա և N 75-Ա/1 համատեղ հրամանով հաստատված՝ «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագիր և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույց», որում ներառվել են Եվրոպական միության ֆինանսավորմամբ և «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ, «Սթիջինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդ» կազմակերպության, «Արմավորի զարգացման կենտրոն» ՀԿ, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից 2015թ. մայիսի 1-ից իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի գործողությունները:

ղեկատվական, կրթական և հաղորդակցության նյութերի մշակում և տարածում, մարզային ռադիո և հեռուստաընկերությունների միջոցով խնդրի վերաբերյալ 48 հաղորդման հեռարձակում, սոցիալական ցանցերում բննարկումների կազմակերպում:

110. Պետական ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են մարզային և մայրաքաղաքային մակարդակով գործող Փոխցանցի անդամները, ստեղծվել և վերապատրաստվել են համայնքային և քաղաքացիական ակտիվ խմբեր, որոնք մարզերում և Երևանում բնակչության շրջանում իրականացրել են պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քարոզչական և կրթական աշխատանքներ:
111. Մասնավորապես, ծրագրի առաջին տարում համայնքային ակտիվ խմբերը, ծրագրի գործընկեր ՄԴԶ կազմակերպության, ԱԶԿ ՅԿ-ի և ՄԿՅԽ ՅԿ-ի գլխավորությամբ կազմակերպել են 140-ից ավել հասարակական միջոցառում շուրջ 3,560 համայնքային բնակչի համար՝ նշանադրվով պտղի սեռի խտրական ընտրության խորթային պատճառներն ու հետևանքները:
112. Բացի այդ, ծրագրի առաջին տարում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման նպատակով բնակչության թիրախ խմբերի համար մշակվել, տպագրվել և տարածվել են տեղեկատվական, կրթական և հաղորդակցման նյութեր, որոնք նպատակ են հետապնդել փոխել կանանց և աղջիկների հանդեպ հասարակությունում գոյություն ունեցող կարծրատիպային մոտեցումներն ու վերաբերմունքը: Տեղեկատվական նյութերը ընդգծում են տղա և աղջիկ երեխաների հավասար արժևորման և հավասար իրավունքների գաղափարները և թիրախավորում են կանանց, տղամարդկանց, նրանց ծնողներին, քանի որ վերջիններս հաճախ ազդեցիկ դեր են ունենում զույգերի վերարտադրողական որոշումների հարցում: Ընդհանուր առմամբ տպագրվել է 200,000 տեղեկատվական թերթիկ և 250 պաստառ, որոնց կեսից ավելին տարածվել է բնակչության շրջանում ծրագրի առաջին տարվա ընթացքում: Պաստառները հիմնականում փակցվել են հանրապետության բուժհաստատություններում:¹

1 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ զեկույց 01/05/2015 - 30/04/2016:

113. Ի լրումն, ծրագրի իրականացման առաջին տարվա ընթացքում ՄԴԶ-ն կազմակերպել է վճարովի և անվճար 17 հաղորդումների և հարցազրույցների պատրաստումն ու հեռարձակումը հանրապետական և մարզային մի շարք հեռուստա- և ռադիոալիքներով: Բացի այդ, ԱԶԿ-ն և ՄԿՀԽ-ն ծրագրի շրջանակներում մշակել և տեղական հեռուստատեսության և ռադիոալիքներով հեռարձակել են խնդրի վերաբերյալ մի շարք հաղորդումներ:
114. Ծրագրերն ու հաղորդումները հետագայում վերահեռարձակվել են, այդպիսով ծրագրի իրականացման առաջին տարում ապահովելով ավելի քան 330,000 անդամ ունեցող անուղղակի լսարան, ինչը կազմում է հեռուստատեսության և ռադիոալիքների ամբողջ լսարանի 10%-ը: Այսպիսով, պետական ծրագրի իրականացման առաջին տարում ԵՄ ֆինանսական աջակցությամբ գործընկեր կազմակերպությունները հեռարձակել են նախանշված 48 հաղորդումներից 27-ը: Ի լրումն, ծրագրի իրականացման առաջին տարում պատրաստվել և սոցիալական ցանցերով ու մի շարք հեռուստաալիքներով հեռարձակվել են երկու սոցիալական գովազդ պտղի սեռի խտրական ընտրության պատճառների, միջոցների և հետևանքների մասին, որոնք նշված ժամանակահատվածում ստացել են ավելի քան 14,000 դիտում:¹
115. Ի լրումն նշված միջոցառումների, Հայաստանի Հանրային հեռուստաընկերության եթերով հեռարձակվող «Մայրիկների ակումբ» հեռուստահաղորդման շրջանակներում անցկացվել է պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի միամսյակ, որի ընթացքում շաբաթական 3-4 անգամ անդրադարձ է կատարվել սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրին, ցուցադրվել են տեսանյութեր և անցկացվել հարցազրույցներ ոլորտի փորձագետների հետ:²
116. Պետական ծրագրով նախատեսված՝ սոցիալական ցանցերում քննարկումներ ապահովելու նպատակով ծրագրի շրջանակներում մասնակիցների և գործընկերների կողմից սոցիալական մեդիայի հարթակներում և կայքերում պարբերաբար տեղադրվում են պտղի սեռի խտրական ընտրության պատճառների, հետևանքների և կանխարգելման ուղիների մասին թեմատիկ նյութեր, տեսահոլովակներ, հոդվածներ և հաղորդումներ: 2015թ. օգոստոսին

1 <https://www.youtube.com/watch?v=eSSJkVxKmk>, <https://www.youtube.com/watch?v=IOakxxc3Usg>

2 Հարցազրույց. Մերի Ներսիսյան, «Ընտանիքի ակադեմիա» ՀԿ, 22.09.2016:

ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում գործընկերները Ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծել են խումբ, որը խնդրով զբաղվող շահագրգիռ կողմերին ապահով միջավայրում փորձի և գիտելիքների փոխանակման և քննարկումների հնարավորություն է ընձեռում: Ծրագրի իրականացման առաջին տարում Ֆեյսբուքյան խումբն ուներ 900 անդամ:¹

117. Պետական ծրագրի շրջանակներում ԵՄ աջակցությամբ հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացրել ինչպես գործընկեր կազմակերպությունները, այնպես էլ ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհի ստացած մարզային և մայրաքաղաքային 20 հասարակական կազմակերպությունները: Քարոզարշավները ներառել են առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության մասին կարճամետրաժ ֆիլմերի ներկայացում, համայնքային հանդիպումներ, կարողությունների զարգացման դասընթացներ, ֆիլմերի ցուցադրություն և քննարկումներ, ֆլեշ մոբեր, ինտերակտիվ թատրոններ և ծաղրաշարեր:²

118. 2016թ. հունիսին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարության» և 2016-2020թթ. գործողությունների ծրագրի «Վերարտադրողական առողջության ոլորտի մասնագետների շարունակական ուսուցման ապահովում և բնակչության իրազեկվածության բարձրացում» ռազմավարական ուղղությունը նախատեսում է 2016-2018թթ. աղջիկ երեխայի արժևորման և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման վերաբերյալ բնակչության տեղեկացվածության բարձրացմանն ուղղված հանրային իրազեկման արշավների իրականացում և բնակչության համար պտղի սեռով պայմանավորված աբորտների կանխարգելմանն ուղղված ուղեցույցների մշակում և ներդնում:³

1 <https://www.facebook.com/groups/409020602617094/>

2 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ զեկույց 01/05/2015 – 30/04/2016: Հարցազրույցներ. ծրագրի մասնակիցներ, 13.09.2016-22.09.2016 /զրկանության ցանկ/:

3 «Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում, N 24, 23.06.2016 թ.:

119. Ներկայումս ՀՀ կառավարության կողմից մշակվող ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նոր ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը անդրադառնում են պտղի սեռով պայմանավորված հղիության արիեստական ընդհատումների կանխարգելման նպատակով հանրային իրազեկման արշավների և բնակչության տեղեկացվածության միջոցառումների անհրաժեշտությանը:¹
120. ՄԱԲՀ կողմից 2011-2016թթ. նախաձեռնողյան փուլում պտղի սեռի ընտրության կանխարգելմանն ուղղված բազմաթիվ ծրագրերում առանցքային դեր են ունեցել հանրային իրազեկման և շահերի պաշտպանության միջոցառումները: Հանրային իրազեկման, կրթության և շահերի պաշտպանության արշավները ուղղված են եղել թե՛ առանձին թիրախային խմբերին, թե՛ հասարակության լայն շերտերին՝ նպատակ ունենալով փոխելու մարդկանց՝ տղա երեխայի նախապատվությունը սնուցող ընկալումներն ու պատկերացումները և ձևավորելու բարոյական առումով մերժելի և անընդունելի դիրքորոշում առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության նկատմամբ:
121. Այսպես, շահերի պաշտպանության արշավները նպատակ են հետապնդել հաղթահարել դիմադրությունն ու թերահավատության փաստարկները, և Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արիեստական ընդհատման խնդիրը դարձնել ընկալելի և ճանաչելի զանգվածային լրատվամիջոցների, հասարակության լայն զանգվածների, մասնագիտական, ակադեմիական և պաշտոնական շրջանակների, քաղհասարակության կառույցների և դոնոր ու կրոնական կազմակերպությունների համար, երևույթի նկատմամբ առաջացնել գիտակցության փոփոխություն՝ հատկապես շեշտադրելով դրա բացասական հետևանքները ժողովրդի և պետության հեռանկարային զարգացման և կայունության տեսանկյունից: Բացի այդ, տեղեկատվական արշավների իրականացումը միտված էր խթանել պտղի սեռով պայմանավորված արորտների պատճառների հետագա պարզաբանման, ինչպես նաև էթիկական ու սոցիալական քաղաքականության խնդիրների վերաբերյալ հետազոտությունները և համախմբել շահագրգիռ կողմերին՝ մշակելու և կիրառելու նախաձեռնողյան փուլում պտղի

¹ Հարցազրույց. Արմենուհի Թասաշյան, Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 26.09.2016թ.:

սեռի խտրական ընտրության կանխարգելման համապարփակ և հետևողական գործողությունների ծրագիր:¹

122. Կարծիք ձևավորողների և որոշում կայացնողների կարողությունների զարգացման և հանրային իրազեկման քննարկման կիզակետը սելեկտիվ աբորտների դրսևորումից ու հղիությունն արհեստականորեն ընդհատելու առիթներից աստիճանաբար տեղափոխվել է դեպի երևույթի նախապայմաններից մեկի՝ տղա երեխայի նախապատվության թեմա: Հիմնական դերակատարները հստակ ընկալել են, որ այս խնդրում ժողովրդական իմաստությամբ՝ «ու՛նքն ուղղելու փոխարեն աչքը հանելը հեշտ է» և հիմնականում ուղղորդվել են «Մի վնասի՛ր» մոտեցմամբ: Հանրային քարոզարշավների ուղերձների բովանդակությունն այս առումով շատ դեպքերում ենթարկվել է մանրագին մասնագիտական «աուդիտի», հնարավորինս կանխարգելելով քննարկման անցանկալի շեղումը դեպի աբորտների ընդհանրական թեման և «pro-life» vs. «pro-choice» առճակատումը: Այս առումով հատկանշական է, որ Հայաստանում հակաբեղմնավորիչների, հատկապես՝ բեղմնականիման ժամանակակից մեթոդների և միջոցների կիրառման տարածվածության ցուցանիշը խիստ ցածր է եղել թե՛ խորհրդային անցյալում, թե՛ անկախության երկուսուկես տասնամյակների ըթնացքում: Ուստի անցանկալի հղիություններից խուսափելու հիմնական միջոցը եղել է հղիության արհեստական ընդհատումը: Այս առումով ռացիոնալ-պրագմատիկ հարթության մեջ հայ հասարակությունը գերազանցապես «pro-choice» վարքագիծ է դրսևորել, ինչը սակայն, առանձին դեպքերում ուղեկցվել է նաև հասարակության մեջ որոշակիորեն արտահայտված «pro-life» արժեհամակարգի առավելապես ցուցադրական-զգայական-իռացիոնալ դրսևորումներով:²

123. ՄԱԲՀ նախաձեռնությունները ներառել են զանգվածային լրատվամիջոցների ներգրավմամբ իրազեկման քարոզարշավներ, տեղեկատվական թերթիկների տարածում, ֆիլմերի և ինտերակտիվ թատրոնների ներկայացում, երիտասարդության հետ կրթական աշխատանք, ֆոտոհանդեսներ և այլն, և միտված են խթանել աղ-

1 Հարցազրույց. Շովինար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Մեր Մանուկյան, հաղորդակցության գծով օգնական, ՄԿԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016:

2 Պրագմատիկ և արժեքային հակասությունների նման համադրությունը հիշեցնում է ճապոնական հասարակության մեջ հայտնի honne-tatemaե համակարգի գուգորդումը: Հարցազրույց. ՄՉՄԿ աշխատակազմի հետ:

ջիկ և տղա երեխաների հավասար արժևորումը, ներկայացնել ամանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության պատճառներն ու հետևանքները, դրանից բխող մարտահրավերները և խնդրի բարոյական նրբությունները:¹

124. Քարոզարշավներում նշանակալի դերակատարում են ունեցել զանգվածային լրատվության միջոցները: Փորձագետները միաձայն նշում են, որ այս ամռանով դրական մեծ դեր է ունեցել բազմաթիվ անհատ լրագրողների շահագրգիռ ու անշահախնդիր մասնակցությունը իրազեկման աշխատանքներին և պատրաստակամությունը՝ անձնական ներդրում ունենալ պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի գործում: Այդուհանդերձ, ՄՉՄԿ կողմից իրականացվող ՉԼՄ-ների մոնիթորինգի նախնական եզրակացությունները փաստում են, որ ՉԼՄ-ները կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորման խնդրում կարող են ինչպես դրական, այնպես էլ որոշակիորեն բացասական դեր խաղալ: Այսպես, ՉԼՄ-ների հրապարակումները շարունակում են վերատրադրել տղա երեխայի նախապատվության համար հիմք հանդիսացող մի շարք կարծրատիպեր: ՉԼՄ-ների ներկա գործող պրակտիկան և լրատվական դաշտում խաղի կանոնները, մասնագիտական էթիկայի և կարողությունների խնդիրները, այս ոլորտում լրագրողա-խմբագրական «ֆիլտրերի» բացակայությունը նաև հնարավորություն են ստեղծում զենդերային իրավահավասարության դեմ մարտնչող, խտրականություն բարոզող, որպես պահպանողական ներկայացող, սակայն էականորեն ակնհայտորեն ծայրահեղական, արմատականություն ու անհանդուրժողականություն բարոզող ու դրսևորող, հայաստանյան հասարակությանն օտար ու արտաքին շահեր սպասարկող դերակատարներին՝ ավանդական արժեքների պաշտպանության ներքո քողարկված մարտահրավեր նետել ոչ խտրականության արժեքներին, մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներին և դերակատարներին, ուստի և՛ Հայաստանի Հանրապետության անվտանգությանը:

125. ՄԱԲՀ-ի՝ երկրում նորածինների սեռերի անհամամասնության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհա-

¹ Հարցազրույց. Ծովինար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Մեեր Մանուկյան, հաղորդակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016: ՄԱԲՀ՝ պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի շրջանակներում իրականացված միջոցառումների ամփոփ տեղեկանք:

տումների մասին բոլոր հետազոտությունները լայնորեն լուսաբանվել են զանգվածային լրատվամիջոցների կողմից և ներկայացվել հասարակության լայն շրջանակներին՝ ներառյալ պետական կառույցները, ակադեմիական շրջանակը, բուժաշխատողները, քաղհասարակությունը, դոնոր և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչները: 2011-2016թթ. ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչները ընդհանուր առմամբ մասնակցել են խնդրի վերաբերյալ ավելի քան 330 հեռուստատեսային և ռադիո հաղորդումների, ապահովել խնդրի լայնածավալ լուսաբանումը տեղական և միջազգային լրատվամիջոցներով, ինչպես նաև ներկայացրել երևույթի հետ կապված իրավիճակը երկրում մի շարք մամլո ասուլիսների ժամանակ, տպագիր և օնլայն հոդվածներում:¹

126. 2013թ. ՄԱԲՀ-ի կողմից ներկայացվել է Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնության մասին պատմող ֆիլմ, որը ցուցադրվել է ինչպես լայն հասարակության, այնպես էլ բուժաշխատողների, որոշում կայացնողների, հասարակական-քաղաքական գործիչների շրջանում: Բացի այդ, ՄԱԲՀ-ի կողմից ՀՀ ԱՆ պատվերով մշակվել են տեղեկատվական թերթիկներ երիտասարդ ծնողների և բնակչության համար սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների բացասական հետևանքների վերաբերյալ: Թերթիկները տպագրվել են 10,000 օրինակ և տարածվել բնակչության շրջանում Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Ի լրումն դրա, 2015 թ. ՄԱԲՀ-ն հրատարակել է ձեռնարկ բուժաշխատողների համար՝ հայտնաբերելու և կանխարգելելու պտղի սեռի խտրական ընտրության պոտենցիալ դեպքերը:

127. 2012թ. «Նա-Նե» ամենամյա լրագրողական մրցույթի և «Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի» հայաստանյան գրասենյակի կողմից հայտարարված կանանց խնդիրների վերաբերյալ ռադիո և տեսանյութերի մրցույթի շրջանակներում ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակը հատուկ մրցանակ է սահմանել Հայաստանում հղիության սեռով պայմանավորված ընդհատումների վերաբերյալ լավագույն նյութի հեղինակի համար: Բացի այդ, խնդրի համակողմանի ընկալման և ճիշտ լուսաբանման նպատակով 2013թ. ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակը կազմակերպել է լրագրողների հանդիպում սեռով պայմանավոր-

1 Հարցազրույց. Շովինար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Միեր Մանուկյան, հաղորդակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016: ՄԱԲՀ՝ պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի շրջանակներում իրականացված միջոցառումների ամփոփ տեղեկանք:

ված հղիության արհեստական ընդհատումների հիմնախնդրի ոլորտի փորձագետ դոկտոր Քրիստոֆ Գիլմոտոյի հետ:¹

128. ՄԱԲՀ-ի իրագեկման քարոզարշավների թվում հիշատակելի է նաև 2012թ. լույս տեսած «Կորսված հավասարակշռություն. արու զավակի նախընտրությունը Հայաստանում» ֆոտո գիրք-նախագիծը, որը կարճ պատմությունների և լուսանկարների միջոցով բարձրաձայնել է Հայաստանում տղա երեխաներին անհամաչափ նախապատվություն տալու խնդրի մասին: Բացի այդ, 2013թ. պատրաստվել և հանրապետության բոլոր մարզերում ցուցադրվել է «Ծիածանի գործով աննախադեպ ինտերակտիվ դատավարություն» ներկայացումը, որը պատրաստվել է «Փոփոխությունների թատրոն» ինտերակտիվ ֆորում թատրոնի կողմից՝ ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ և նվիրված է Հայաստանում տղա երեխաների նախընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների հիմնախնդրին:
129. Ի լրումն դրա, 2013թ. ստեղծվել և լայնորեն տարածվել է «Նե» աղջիկ երեխայի խորհրդանիշը. 2014-2015թթ. ընթացքում «Նեի ճանապարհորդությունը» ներկայացումը Վորլդ Վիժն Հայաստանի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՄԴԶ կողմից ցուցադրվել է Երևանի և ՀՀ մարզերի մի շարք համայնքներում: Դրանից գատ, 2015թ. ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակը և Մեդիամաքս մեդիա-ընկերությունը համատեղ հայտարարել են շարադրությունների մրցույթ՝ «Իմ աղջիկը» վերնագրով, որը նպատակ է ունեցել ընդգծել աղջիկ երեխայի արժեքն ու կարևորությունը ընտանիքում և հասարակությունում և նպաստել սեռերի հավասարության սկզբունքների ամրապնդմանն ու նախաձննդյան փուլում երեխայի սեռի ընտրության նվազեցմանը:
130. Բացի այդ, ՀՀ ԱՆ և ՄԱԲՀ հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտում անցկացվել է «Իսկ դու ունե՞ս աղջիկ» խորագրով միջոցառումը, որի ընթացքում համանուն ֆեյսբուքյան ֆլեշմոբին մասնակցած հայրեր-դուստրեր լուսանկարների ցուցահանդեսի և «Արմնյուզ» հեռուստաընկերության պատրաստած տեսաֆիլմի միջոցով հանրության ուշադրությունը

1 Նույն տեղում:

ևս մեկ անգամ հրավիրվել է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրին:¹

131. Վորլդ Վիժն Հայաստանի կողմից իրականացվող վերը նշված «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագիրը ներառում է գենդերային սոցիալական նորմերի փոխակերպումը խթանող հանրային արշավներ և շահերի պաշտպանության միջոցառումներ, այդ թվում՝ ՀՀ Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի, Շիրակի մարզերում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում իրականացվում են հանրային իրազեկման և կրթական աշխատանքներ, որոնք ուղղված են խթանելու ընտանիքների ակտիվ մասնակցությունը վնասակար սոցիալական նորմերի փոխակերպման գործում և ներգրավելու դեռահասներին, երիտասարդներին, համայնքային ակտիվ խմբերին և հոգևորականներին սեռային հավասարության խթանմանն ուղղված միջոցառումներում:²

132. ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից դրամաշնորհային ֆինանսավորմամբ 2013-2015թթ. ընթացքում իրականացված պտղի սեռի ներարգանդային ընտրության կանխարգելման ծրագրերը առավելապես ուղղված են եղել հանրային արշավների, իրազեկման, կրթական, շահերի պաշտպանության և վարքագծի փոփոխությանն ուղղված հաղորդակցման քարոզարշավների իրականացմանը:³ Այսպես, «Այրել եմ ուզում» ծրագրի շրջանակներում բուհերի ուսանողները մեկ ամսվա ընթացքում իրազեկման քարոզարշավներ են անցկացրել սեռով պայմանավորված հղիության ընդհատման կանխարգելման նպատակով:

133. 2013թ. կինոռեժիսոր Ադրինե Գրիգորյանի կողմից ներկայացվել է «Բավական» ֆիլմը, որի միջոցով ևս մեկ անգամ բարձրաձայնվել

1 Հարցազրույց. Ծովինար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Միեր Մանուկյան, հաղորդակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016: ՄԱԲ-3՝ պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի շրջանակներում իրականացված միջոցառումների ամփոփ տեղեկանք:

2 Հարցազրույց. Սևան Պետրոսյան, Հոգատարություն հանուն հավասարության ծրագրի ղեկավար, Վորլդ Վիժն Հայաստան, 20.09.2016: Հոգատարություն հանուն հավասարության ծրագրի համառոտ տեղեկանք:

3 Հարցազրույց. Արուսյակ Պողոսյան, Ծրագրերի իրականացման ծառայության ղեկավար, Հայաստանի երիտասարդական հիմնադրամ, 24.09.2016: Հե-3՝ վերարտադրողական առողջության և պտղի սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման կանխարգելման ծրագրերի ամփոփ տեղեկանք:

Է Հայաստանում հղիության արհեստական ընդհատման և աղջիկ երեխայի հավասար արժևորման կարևորության թեման:¹

134. Ընդհանուր առմամբ, փորձագիտական հարցազրույցների արդյունքները և ծրագրային հաշվետվությունների ուսումնասիրությունը վկայում են, որ տարբեր ծրագրերի շրջանակներում իրականացված իրազեկման լայնածավալ շարունակական աշխատանքները հիմնականում ապահովել են պետական ծրագրով նախատեսված՝ պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատման վտանգավոր հետևանքների վերաբերյալ բնակչության տեղեկացվածության և իրավագիտակցության բարձրացման և համակարգային կանխարգելիչ միջոցառումների կատարումը՝ որոշ դեպքերում նույնիսկ գերակատարելով ծրագրային պլանով նախատեսված միջոցառումների քանակը և ծածկույթը:² Փորձագիտական հարցազրույցների մասնակիցների հավաստմամբ՝ հանրային լայնածավալ իրազեկման և կրթական միջոցառումների բարձր արդյունավետությունը և ժամանակային խտությունը թիրախ և շահառու խմբերի շրջանում երեխայի սեռի խտրական ընտրության երևույթի հանդեպ ընկալումների, վերաբերմունքի և շատ դեպքերում վարքագծային դրական փոփոխությունների հիմնական գործոնն են:³

135. Պետական ծրագրի հիմնական բաղադրիչների և միջոցառումների վերլուծության, ԵՄ աջակցությամբ գործընկեր կազմակերպությունների իրականացրած միջոցառումների ուսումնասիրության, միջազգային և հասարակական կազմակերպությունների ծրագրերի և փորձագիտական հարցազրույցների արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման հանրային քաղաքականությունը, և, մասնավորապես, կրթական և իրազեկման միջոցառումները աստիճանաբար տեղափոխում են ուղերձների շեշտադրումը սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումից դեպի հասարակության մեջ աղջիկ երեխայի արժեքի բարձրացում, սեռով պայմանավորված խտրականության բացառում, ընտանիքներ-

1 Հարցազրույցներ. Արուսյակ Պողոսյան, Ծրագրերի իրականացման ծառայության ղեկավար, Հայաստանի երիտասարդական հիմնադրամ, 24.09.2016: ՀԵՀ՝ վերաբարտադրողական առողջության և պտղի սեռով պայմանավորված հղիությունների արհեստական ընդհատման կանխարգելման ծրագրերի ամփոփ տեղեկանք: Սևան Պետրոսյան, Հոգատարություն հանուն հավասարության ծրագրի ղեկավար, Վորլդ Վիժն Հայաստան, 20.09.2016: <http://www.verkir.am/news/view/53175.html>:

2 Կարինե Սարիբեկյան, Մոր և մանկան առողջության վարչության պետ, ՀՀ առողջապահության նախարարություն, 23.09.2016:

3 Հարցազրույցներ. ծրագրի մասնակիցներ, 13.09.2016-22.09.2016 /գրականության ցանկ/:

րի կողմից աղջիկ երեխային դաստիարակելու «բեռի» ընկալման փոփոխություն, ինչի արդյունքում ակնկալվում է հասնել տղա երեխային հավասար՝ աղջիկ երեխայի արժևորմանը, ինչը կարող է նպաստել առանց բժշկական ցուցման երեխայի սեռի կանխակալ ընտրության նվազմանը:

5.2. Ինստիտուցիոնալ համագործակցություն

136. Ստորև ներկայացված են պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարում ներգրավված կառույցների և կազմակերպությունների ինստիտուցիոնալ համագործակցության մի շարք ձևաչափերը, աշխատանքների համակարգումը և միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունները:
137. Այսպես, նպատակ ունենալով աջակցել ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի թիվ 23 արձանագրային որոշմամբ հաստատված *Ընդդեմ գենդերային բռնության սպառնալիքի ծրագրով* սահմանված միջոցառումների իրականացմանը, ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի թիվ 23 արձանագրային որոշմամբ հաստատված *Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրով* սահմանված միջոցառումների և գործողությունների իրականացմանը, ՀՀ կառավարության 2015թ. մարտի 26-ի թիվ 13 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած *Սեռի հատկանիշներով բռնության կանխարգելման 2015թ. միջոցառումների տարեկան ծրագրի* իրականացմանը, «Պտղի սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման համալիր միջոցառումների իրականացման մասին» ՀՀ վարչապետի 2015թ. ապրիլի 11-ի թիվ 02/14.7/5916-15 հանձնարարականի կատարմանը, ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. մայիսի 08-ի N1129-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015թ. մայիսի 13-ի N75-Ա/1 համատեղ հրամանով հաստատված «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագրի» իրականացմանը, ՀՀ ԱԼ-ը, ՀՀ ԱՄՀՆ-ը և ՄԶՄԿ-ն 2015թ. հունիսին ստորագրել են համագործակցության հուշագիր:

138. Փաստաթղթով կողմերն արտահայտել են իրենց պատրաստակամությունը՝ համագործակցել ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար»¹ ծրագրի շրջանակներում, որի գործողությունները մեծմասամբ ներառվել են «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման» պետական ծրագրում: ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել Հայաստանում երեխայի սեռի խտրական ընտրության մակարդակի նվազեցմանը: Ծրագրի արդյունքում ակնկալվում է հասնել պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների թվի կրճատման՝ առնվազն 10 տոկոսով, ինչպես նաև երեխայի սեռի խտրական ընտրության վերաբերյալ ՀՀ բնակչության գիտելիքների, վերաբերմունքի և ընկալումների դրական փոփոխությանը առնվազն 15%-ով:²

139. 2015թ. մայիսից մինչև 2016թ. հոկտեմբերը ծրագրի իրականացման ընթացքում գործողությունների փոխհամաձայնեցվածությունն ապահովելու նպատակով գործընկերները, ՄՉՄԿ գլխավորությամբ, իրականացրել են համակարգման 11 հանդիպում պետական, հասարակական և միջազգային շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ի լրումն, ծրագրի ռազմավարական կառավարման հարցերի քննարկման նպատակով 2015թ. հուլիսին ստեղծվել է ծրագրի խորհրդատվական հանձնաժողով, որում ներգրավված են շահագրգիռ կողմերի 20-ից ավելի անդամներ, որոնք ներկայացնում են օրենսդիր և գործադիր իշխանությունները, քաղաքացիական հասարակության առավել ակտիվ կառույցները և միջազգային զարգացման գործընկերներին, այդ թվում՝ ՀՀ Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովներ, ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ԱՆ, ՀՀ ԿԳՆ, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան, ՀՀ հանրային խորհուրդ, ՀՀ ԱՎԾ, ՄԱԲՀ, ԵԱՀԿ, ՀԱԵ և այլն:³

1 Ծրագիրն իրականացվում է 2015 թ. մայիսի 1-ից Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի ՀԿ-ի կողմից՝ «Սթիջինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդ» կազմակերպության, («Սեյվ դը Չիլդրեն Նիդերլանդներ»), «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպության հետ համագործակցությամբ՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

2 «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր: <http://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=1089>.

3 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ զեկույց 01/05/2015-30/04/2016:

140. Ծրագրի հիմնական գործիքներից մեկը «Տեղական մասնակցության և ոչ-խտրականության» փորձի և գիտելիքի փոխանակման ցանցն է (Փոխցանց), որը գործում է Հայաստանի բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Այն ներառում է ավելի քան 400 անդամ՝ մարզերում պետական կառավարման տարածքային կառույցների, մարզպետարանների գեներալային հարցերով մշտական հանձնաժողովների, ինչպես նաև քաղհասարակության կառույցների ներկայացուցիչներ, իրավապաշտպաններ, տեղական բուհերի, լրատվամիջոցների, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ծառայություն մատուցողներ, այդ թվում՝ ծննդօգնության հաստատություններում առողջապահական ծառայություն տրամադրողներ, սոցիալական աշխատողներ, ոստիկանության ծառայողներ, զարգացման մասնագետներ, համայնքային գործիչներ:¹ Փոխցանցի աշխատանքային յուրաքանչյուր խմբում ներգրավված է միջինում շուրջ 37 անդամ՝ ծրագրով նախատեսված թիրախային 20-ի փոխարեն:

141. Փոխցանցի կազմը ձևավորվել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ ՄԴԶ, ԱԶԿ, ՄԿՀԽ, ՀՀ ԱՆ, ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՏԻՄ-երի, մարզային գեներալային հանձնաժողովների և այլ շահագրգիռ պետական կառույցների, ՀԿ-ների և զարգացման կազմակերպությունների կարծիքներն ու դիտարկումները հաշվի առնելով:

142. Փոխցանցը առանցքային նշանակություն ունի պտղի սեռով պայմանավորված հղիության արիեստական ընդհատման հիմնախնդրի վերաբերյալ շահերի պաշտպանության և տեղեկատվական-քարոզչական աշխատանքների ծավալման գործում, քանի որ հանդիսանում է երեխայի սեռի խտրական ընտրության խնդիրների վերաբերյալ տեղական համայնքներին արդյունավետ երկխոսության մեջ ներգրավելու հիմնական միջոցը:²

143. Ծրագրի իրականացման ընթացքում Փոխցանցը ընդլայնվել է՝ ներառելով քաղաքացիական ակտիվ խմբերի (ԶԱԽ), համայնքային ակտիվ խմբերի (ՀԱԽ) և ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհային միջոցներով իրազեկման և կարողությունների հզորացման աշխատանքներ իրականացնող

1 Նույն տեղում:

2 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ գեկույց 01/05/2015-30/04/2016: Հարցազրույցներ ծրագրի մասնակիցների հետ:

քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների:

144. Ծրագրի իրականացման ընթացքում ՄՉՄԿ-ն համակարգել է աշխատանքները հիմնախնդրի շուրջ միջոցառումներ իրականացնող այլ կազմակերպությունների հետ՝ հնարավոր կրկնորդումներից խուսափելու նպատակով:
145. ՄԱԲՀ և Վորլդ Վիժն Հայաստանը, իրենց ծրագրային գործողությունների իրականացման ընթացքում, սերտորեն համագործակցում են ՀՀ կառավարության, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, կրթական ու ամողջապահական հաստատությունների, կանանց և երեխաների պաշտպանության տեղական և մարզային մարմինների ու ցանցերի հետ:¹

5.3. Հանրային իրազեկման և շահերի պաշտպանության նպատակով կարողությունների հզորացում

146. Նորածինների սեռերի անհամամասնության նվազեցման և առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության կանխարգելման միջոցառումներում պետության կողմից կարևորվել է պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների, բժիշկների, համայնքային և կրոնական կազմակերպությունների կարողությունների հզորացումը: Մասնավորապես, պետական ծրագրի երրորդ բաղադրիչն անդրադառնում է պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների կանխարգելման համար ամողջապահական, սոցիալական, կրթական ծառայություններ մատուցողների և կազմակերպությունների կարողությունների հզորացմանը՝ հետազայում բնակչության շրջանում իրազեկման, քարոզչական և շահերի պաշտպանության աշխատանքներ իրականացնելու նպատակով:

¹ Հարցազրույցն. Սևան Պետրոսյան, Հոգատարություն հանուն հավասարության ծրագրի ղեկավար, Վորլդ Վիժն Հայաստան, 20.09.2016:

147. Բացի այդ, 2016թ. հունիսին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Վերարտադրողական ամողջության բարելավման ռազմավարության» և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրի «Վերարտադրողական ամողջության ոլորտի մասնագետների շարունակական ուսուցման ապահովում և բնակչության իրազեկվածության բարձրացում» ռազմավարական ուղղությունը նախատեսում է 2016-2017թթ. պտղի սեռով պայմանավորված աբորտների կանխարգելման նպատակով բարձրացնել բուժաշխատողների գիտելիքներն ու խորհրդատվական հմտությունները:¹

148. Ինչպես նշվել է, ծրագրով նախանշված և իրականացված միջոցառումների շրջանակներում նշանակալի տեղ են զբաղեցնում քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպություններին, իրավապաշտպաններին, պետական կառավարման մարմինների տարածքային կառույցներին, ՏԻՄ-երին և համայնքային գործիչներին առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության կանխարգելման համար անհրաժեշտ կարողություններով ապահովելը:

149. Մասնավորապես, տեղական մակարդակով խնդրի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման և հետևողական շահերի պաշտպանության աշխատանքների համար քաղաքացիական հասարակության տեղական կառույցներին, համայնքային գործիչներին և իշխանություններին անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների տրամադրման համար ՄՁՄԿ-ն մշակել է Փոխցանցի անդամների կարողությունների հզորացմանը ուղղված կրթական մոդուլներ, որոնք ներառում են պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության, գենդերային խտրականության, վերարտադրողական իրավունքներին, սեռով պայմանավորված բռնության և այդ երևույթների կանխարգելման գործիքներ, ինչպես նաև արդյունավետ հաղորդակցության, առաջնորդության, և շահերի պաշտպանության հմտությունների վերաբերյալ թեմատիկ նյութեր: 2015թ. մայիսից մինչև 2016թ. ապրիլը Փոխցանցի ավելի քան 270 անդամ ներգրավվել է Հայաստանի բոլոր մարզերում և Երևանում տեղի ունեցած երկօրյա դասընթացներին:²

1 «Վերարտադրողական ամողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում, N 24, 23.06.2016 թ.:

2 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ գեկույց 01/05/2015 – 30/04/2016: Հարցազրույցներ ծրագրի մասնակիցների հետ:

150. Ծրագրի առաջին տարում վերապատրաստման դասընթացներից հետո կատարված գնահատումը փաստում է, որ առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության վերաբերյալ դասընթացներին մասնակցած փոխցանցի անդամների մոտ առկա են գիտելիքների, մոտեցումների և ընկալումների էական փոփոխություններ: Մասնավորապես, դասընթացների գնահատման թերթիկների վերլուծությունը վկայում է, որ թիրախ խմբի գիտելիքները ավելացել են 50%՝ նախատեսված 15% փոխարեն: Համաձայն գնահատման տվյալների՝ արդյունավետ հաղորդակցման, առաջնորդության, բանակցությունների արվեստի և շահերի պաշտպանության հմտությունների զարգացման ամենազգալի աճը գրանցվել է Տավուշի մարզում (74%), իսկ ամենացածրը՝ Երևանում և Արագածոտնի մարզում (38%): Վերարտադրողականության, վերարտադրողական առողջության և իրավունքների, նորածինների սեռերի հարաբերակցության, գենդերային կարծրատիպերի և սեռով պայմանավորված առանց բժշկական ցուցման պտղի սեռի ընտրության մասին գիտելիքների ամենաբարձր աճ գրանցվել է Վայոց Ձորի մարզում (69%), իսկ ամենացածրը՝ Սյունիքում (23%):¹

151. Գնահատումն արձանագրում է, որ դասընթացի յուրաքանչյուր երրորդ մասնակից հաղորդում է գիտելիքների 30-40% աճի մասին: Մասնակիցների շուրջ 12%-ը գտնում է, որ վերապատրաստման դասընթացից հետո նշված թեմաների վերաբերյալ իրենց գիտելիքներն աճել են 20-30%-ով, և նույնքան մասնակից նշել է գիտելիքների և հմտություններ աճել են 40-50%-ով: Յուրաքանչյուր չորս մասնակցից մեկը փաստում է, որ իր գիտելիքների մակարդակն ավելացել է 50-100%-ով: Գնահատման թերթիկների միայն 1.8%-ն էլ արձանագրում գիտելիքների փոփոխության 20%-ից փոքր ցուցանիշ:

152. ՄՉՄԿ-ն աջակցել է նաև Փոխցանցի անդամներին և ծրագրի շրջանակներում դրամաշնորհառու մի շարք տեղական ՀԿ-ներին քարոզչական գործիքներ մշակելու գործում՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները: Այսպես, ՄՉՄԿ-ն բոլոր շահագրգիռ դերակատարներին աջակցել է մշակել և տարածել տղա երեխայի նախապատվության պատճառների և հետևանքների, ծնելիության ցածր մակարդակի, սելեկտիվ աբորտների և հարակից թեմաների մասին տեղեկատվական նյութեր: Բացի այդ, ՄՉՄԿ-ն պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման

¹ Երևան տեղում:

բարոզչական համապարփակ գործիքների մշակման նպատակով կազմակերպել է դասընթացներ և օնլայն խորհրդատվական հանդիպումներ առնականության և կանացիության կարծրատիպերի, գենդերային դերերի ու ակնկալիքների, պտղի սեռի խտրական ընտրության բացասական սոցիալական հետևանքների, ինչպես նաև վարքագծային փոփոխությանը միտված արդյունավետ հարողակցման միջոցների մասին:¹

153. ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի գործընկերների կողմից կարողությունների հզորացման դասընթացների են մասնակցել նաև ծրագրի շրջանակներում մարզերում և Երևանում ստեղծված քաղաքացիական ակտիվ խմբերը (ՔԱԽ), որոնք իրականացնում են իրազեկման, կրթական և շահերի պաշտպանության միջոցառումներ: Խմբերը ներառում են պետական կառավարման մարմինների տարածքային կառույցների ներկայացուցիչներ, ոստիկանության աշխատակիցներ, քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպություններ, ՔԿԱԳ աշխատակիցներ, համայնքային գործիչներ, առողջապահական ծառայություն տրամադրողներ, լրագրողներ և կրոնական կազմակերպությունների անդամներ: ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի գործընկերները ծրագրի առաջին տարում ստեղծել են 680 անդամ ունեցող 25 ՔԱԽ Հայաստանի 10 մարզի 22 համայնքներում և Երևանի 3 վարչական շրջաններում, որոնց ֆասիլիտատորները ընտրվել են ծրագրի Փոխցանցի անդամներից:²

154. ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում ՄԴԶ կողմից ՔԱԽ-ի անդամների կարողությունների հզորացման դասընթացներն անդրադարձել են վերարտադրողական առողջությանը և սեռի խտրական ընտրության խնդրին, վարքագծային փոփոխությանը միտված հաղորդակցման սկզբունքների, համայնքային մոբիլիզացիայի տեխնիկաների և այլ հարակից թեմաների:

155. Ծրագրի իրականացման առաջին տարում ՄԴԶ-ն ՔԱԽ-ի անդամների համար անցկացրել է կարողությունների հզորացման և խորհրդատվական 46 հանդիպում: ԱՉԿ ՀԿ իրականացրել է 36 հանդիպում Արարատի, Արագածոտնի, Արմավիրի վեց համայնքներում, ինչը ծրագրով նախատեսված 66 հանդիպումներ

1 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ գեկույց 01/05/2015 – 30/04/2016: Հարցազրույցներ ծրագրի մասնակիցների հետ:

2 Նույն տեղում:

րի կեսից ավելին է: ՄԿՅԽ ՅԿ իրականացրել է 45 հանդիպում Կոտայքի, Գեղարքունիքի, Լոռիի և Տավուշի ինը համայնքներում, և նախատեսում է 44 հանդիպում ծրագրի երկրորդ տարում: Հաջորդող հանդիպումների ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հասարակության մեջ կանանց դերի բարձրացումը, տղա և աղջիկ երեխաների նկատմամբ նույնական վերաբերմունքը, դրական ծնողավարությունը, համայնքների հետ աշխատանքի հմտությունների զարգացումը, միջոցառումների պլանավորման, իրականացման և գնահատման սկզբունքները և մոտեցումները: ¹

156. Բացի վերոնշյալ միջոցառումներից, 2015թ. հոկտեմբերին ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում ՄԴԶ-ն ՀՀ ԱՆ համագործակցությամբ իրականացրել է 11 սեմինար-դասընթաց առողջապահական ծառայություններ մատուցող 125 մասնագետների համար Մարտունի, Գավառ, Սևան, Ստեփանավան, Վանաձոր, Արթիկ, Գյումրի, Եղեգնաձոր, Վայք, Արվյան, Հրազդան համայնքներում: Դասընթացների թիրախ խմբերը, մասնավորապես, ներառել են հղի կանանց հետ բժշկական շփման առաջնային օղակ հանդիսացող նախաձննդյան խնամքի և ծննդօգնության հաստատությունների աշխատակիցների, ուլտրաձայնային հետազոտություն իրականացնող մասնագետների և գինեկոլոգների և վերաբերել են պտղի սեռը պարզելու համար գործարկվող բժշկական տեխնոլոգիաների էթիկական օգտագործմանը և խորհրդատվական հմտությունների բարելավմանը: Դասընթացների ժամանակ օգտագործվել են ՄԱԲՅ կողմից հրապարակված կլինիկական ուղեցույցները բուժաշխատողների համար: Դասընթացների ժամանակ օգտագործված տեղեկատվական, կրթական և հաղորդակցական նյութերը հաստատվել են ՀՀ ԱՆ կողմից:²

157. Բժիշկների և ուսուցիչների կարողությունների զարգացման դասընթացներ են կազմակերպել նաև ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհներով գործող և Փոխցանցի անդամ հանդիսացող մի շարք հասարակական կազմակերպություններ:³

1 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ զեկույց 01/05/2015 – 30/04/2016: Հարցազրույցներ ծրագրի մասնակիցների հետ:

2 Նույն տեղում:

3 Հարցազրույցներ. ծրագրի մասնակիցներ, 13.09.2016-22.09.2016 /գրականության ցանկ/:

161. Բայց և այնպես, հարցազրույցների մասնակիցները նշում են կարողությունների զարգացման և իրազեկման շարունակական միջոցառումների անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով տղաների սոցիալ-մշակութային նախապատվությամբ պատճառաբանված պտղի սեռի ընտրության դեռևս գոյություն ունեցող պահանջարկը հասարակությունում, երեխայի սեռը որոշելու մատչելի տեխնոլոգիաների ու հետազոտությունների հասանելիությունը, ինչպես նաև երկրում ցածր ծնելիության շարունակական տենդենցը: Չրուցակիցները հատկապես կարևորել են բժիշկների վերապատրաստման և կարողությունների հզորացման աշխատանքները, քանի որ վերջիններիս մոտ որոշ դեպքերում դեռևս ամկա է թերահավատ և մերժողական մոտեցում Հայաստանում սելեկտիվ աբորտների խնդրի առկայության վերաբերյալ:¹

162. ՄԱԲՀ կողմից Հայաստանում հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների հիմնախնդրի վերհանման և այն հաղթահարելու միջոցառումների իրականացման ընթացքում կարողությունների հզորացման աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարության, ՀՀ ԱԺ, հասարակական սեկտորի ներկայացուցիչների, բուժծառայություններ մատուցողների, Հայ Առաքելական Եկեղեցու և կրոնական կազմակերպությունների, ուսանողության հետ՝ պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման, գենդերային հավասարության հաստատման, կանանց հնարավորությունների և իրավասությունների ընդլայնման, ինչպես նաև գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի վերաբերյալ:²

163. Նմանապես, Վորլդ Վիժն Հայաստանի կողմից Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի, Շիրակի մարզերում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում իրականացվող «Հոգատարություն հանուն հավասարության» ծրագիրը, նպատակ ունենալով փոխակերպել հայաստանյան հասարակությունում ամկա կանանց ու աղջիկներին վնասող կարծրատիպային վերաբերմունքն ու վարքագիծը և նպաստել աղջիկների ու տղաների հավասար արժևորմանը, իր համայնքային մակարդակով աշխատանքներում ընդգրկում է տղամարդկանց, կանանց և երի-

1 Հարցազրույցներ. «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպություն, 14.09.2016: «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա», Ծրագրի շրջանակում աշխատանքների ներկայացում, 07.10.2016:

2 Հարցազրույց. Եովիմար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Միեր Մանուկյան, հաղորդակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016:

158. Թեպետ ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի նախագծա-
յին կառուցվածքի, իրականացման գործընթացի և արձանագրված
արդյունքների համապարփակ և համակարգված գնահատում
դեռևս չի արվել, սույն ծրագրի մշտադիտարկման գեկույցի փոր-
ձագիտական հարցազրույցների մասնակիցների մեծամասնությ-
ունը ընդգծում է ծրագրի արդյունավետությունը և նշում վերջի-
նիս թիրախ և շահառու խմբերի շրջանում պտղի սեռի խտրական
ընտրության վերաբերյալ գիտելիքների, վերաբերմունքի, ընկա-
լումների և որոշ դեպքերում վարքագծային դրական փոփոխույթ-
յունների մասին, ինչի արդյունքում շատ դեպքերում կանխվել են
պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդ-
հատման որոշումներ:¹

159. Այսպես, բացի վերոնշյալ կարողությունների հզորացման միջոցա-
ռումների միջանկյալ գնահատումներով արձանագրված գիտելիք-
ների և հմտությունների տոկոսային աճից, հարցազրույցներին
մասնակցած Փոխցանցի անդամները, ԲԱԽ ֆասիլիտատորները
և ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհով գործող ՀԿ-նե-
րի ներկայացուցիչները նշում են անմիջապես իրենց մոտ խնդրի
վերաբերյալ արմատացած «տղայակենտրոն» կարծրատիպային
մտածելակերպի ու մոտեցումների դրական փոփոխության մա-
սին:²

160. Չրուցակիցները հատկապես կարևորում են բժիշկների, ուսուցիչ-
ների, երիտասարդ զույգերի և հոգևորականների հետ կարողութ-
յունների հզորացման և խնդրի վերաբերյալ իրազեկման աշխա-
տանքը, որի արդյունքում, իրենց դիտարկումներով, վերջիններիս
մոտ նկատելի են դրական փոխակերպումներ՝ կապված հասարա-
կությունում կանանց դերի բարձրացման, գենդերային հավասա-
րության, պտղի սեռի խտրական ընտրության հարցի հետ, ինչը,
զրուցակիցների հավաստմամբ, վերջին շրջանում հասարակութ-
յան կողմից սկսել է դիտարկվել որպես մերժելի երևույթ:³

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում:

3 Հարցազրույցներ, ծրագրի մասնակիցներ, /գրականության ցանկ/: Կարինե Սարիբեկյան, Մոր և մանկան ամողջության վարչության պետ, 23.09.2016, Գայանե Ավագյան, Մոր և մանկան ամողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական ամողջության պահպանման բաժնի պետ, ՀՀ ամողջապահության նախարարություն, 26.09.2016: Ծովինար Հարությունյան, ծրագրերի պատասխանատու, Մեեր Մանուկյան, հաղորդակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ, 13.09.2016:

տասարդներին, և կարևորում է հատկապես համայնքային սոցիալական աշխատողների դերակատարությունը ընտանիքներում սեռով պայմանավորված բռնությունների և պտղի սեռի ընտրության դեպքերի վաղ հայտնաբերման ու կանխարգելման գործում: Այդ նպատակով, բացի զույգերի և ընտանիքների հետ աշխատանքից, ծրագրի շրջանակներում 40 սոցիալական աշխատողների կարողությունների հզորացման և վերապատրաստման աշխատանքներ են նախատեսված՝ սեռով պայմանավորված բռնության դեպքերի վաղ հայտնաբերման, կանխարգելման և հասցեագրման ուղղությամբ:¹

164. Սույն մշտադիտարկման զեկույցի փորձագիտական հարցազրույցների և հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ընդհանուր առմամբ պետական ծրագրի 3-րդ բաղադրիչով նախատեսված՝ առողջապահական, սոցիալական և կրթական ծառայություններ մատուցողների և կազմակերպությունների կարողությունների հզորացման գործողությունների շրջանակում անցկացված միջոցառումները հիմնականում համապատասխանում են այն պարտավորությունների կատարմանը, որոնք պետությունը և ծրագրի գործընկեր կազմակերպությունները ստանձնել են ծրագրի հաստատումով: Ծրագրի իրականացման առաջին տարում պետական և ոչ պետական համակատարող գործընկերների կողմից իրականացված աշխատանքների շրջանակում ստեղծվել են այն անհրաժեշտ հիմքերը, որոնք հաջորդ ծրագրային փուլում կարող են ստեղծել ներգործուն միջավայր ուղղորդված ոլորտային բաղաբականության իրականացման համար:

¹ Հարցազրույց. Սևան Պետրոսյան, Հոգատարություն հանուն հավասարության ծրագրի ղեկավար, Կորլոյ Վիժն Հայաստան, 20.09.2016: Հոգատարություն հանուն հավասարության ծրագրի համառոտ տեղեկանք:

6. Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման հանրային քաղաքականության վրա ազդեցություն

6.1. Քաղաքականության հետազոտություններ, վերլուծություն, առաջարկություններ

165. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017թթ. պետական ծրագրի առաջին բաղադրիչը անդրադառնում է երեխայի սեռի ներարգանդային ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված քաղաքականության վերլուծության, քաղաքականության, իրավական կարգավորման և ինստիտուցիոնալ բարեփոխումների առաջարկությունների փաթեթի մշակմանը:¹

166. Մասնավորապես, պետական ծրագրի 1.1 ենթակետը նախատեսում է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված Հայաստանի Հանրապետությունում իրականացվող քաղաքականության վե-

¹ 2015թ. մայիսին ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների կողմից N 1129-Վ և N 75-Վ/1 համատեղ հրամանով հաստատված՝ «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագիր և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույց», որում ներառվել են Եվրոպական միության ֆինանսավորմամբ և «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ, «Սթիթչինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդ» կազմակերպության, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից 2015թ. մայիսի 1-ից իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի գործողությունները:

րաբերյալ ուսումնասիրությունների իրականացում: Այդ առումով, նշյալ պետական ծրագրի շրջանակներում սույն մշտադիտարկման ժամանակահատվածում կատարվել են երկու համապարփակ հետազոտություն առողջապահության և սոցիալական ոլորտներում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության վերաբերյալ:

167. Մասնավորապես, 2016թ. ՄՉՄԿ-ն իրականացրել է Առողջապահության ոլորտում սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և գործող պրակտիկայի վերլուծություն:¹ Սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման վրա առողջապահության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական քաղաքականության ազդեցությունը գնահատելու նպատակով հետազոտության շրջանակներում իրականացվել է առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության սահմանափակման միջազգային փորձի և մասնագիտական էթիկայի ուսումնասիրություն, ինչպես նաև առողջապահության ոլորտի իրավական կարգավորման, պետական քաղաքականության ու ծրագրերի վերլուծություն, ներկայացվել են եզրակացություններ և առաջարկություններ:

168. «Սոցիալական ոլորտում սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և պրակտիկաների վերլուծություն» հետազոտության մեջ սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման վրա սոցիալական ոլորտում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական քաղաքականության ազդեցությունը գնահատելու նպատակով կիրառվել են սոցիալական ոլորտի իրավական ակտերի, պետական քաղաքականությունը սահմանող ռազմավարական փաստաթղթերի ու ազգային ծրագրերի վերլուծությունը, աշխատուժում կանանց մասնակցության և կանանց զբաղվածության ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունների ընդլայնման միջազգային փորձի ուսումնասիրությունը, իրավիճակի և միտումների ամփոփումը՝ ոլորտում իրականացված հետազոտությունների զեկույցների և այլ հրապարակումների վերլուծության միջոցով: Ուսումնասիրության վերջում տրվել են ամփոփիչ եզրակացություններ և առաջարկություններ:²

1 <http://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=1104>

2 <http://ichd.org/?laid=2&com=module&module=static&id=1095>

169. ՄՉՄԿ-ի վերոնշյալ առողջապահական և սոցիալական ոլորտներին վերաբերող երկու ծավալուն հետազոտությունների եզրահանգումներն ու առաջարկությունները հետագայում օգտագործվել են ՀՀ ԱՆ և ՀՀ ԱՍՀՆ համապատասխան գերատեսչությունների կողմից պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված փաստաթղթերի մշակման ընթացքում:¹
170. Մասնավորապես, ՄՉՄԿ «Սոցիալական ոլորտում սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և պրակտիկաների վերլուծություն» հետազոտության արդյունքում մշակված մի շարք առաջարկություններ ՀՀ ԱՍՀՆ կողմից ներկայացվել են ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նոր ռազմավարության և միջոցառումների ծրագրի մեջ ընդգրկվելու համար:²
171. Սույն մշտադիտարկման գեկույցը նույնպես հանդիսանում է ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի առաջին բաղադրիչով նախատեսված՝ ՀՀ-ում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված քաղաքականության ուսումնասիրությունների կատարմանը ուղղված միջոցառում: Բացի այդ, ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում 2016-2017թթ նախատեսվում է իրականացնել հետազոտություն՝ հանրապետությունում կանանց վերատադրողական վարքագծի, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների, ծնող պատճառների և առանձնահատկությունների վերաբերյալ:
172. Ի լրումն վերոնշյալ հետազոտությունների, 2015թ. օգոստոսին ՀՀ ԱՆ կողմից հաստատվել է կանանց վերարտադրողական վարքագծի, հղիության արհեստական ընդհատումների, փոքր թվով երեխաներ ունենալու պատճառների վերհանման հետազոտական ծրագիրը, որը իրականացվել է ի կատարումն ՀՀ կառավարության 26.07.2007թ. «Վերարտադրողական առողջության բարելավման 2007-2015 թվականների ազգային ծրագրին ու գործողություն-

1 Հարցազրույցներ. Կարինե Սարիբեկյան, Մոր և մանկան առողջության վարչության պետ, ՀՀ առողջապահության նախարարություն, 23.09.2016, Արմենուկի Թանաշյան, Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 26.09.2016:

2 Հարցազրույց. Արմենուկի Թանաշյան, Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 26.09.2016:

ների ժամանակացույցին հավանություն տալու մասին» թիվ 29 արձանագրային որոշման և ՀՀ առողջապահության նախարարի 2015թ. մայիսի 08-ի N1129-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015թ. մայիսի 13-ի «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017 թվականների ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումները հաստատելու մասին» N75-Ա/1 համատեղ հրամանի 1.4 կետի:¹

173. Քաղաքականության, իրավական կարգավորման և ինստիտուցիոնալ բարեփոխումների առաջարկությունների վերաբերյալ հետազոտությունների շարքին կարելի է հավելել նաև 2015թ. լույս տեսած Մոնիկա Դաս Գուպտայի «Հարավային Կովկասի «անհետացած աղջիկները». միտումներ, հնարավոր պատճառներ և քաղաքականության տարբերակներ» տարածաշրջանային հետազոտությունը, որը անդրադառնում է Հարավային Կովկասում նորածինների սեռերի անհամամասնության ցուցանիշներին, ծնող պատճառներին, ներառյալ սոցիալական և տնտեսական, միգրացիոն, աշխարհաբաղաբական/պատերազմական գործոնները, և ներկայացնում է քաղաքականության և ինստիտուցիոնալ բարեփոխումների տարբերակներ:²

174. Բացի այդ, պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության մասին հետազոտությունների թվին կարելի է դասել 2015թ. Նորա Դադվիկի «Չծնված աղջիկներ» Հարավային Կովկասում. տեղական ընկալումներ և առաջարկվող լուծումներ» հետազոտությունը, որը ամփոփում է խնդրի մասին որակական հետազոտությունների արդյունքները, ներառյալ՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում պտղի սեռի խտրական ընտրությանը նպաստող գործոնները, դրանց փոփոխության միտումները, նորածինների սեռերի խախտված համամասնության մասին հասարակական մոտեցումներն ու ընկալումները և խնդրի կանխարգելման քաղաքականության առաջարկությունները:³

1 «Կանանց վերարտադրողական վարքագծի, հղիության արհեստական ընդհատումների, փոքր թվով երեխաներ ունենալու պատճառների հետազոտական ծրագրի հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրաման, No 2138-Ա, ընդունվել է՝ 10.08.2015:

2 Das Gupta, Monica. 2015. "Missing girls" in the south Caucasus countries: trends, possible causes, and policy options. Policy Research working paper; no. WPS 7236. Washington, D.C.: World Bank Group. <http://documents.worldbank.org/curated/en/233691467992010518/Missing-girls-in-the-south-Caucasus-countries-trends-possible-causes-and-policy-options>.

3 Dudwick, Nora. 2015. "Missing Women" in the South Caucasus: Local perceptions and proposed solutions.

175. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման պետական ծրագրի 1.2 բաղադրիչով նախատեսվել է շահագրգիռ գերատեսչությունների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների և փորձագետների մասնակցությամբ իրականացնել պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման վերաբերյալ 6 կյուր-սեղան քննարկում և մշակել բաղաբականության առաջարկությունների համառոտագրեր:

176. Այդ առումով, առաջին տարում ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում ՄՉՄԿ-ն կազմակերպել է շահագրգիռ կողմերի մասնակցությամբ չորս կյուր սեղան քննարկում՝ նվիրված նախաձեռնողյան փուլում պտղի սեռի ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պատճառների և հետևանքների, երևույթի կանխարգելման ուղիների և խտրականության դեմ պայքարի միջազգային և հայաստանյան լավագույն փորձի և քաղաքականության նախաձեռնությունների քննարկմանը: Քննարկումներին մասնակցել են անկախ վերլուծաբաններ, մարդու վերարտադրողական առողջության և իրավունքների պահպանման ոլորտում լիազորություններ և գործառույթներ ունեցող պետական կառույցների, ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և զարգացման միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

177. Առաջին քննարկումը, մասնավորապես, անդրադարձել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, որոնք հիմք են ծառայել ՄՉՄԿ-ին՝ մշակելու և տարածելու քաղաքականության մասին առաջարկներ՝ համառոտագրեր, որոնք ներառում են երեխայի սեռի ընտրության իրավական կարգավորման խնդիրները, պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման գործիքաչափը առողջապահական համակարգում, պետական քաղաքականության տարրերի ներդաշնակեցումը և նոր գործիքների մշակումը, ինչպես նաև առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության էթիկայի հարցերը:

178. Երկրորդ կլոր սեղանին քննարկվել են ծնելիության աճին նպաստող և կանանց զբաղվածության ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունների ընդլայնմանը միտված՝ սոցիալական ոլորտում ՀՀ-ում իրականացվող պետական քաղաքականության հիմնական գործիքները: Դրանք են՝ ծնելիության խթանմանը միտված այլընտրանքային հանրային ծրագրերը, ծնելիությանը՝ առանձին տարիքային խմբերի մասնակցության կրճատման անբարենպաստ միտումները մեղմելու քաղաքականության հնարավոր ուղիները, ինչպես նաև սոցիալական նպատակային ծրագրերի շրջանակներում թիրախ խմբերին տրամադրվող վարկային միջոցների սուբսիդավորման և վերաֆինանսավորման պրակտիկ խնդիրները և դրանց անբավարար ազդեցությունը ծնելիության մակարդակի բարձրացման վրա: Այս առումով, քննարկումը նպաստել է ծնելիության խթանման պետական քաղաքականության և դրա թիրախների և գործիքների վերանայմանը՝ հաշվի առնելու պտղի սեռի խտրական ընտրության խորքային պատճառները:¹

179. ՄՉՄԿ-ի կողմից կազմակերպված երրորդ կլոր-սեղան քննարկումը անդրադարձել է ծնելիության նվազման միտումները մեղմելուն ուղղված քաղաքականության տարրերին, աշխատուժում կանանց մասնակցության և կանանց զբաղվածությունն ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունների ընդլայնման հրամայականին, մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատող կանանց պարբերաբար դրամական օգնության տրամադրման խնդիրներին, պետական նպաստների համակարգի՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված տարրերին, ինչպես նաև տարբեր ոլորտներում վարվող քաղաքականությունների մրցակցային բնույթին և դրանց փոխհամաձայնեցման անհրաժեշտությանը:

180. ՄՉՄԿ-ի կողմից նախաձեռնած չորրորդ հանդիպմանը քննարկվել են եկեղեցու կարևոր դերակատարությունը և ներգործության ուղիները պտղի սեռի խտրական ընտրության ամբողջական կարգավորման հարցում: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել համայնքներում աղջիկ երեխայի արժևորման խնդիրներում հոգևոր ծառայողի ներգրավման հարցերին, գործնական ուղեցույցների մշակման խնդիրներին, խնամատարության, հոգաբարձության և երեխայի պաշտպանության համայնքային օղակներում եկեղեցու

¹ Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ զեկույց 01/05/2015 - 30/04/2016:

ցու սպասավորների ներգրավմանը, սեռերի միջև հավասարության, փոխլրացման և հավասարապատվության սկզբունքի քարոզին, գույգերի հետ հետևողական աշխատանքի, շարունակական խնամքի և հոգածության հարցերին՝ պտղի խտրական ընտրության կանխարգելման լույսի ներքո:¹

181. Վերոնշյալ աշխատանքային հանդիպումների արդյունքները ամփոփվել են ՄՉՄԿ-ի կողմից մշակված հինգ համառոտագրերում, որոնք տրամադրվել են թիրախային լսարանին, ինչպես նաև լայնորեն տարածվել սոցիալական լրատվամիջոցների հարթակների միջոցով: Մասնավորապես, ՄՉՄԿ-ն մշակել է «Երեխայի սեռի ընտրության իրավական կարգավորման խնդիրները», «Առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության Էթիկայի հարցեր», «Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման գործիքները առողջապահական համակարգում. փաստերի վրա հիմնված իրազեկում և խորհրդատվություն», «Պետական քաղաքականության տարրերի ներդաշնակեցումը», «Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության նոր գործիքներ. երկուսը մեկում» համառոտագրերը:²

182. Այս առումով, պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման պետական ծրագիրը ԵՄ աջակցության և գործընկեր կազմակերպությունների շնորհիվ նպաստել է պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման վերաբերյալ պետական կառույցների, հասարակական և զարգացման միջազգային կազմակերպությունների միջև քաղաքականության մասին երկխոսության ծավալմանը: Այն թույլ է տվել երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության կարգավորումներում ի հայտ բերել առկա բացերը և տեղական ու միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա կատարված եզրահանգումների ու առաջարկների միջոցով որոշակիորեն ազդել խնդիրը կարգավորող քաղաքականության տարրերի վրա՝ քաղաքականության ազդեցությունը բազմապատկելու նպատակով:

183. Այսպես, համառոտագրերում տեղ գտած առաջարկություններից մի քանիսը ստացել են ՀՀ կառավարության հավանությունը և ներառվել պետական քաղաքականության մի շարք գործիքներում: Մասնավորապես, մինչև երկու տարեկան երեխա խնամող

1 Նույն տեղում:

2 <http://ichd.org/?laid=2&com=module&module=menu&id=21>:

աշխատող մայրերին երեխայի 6 ամսականը լրանալուց հետո՝ ամսական նվազագույն աշխատավարձի չափով նպաստ տրամադրելու մասին առաջարկը, որը միտված է կանանց զբաղվածության ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունների ընդլայնմանը, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից և ներառվել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թվականների ազգային ծրագրում և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկում:¹ ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած մեկ այլ առաջարկ վերաբերում է երիտասարդ ընտանիքներին՝ մատչելի բնակարաններով ապահովելու ծրագրի դրույթների վերանայման և ծրագրի թիրախայնության բարելավման անհրաժեշտությանը:²

6.2. Ինստիտուցիոնալ համագործակցություն

184. Սույն մշտադիտարկման զեկուլյցի փորձագիտական հարցազրույցների արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ պտղի սեռի ներարգանդային ընտրության կանխարգելման ծրագրերի ու քաղաքականությունների համակարգման և փոխգործակցության հիմնական հարթակը հանդիսացել են ՄՉՄԿ-ի նախաձեռնած աշխատանքային հանդիպումները, աշխատաժողովները, և ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի ընդհանուր կառավարման հարցերի քննարկման նպատակով ՄՉՄԿ-ի կողմից ստեղծված ծրագրի խորհրդատվական հանձնաժողովի հանդիպումները: Հանձնաժողովում ներգրավված են 21 շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ ՀՀ կառավարությունից, քաղաքացիական հասարակությունից և միջազգային զարգացման կազմակերպություններից՝ ներառյալ ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ԱՆ, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ԱՎԾ և ՄԱԲՀ:

185. ՀՀ ԱՆ և ՀՀ ԱՍՀՆ կողմից 2015թ. մայիսին համատեղ հրամանով հաստատված պետական ծրագրի իրականացման նպատակով

1 «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թվականների ազգային ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ: http://www.mlsa.am/forum/forum.php?sec=conference&forum_id=-2&topic_id=828:

2 Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ զեկուլյց 01/05/2015 - 30/04/2016:

ստեղծվել է աշխատանքային խումբ, որի հանդիպումները, սակայն, հարցազրույցների մասնակիցների հավաստմամբ, չեն կրել պարբերական բնույթ, և դրանց անցկացման վերաբերյալ չկան արձանագրություններ կամ եզրափակիչ փաստաթղթեր:

186. Պտղի սեռի ներարգանդային ընտրության կանխարգելմանն ուղղված քաղաքականության մշակման և վերլուծության նպատակով 2015թ. ՄՉՄԿ-ն ստեղծել է քաղաքականության վերլուծության և խորհրդատվության խումբ, որում ներգրավված են պտղի սեռի ներարգանդային ընտրության կանխարգելման քաղաքականության փորձագետներ և վերլուծաբաններ: Խմբի հիմնական գործառնություններից է մշակել և ներկայացնել քաղաքականության առաջարկներ և նախաձեռնություններ, որոնք ուղղված են հասարակության մեջ աղջիկ երեխայի արժեքը բարձրացնելուն: ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի առաջին տարում փորձագիտական խումբը, ՄՉՄԿ-ի գլխավորությամբ, կատարել է երկու համապարփակ հետազոտություն՝ առողջապահության և սոցիալական ոլորտներում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության վերաբերյալ:¹

187. Բացի այդ, համաձայն սույն մշտադիտարկման զեկույցի պատրաստման նպատակով անցկացված փորձագիտական հարցազրույցների արդյունքների՝ ՄՉՄԿ-ն հանդիսացել է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման պետական ծրագրի իրականացման, ձեռքբերումների և մարտահրավերների մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը և, կրկնորոշումներից խուսափելու նպատակով, պարբերաբար տրամադրել է տեղեկատվություն կատարվելիք գործողությունների մասին պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման ոլորտում աշխատանքներ ծավալող այլ կազմակերպություններին:

188. Աշխատանքները պարբերաբար համակարգվել են հիմնական շահագրգիռ կառույցների հետ, այդ թվում՝ ՄԱԲՀ-ի, Վորլդ Վիժն Հայաստանի, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ: ՄԱԲՀ-ի հետ համագործակցության ընթացքում, մասնավորապես, պայմանավորվածություն է ձեռք բերվել և՛ պետական, և՛ ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրերի հանրային իրագրկման աշխատանքներում օգտագործել ՄԱԲՀ կողմից ստեղծված «Նե» աղջիկ

¹ Նույն տեղում:

երեխայի խորհրդանիշը, ինչպես նաև կարողությունների հզորացման միջոցառումներում օգտագործել վերջինիս կողմից մշակած գինեկոլոգների և մանկաբարձների համար նախատեսված թրեյնինգային նյութերը:¹

6.3. Հանրային քաղաքականության մասին իրազեկման աշխատանքներ

189. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017թթ. կանխարգելման պետական ծրագրի շրջանակներում նախատեսվել է պատրաստել և լրատվական ու սոցիալական մեդիայի հարթակներում տեղադրել պտղի սեռի ներարգանդային ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված ՀՀ-ում իրականացվող քաղաքականության վերաբերյալ չորս տեսահոլովակ:

190. ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի առաջին տարում ՄՉՄԿ-ն պատրաստել է երկու տեսահոլովակ՝ խնդրի իրավական կարգավորումների, ծրագրի հիմնական գործողությունների, ձեռքբերումների ու հետագա աշխատանքների մասին:

191. Տեսահոլովակները, մասնավորապես, ամփոփում են ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի մասնակիցների ու պետական և ոչ պետական գործընկերների դիտարկումները համայնքներում ծրագրի իրականացման մեկ տարվա վերաբերյալ: Դրանք ամփոփում են նրանց մեկամյա փորձառությունը, հաջողությունները, խոչընդոտները ու դրանք հաղթահարելու փորձերը և ծառայում որպես «ներքևից վերև» սկզբունքով շահերի պաշտպանության, պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում քաղիասարակության մասնակցությունը խթանող գործիք:

192. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017թթ. պետական ծրագրի, և դրա միջոցառումների իրականացումը մեծապես ապահովող ԵՄ

¹ Նույն տեղում:

աջակցությամբ իրականացվող ծրագրի ուսումնասիրությունը, մասնավորապես, առաջին բաղադրիչով նախատեսված՝ երեխայի սեռի ներարգանդային ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելմանն ուղղված քաղաքականության վերլուծության, իրավական կարգավորման և ինստիտուցիոնալ բարեփոխումների առաջարկությունների փաթեթների մշակմանն ուղղված և կատարված միջոցառումների ու դրանց արդյունքների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խնդրի կարգավորման ուղղությամբ վարվող պետական քաղաքականությունը կարևորում է երևույթի պատճառներին ազդող, կանխարգելիչ բնույթի գործողությունների իրականացումը:

193. Այսպես, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017թթ. պետական ծրագրի երեք խնդիրներից երկուսը անդրադառնում են հասարակության մեջ աղջիկ երեխայի արժևորման և հասարակության մեջ կանանց դերի բարձրացման և կանանց ու տղամարդկանց հավասար արժևորման խթանման անհրաժեշտությանը:¹

194. Համապատասխանաբար, ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում կարողությունների հզորացման, իրազեկման և քաղաքականության վերլուծության աշխատանքները գերազանցապես ուղղված են աղջիկ երեխայի արժևորմանը և հասարակությունում կնոջ դերի բարձրացմանը, խտրականությունը սնող կարծրատիպերի փոխակերպմանը և այդ փոխակերպումներին հասնելու համար անհրաժեշտ մարդկային կապիտալի և ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև պտղի սեռի խտրական ընտրության երևույթի ու դրա պատճառների վերաբերյալ ավելի մեծ գիտելիքների ձեռքբերմանը:²

1 2015թ. մայիսի 33 առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների կողմից N 1129-Ա և N 75-Ա/1 համատեղ հրամանով հաստատված՝ «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների 2015-2017 թվականների կանխարգելման ծրագիր և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույց», որում ներառվել են Եվրոպական միության ֆինանսավորմամբ և «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ, «Սթիջինգ Սեյվ դը Չիլդրեն Նեդերլանդ» կազմակերպության, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ և «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից 2015թ. մայիսի 1-ից իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի գործողությունները:

2 Հարցազրույցներ. Ծրագրի մասնակիցներ, 13.09.2016-22.09.2016 /գրականության ցանկ/: Մարդկային զարգացման միջազգային կենտրոն. «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիր, միջանկյալ զեկույց 01/05/2015 – 30/04/2016: ՄՁՄԿ՝ պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության հետազոտություններ և առաջարկներ - <http://ichd.org/?aid=2&com=module&module=menu&id=8>:

195. Քաղաքականության վերլուծության ու առաջարկների մշակման տեսանկյունից՝ ՄՉՄԿ-ի հետազոտություններում ու համառոտագրերում ներկայացված առաջարկները առավելապես միտված են բարձրացնելու կանանց դերը հասարակությունում, խթանելու աշխատուժում կանանց մասնակցությունը, նպաստելու համայնքների բարեկեցությանը, բարձրացնելու բնակչության շրջանում բժշկահիգիենիկ և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման բացասական հետևանքների մասին գիտելիքների մակարդակը, բժշկական գործունեության հսկողությունատրող ընթացակարգերում պտղի սեռի խտրական ընտրությունը նվազեցնելու մեխանիզմների մշակմանը և ներդրմանը, խտրականության դեմ պայքարի քաղաքականության նոր գործիքների մշակմանը ու ներդրմանը, և դրանց հետևողական կիրարկմանը ու օրենսդրության պահանջների կատարման հանդեպ վերահսկողությանը:¹

196. Բացի այդ, ՀՀ կառավարության «Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությունը» և 2016-2020թթ. գործողությունների ծրագիրը, պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման կոնտեքստում նախատեսում են աղջիկ երեխայի արժևորման խթանմանը և բուժաշխատողների գիտելիքների ու խորհրդատվական հմտությունների բարձրացմանն ուղղված գործողություններ:²

197. Օրենսդրական կարգավորումից բացի, պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների բացասական հետևանքների մասին հանրային իրազեկման և կրթական աշխատանքների անհրաժեշտությանն անդրադառնում է նաև 2014թ. փետրվարին ՀՀ վարչապետի կողմից հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը:³ Ծնելիության ցածր մակարդակով պայմանավորված մարտահրավերների հաղթահարման են

1 <http://chd.org/?aid=26&com=module&module=menu&id=8>:

2 «Վերարտադրողական առողջության բարելավման ռազմավարությանը և 2016-2020 թվականների գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում, N 24, 23.06.2016թ.:

3 «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, N 303-Ն, ընդունվել է՝ 27.02.2014, ուժի մեջ է մտել՝ 12.04.2014:

ուղղված նաև օրենսդրական մի շարք ակտերում ամրագրված դրույթները:¹

198. ՀՀ իշխանությունները 2014թ. դեկտեմբերի ընդունել և 2016թ. հունվարի 1-ից ներդրել են շուրջ 30,000 չաշխատող մայրերին նպաստի տրամադրման համակարգը (մայրության նպաստ)՝ մասնավորապես, ծնունդների խրախուսման ակնկալիքով:²

199. Այդուհանդերձ, ՄՉՄԿ փորձագետների կարծիքով, չնայած այս նախաձեռնությունը սոցիալական աջակցության քայլ է ընտանիքներին և մայրերին, սակայն դրա դրական ազդեցությունը ծնելիության վրա կամ կնոջ դերի բարձրացման առումով ակնհայտ չէ: Ավելին, փորձագետները նշում են, որ որ ծնելիության մակարդակը որոշակիորեն պայմանավորված է ընտանիքի բարեկեցության մակարդակով, այդ թվում՝ երեխաներին հնարավորինս բարձր մակարդակի կրթություն, առողջապահություն, դաստիարակություն, ժամանց և կյանքի ու զարգացման այլ պայմաններ ապահովելու ակնկալիքներով և ընտանիքի՝ այդ պայմաններն ապահովելու հնարավորություններով: Ուստի ծնելիության բարձրացման (կամ գոնե դրա հետագա անկումը կանխելու) և աղջիկ երեխայի արժևորման առումով անհրաժեշտ է նպաստել ընտանիքի բարեկեցության մակարդակի բարձրացմանը՝ ընդլայնելով երեխաների համար ցանկալի կենսամակարդակ ապահովելու հնարավորությունները: Հետևաբար, անհրաժեշտ է նպաստել կնոջ մասնակցությունը թե՛ ընտանիքի եկամտի ձևավորման, թե՛ երեխաների

1 Այսպես, Ի լրումն պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելիչ քաղաքականության, ծրագրերի և առաջարկների թվարկման, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների նախապայման հանդիսացող ցածր ծնելիության մակարդակի որոշակիորեն բարձրացման Ե ուղղված 2013թ. դեկտեմբերին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունված «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը, որում ամրագրվել են ծնունդների նյութական խրախուսմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան նյութական խրախուսման տարբերակված մոտեցումը՝ ծննդյան միանվագ նպաստի տրամադրման ձևով: Բացի այդ, ծննդյան միանվագ նպաստի միջոցների հաշվին, երրորդ և յուրբաբանյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքը ձեռք է բերում պետական աջակցության իրավունք՝ ընտանեկան դրամագլխի ձևով, որն ընտանիքին տրվում է անկանխիկ ձևով և որը կարելի է օգտագործել բնակարանի գնման, կառուցման համար տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսագումար վճարելու կամ մայր գումարը մարելու, կրթական վճարովի ծառայությունների, ուսման վարձի վճարման, առողջության ապահովագրության, գյուղատնտեսական վարկի մարման, ինչպես նաև. հեռավոր կամ սահմանամերձ գյուղական բնակավայրերում բնակարանի կամ այլ անշարժ գույքի ձեռքբերման նպատակներով: («Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ընդունվել է՝ 12.12.2013թ., ուժի մեջ է մտել՝ 01.01.2014թ.:

2 ՀՀ օրենքը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին: Ընդունվել է՝ 01.12.2014, ուժի մեջ է մտել՝ 01.01.2015: Օրենքի՝ չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելուն և վճարելուն վերաբերող դրույթները տարածվում են այն դեպքերի վրա, երբ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի սկիզբը 2016 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո է:

խնամքի գործում: Սա հնարավոր է այն դեպքում, երբ տնտեսությունը, հասարակությունը, պետական քաղաքականությունը խրախուսում են կնոջ աշխատանքը, ինչպես նաև նման աշխատանքը և երեխաների խնամքը համադրելու հնարավորությունները:

200. Նմանապես, ժողովրդագրական բացասական զարգացումների հետևանքների մեղմման, իրավիճակի կայունացման ու բարելավման, և համապատասխանաբար, պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանն է ուղղված 2015-2016թթ. մշակված և շրջանառության մեջ դրված «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թվականների ազգային ծրագիրը», որը միտված է ապահովելու ծնելիության աճ՝ սոցիալ-տնտեսական խրախուսման և առողջապահական գործոնի միջոցով:¹
201. Եռամյա ժամանակահատվածի համար սահմանված ծրագրի հիմնական ուղղությունները վերաբերում են ծնելիության մակարդակի բարձրացմանը՝ ծնունդների նյութական խրախուսման, առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարձրացման ծրագրի իրականացման, ծնող լինելու և աշխատանքային գործունեության համատեղման հնարավորությունների մեծացման միջոցով, մահացության կճատում, այդ թվում՝ մանկամահացության և մայրամահացության ցուցանիշի բարելավմամբ, և ժողովրդագրական զարգացման իրավական դաշտի հետագա կատարելագործմամբ: Վերջինս ներառում է երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների ապահովման առկա կառուցակարգերի բարելավում, բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող մինչև 22 տարեկան հղի կամ մայրացած ուսանող կանանց աջակցություն՝ ուսման վարձի սուբսիդավորում, երիտասարդ կանանց մասնագիտական ուսուցում ստանալու հնարավորությունների ընդլայնում, երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներին աշխատաշուկա վերադառնալու հնարավորությունների մեծացում աշխատանքային գործունեության և ծնողական պարտականությունների համատեղման միջոցով, երիտասարդ և բազմազավակ ընտանիքների աջակցության և զարգացման այլընտրանքային մոտեցումների և տարբերակների

1 «ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2016-2018 թվականների ազգային ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ: http://www.mlsa.am/forum/forum.php?sec=conference&forum_id=-2&topic_id=828:

ներդրում՝ ժողովրդագրական զարգացման ազգային հիմնադրամի
ստեղծմամբ:

7. Եզրակացություններ

202. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման 2015-2017թթ. պետական ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները գերազանցապես ուղղված են եղել այս ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը:
203. Եթե 2016թ. տարեսկզբի տվյալներով նորածինների սեռերի համամասնությունը կազմել է 113 տղա՝ 100 աղջկա հաշվով, ապա 2016թ. առաջին կիսամյակի տվյալներով ՀՀ ԱՎԾ-ն արձանագրել է նորածինների սեռերի անհամամասնության նշանակալի նվազում՝ 108 տղա՝ 100 աղջկա հաշվով:¹ Նման փոփոխությունը վկայում է հիմնական դերակատարների, այդ թվում՝ ՄԱԲՀ-ի, ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի գործընկեր կազմակերպությունների, պետական լիազոր մարմինների և 2011-2015թթ. այլ շահագրգիռ կառույցների իրականացրած գործողությունների **ազդեցության** և աշխարհում աննախադեպ՝ կարճ ժամանակահատվածում սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով առավել մեծ փոփոխությունների հասնելու՝ բարձր **արդյունավետության** մասին: Վերը նշված փոփոխությունն անհնար կլիներ առանց բոլոր շահագրգիռ կողմերի գործուն և համարձակ միջամտության:²
204. Պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է **համապարփակ** քաղաքականություն՝ իրավական կարգավորման գործիքները համատեղելով հասարակության իրազեկմանը, աղջիկ երեխայի արժևորմանը, խտրականությունը սնող կարծրատիպերի փոխակերպմանը և այդ փոխակերպումներին հասնելու համար անհրա-

1 Ծնելիությունը նվազել է Գեղարթունիքում, Տավուշում, Սյունիքում (տեսանյութ), Ա1+, 29 հուլիսի 2016թ., <http://www.a1plus.am/1476930.html>:

2 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն: Կույուժյան Կարինե, ՀՀ ԱՎԾ ժողովրդագրության բաժնի պետ, հարցազրույց 22.09.2016թ.:

Ժշտ մարդկային կապիտալի և ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորմանն ուղղված միջոցառումների հետ:

205. Ծրագրի իրականացման առաջին տարում պետական լիազոր մարմինների, գործընկերներ կազմակերպությունների, շահագրգիռ այլ ոչ պետական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային զարգացման գործընկերների իրականացրած աշխատանքների արդյունքում ՀՀ մարզերում և քաղաքային համայնքներում ապահովվել են համապատասխան **կարողություններ**, բարձրացվել է **հասարակական իրազեկվածության մակարդակը** և ձևավորվել է **քաղաքականության նպաստավոր միջավայր**: Միջոցառումների և գործողությունների նման հավասարակշռված համադրումը, հարուստ գործիքաշարի ընտրությունն ու դրանց կիրառման հաջորդականությունը դարձել են ծրագրի ձեռքբերումների հիմնական գրավականը:
206. Դրանց ամբողջականացումը, զարգացումն ու հետագա հետևողական կիրառումը ծրագրային հաջորդ փուլերում կարող են ապահովել պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման հիմնախնդրի արդյունավետ կանխարգելումը, սոցիալական բարենպաստ փոփոխություններն ու **երկարաժամկետ հատվածում արդյունքների կայունությունը**: Միաժամանակ, միջնաժամկետ հատվածի արդյունքներն ամբողջականացնելու, ձեռքբերումներն ամրապնդելու, մի շարք ծրագրերի շարունակականությունն ապահովելու դեպքում է միայն հնարավոր ապահովել երկարաժամկետ հատվածում երեխայի սեռի նախաձննդյան ընտրության երևույթի հիմնական պատճառ հանդիսացող ընկալումների ու կարծրատիպերի կայուն փոփոխությունը:
207. Պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականությունը, ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպությունների և միջազգային գործընկերների ծրագրերը գերազանցապես հիմնված են երևույթի տարածվածության, դրա դրսևորումների և պատճառների վերաբերյալ **փաստական հիմքերի** և **գիտական հիմնավորումների** վրա և թիրախավորում են երևույթի թե՛ հետևանքները, թե՛ հասարակական ընկալումները, թե՛ խորքային պատճառները: Մասնավորապես, կարևորվում է սկզբնական փուլում խնդրի

հանդեպ մերժողական և թերահավատ մոտեցման փոփոխությունը, և հետազոտությունների տվյալների, եզրահանգումների ու կանխատեսումների նշանակալիության ճանաչումը մասնագիտական, ակադեմիական և պաշտոնական շրջանակների կողմից:

208. Պտղի սեռի խտրական ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման դեմ պայքարում բոլոր դերակատարների քայլերի **արդյունավետության** մասին է վկայում նաև մասնագիտական և ակադեմիական հարթակներում, հասարակության լայն շրջանակներում, պետական լիազոր մարմինների կողմից խնդրի հանդեպ ձևավորված **հստակ վերաբերմունքը**, երևույթի **վտանգավորության** և դրա դեմ **պայքարի անհրաժեշտության ճանաչումը**, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների **գործելու** և պետական մարմինների **համագործակցելու պատրաստակամությունը**: Ասվածի փաստական ապացույցը, մասնավորապես, ԵՄ աջակցությամբ իրականացվող ծրագրի թիրախ լսարանում խնդրի վերաբերյալ **գիտելիքների և մոտեցումների** շոշափելի փոփոխությունն է, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների աննախադեպ ընդգրկվածությունը, իսկ ծրագրի շահառուների շրջանում՝ **ընկալումների, մոտեցումների** և շատ դեպքերում՝ **վարքագծի** փոփոխությունները:

209. Կարծիք ձևավորողների հետ հետևողական ու երկարատև աշխատանքի, հանրապետության ողջ տարածքում հիմնական դերակատարների կարողությունների զարգացման և բնակիչների իրազեկման լայնածավալ միջոցառումների արդյունքում երեխայի սեռի խտրական ընտրության շուրջ քննարկումներն ու հասարակական դիսկուրսը լայն շրջանակներում **սելեկտիվ աբորտից՝** խտրական ընտրության միջոց-դրսևորումից աստիճանականորեն տեղափոխվել է արատավոր երևույթի հիմնական պատճառներից մեկի՝ **տղա երեխայի նախապատվության** ու այդ մարտահրավերին դիմակայելու՝ **աղջիկ երեխայի արժևորման** հարթություն: Հանրային քարոզարշավների **ուղերձների** բովանդակությունը շարունակաբար գտնվել է մանրագնին **մասնագիտական հոգածության և վերահսկողության ներքո**: Այսպիսով, եթե 2000-ականների երկրորդ տասնամյակի սկզբին երևույթի վերաբերյալ հասարակական քննարկումներն առավելապես շեշտադրում էին դրա **հետևանքներն ու դրսևորումները**, ապա հիմնական դերակատարների ջանքերով տասնամյակի երկրորդ կեսին քննարկումն

աստիճանականորեն տեղափոխվել է դեպի երևույթի արմատական **պատճառների** հարթություն:

210. Մեծ դերակատարում է ունեցել իրազեկման քարոզարշավում քաղաքացիական հասարակության **տեղական կառույցներին** ՀՀ մարզերում և համայնքներում գործելու հնարավորության ապահովումը, ինչպես նաև նրանց նախաձեռնություններում **նորարակական** ու **ավանդական** ձևաչափերի համադրության խրախուսումը:
211. Պտղի սեռի խտրական ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականությունն ու հիմնական դերակատարների իրականացրած ծրագրերն ու միջոցառումները մեծապես **մասնակցային** են եղել: Դրանք որոշակիորեն նպաստել են ազգային մակարդակում խնդրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին և պետական կառույցների, հասարակական և զարգացման միջազգային կազմակերպությունների միջև **հանրային քաղաքականության շուրջ երկխոսության** ծավալմանը:
212. Երկխոսության շրջանակների ընդլայնմանն ու դրա բովանդակության ապահովման գործում մեծ դերակատարում են ունեցել պարբերաբար կազմակերպվող **քննարկումներն** ու դրանց արդյունքների ամփոփումը **քաղաքականության համառոտագրերի** ձևաչափով: Երկխոսության և հանրային իրազեկման գործում կարևորագույն դերակատարում են ստանձնել Փոխցանցի անդամներն ու դրա աշխատանքային խմբերը ՀՀ բոլոր մարզերում: Հենց Փոխցանցի անդամների ակտիվ դերակատարմանն ու փոխգործակցության շնորհիվ է հնարավոր դարձել բազմաթիվ միջոցառումների հաջորդական և զուգահեռ իրականացումը համեմատաբար սեղմ ժամկետներում: Շատ դեպքերում Փոխցանցի կազմը համալրվել է քաղաքացիական ակտիվ խմբերի և համայնքային ակտիվ խմբերի անդամներով, ինչը բազմակի մեծացրել է գործողությունների սիներգետիկ ազդեցությունը, փոխգործակցությունն ու համակարգումը տեղերում:
213. Պետական քաղաքականության և ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում մշակվել, քննարկվել և փոխհամաձայնեցվել են աղջիկ երեխայի արժևորման և ծնելիության հետագա կրճատումը կանխելուն ուղղված հանրային

քաղաքականության մի շարք առաջարկներ: Առանձին կարևորագույն առաջարկներ ընդգրկվել են խնդրի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականության **ռազմավարական փաստաթղթերում և իրավական կարգավորման շրջանակներում**: Ընդունվել են համապատասխան **իրավական ակտեր**: Քաղաքականության երկխոսությունը տարբեր դերակատարների ներգրավմամբ, ընդհանուր առմամբ, եղել է շարունակական և հետևողական:

214. Շարունակական երկխոսության արդյունքում Յայաստանի Յանրապետությանը հաջողվել է **խուսափել օրենսդրական անհարկի խիստ սահմանափակումներ** ներդնելուց, հասարակության առանձին խմբերի, այդ թվում՝ հղի կանանց, ընտանիքի անդամների և հարազատների, բժիշկների վրա սելեկտիվ աքորտների արատավոր պրակտիկայի պատասխանատվության բեռը ծանրացնելուց: Միաժամանակ, լայնածավալ քարոզարշավների արդյունքում հասարակական ընկալման մեջ ամրագրվել է սոցիալական փոփոխությունների անհրաժեշտությունը, **հասարակական հավաքական պատասխանատվությունը** և յուրաքանչյուրի **անհատական դերը** երեխայի սեռի ընտրությունը կանխարգելելու գործում: Այս առումով կարևոր է հետագայում ևս զգուշորեն կիրառել իրավական կարգավորման գործիքները և խուսափել անհարկի սահմանափակումների օրենսդրական նախաձեռնություններից:

215. Պտղի սեռի խտրական ընտրության **քրեականացման** նախաձեռնությունները և ներկայում ընդունված օրենսդրական փոփոխությունները, որոշակի դրական ազդեցությանը զուգահեռ (մասնավորապես, դրանք վկայում են երևույթի դեմ պայքարելու՝ պետության հաստատակամությունն ու հետևողականությունը), արդեն իսկ որոշակիորեն **սահմանափակել են առաջնային տվյալների հավաքագրման**, հետազոտական մեթոդների ընտրության, ուստի և, երևույթի դրսևորումների և պատճառների ախտորոշման ու փաստերի վրա հիմնված քաղաքականության նախաձեռնությունների մշակման հնարավորությունները:

216. Միաժամանակ, հանրային քաղաքականության մի շարք կարևորագույն առաջարկներ, այդ թվում՝ **մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատող մայրերին՝** երեխայի խնամքի աջակցության առանձին մեխանիզմների վերաբերյալ, ֆինանսական միջոցների սղության պատճառաբանությամբ դեռևս գտնվում են **քննարկման** փուլում:

217. Մեծապես կարևորվել է մասնագետ **բժիշկների** շրջանում **իրագրելման** աշխատանքների իրականացումը, բժշկական էթիկայի խնդիրների քննարկումը, ինչպես նաև աբորտիֆացիենտ (հղիության ընդհատում առաջ բերող) դեղամիջոցների վաճառքի սահմանափակումը, և դրանց շրջանառության հանդեպ վերահսկողության սահմանումը: Միջնաժամկետ հատվածում նման վերահսկողության խստացումը նույնպես մնալու է քաղաքականության օրակարգում:
218. Բժշկական **տեխնոլոգիաների** զարգացմանը (վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներ, նախաիմպլանտացիոն գենետիկ ախտորոշում, հղիության վաղ շրջանում պտղի սեռի որոշման նորագույն տեխնոլոգիաներ և այլն) գուճահեռ կարևորվում է առանց բժշկական ցուցման պտղի սեռի ընտրության և դրանց կիրառման բժշկական **մասնագիտական էթիկայի** հարցերի շարունակական քննարկումը մասնագիտական շրջանակներում:
219. Շահագրգիռ կառույցների միջև **ինստիտուցիոնալ համակարգման և համագործակցության** կարևորագույն հարթակ է ծառայել ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի Խորհրդատվական հանձնաժողովը, որի գործելու հիմնական մեխանիզմը՝ հանձնաժողովի կիսամյակային նիստերն են, նախաձեռնողը՝ քաղաքացիական հասարակության կառույցները:
220. Ինստիտուցիոնալ բազմադերակատար համակարգման և համագործակցության ֆորմալացումը, այդ թվում՝ պետական գերատեսչությունների և ՄՁՄԿ միջև պետական և ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շուրջ համագործակցության հաստատումն ու **հուշագիրը** մեծապես նպաստել են պետական և ոչ պետական դերակատարների միջև փոխվստահության ամրապնդման, դերերի ամրագրման ու փոխլրացման և ակնկալիքների հստակեցման առումով:
221. Միաժամանակ, մտահոգիչ է ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի ավարտից հետո ինստիտուցիոնալ համակարգման և համագործակցության մեխանիզմի շարունակականությունը: ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի Խորհրդատվական հանձնաժողովի պես մասնագիտացված, բազմադերակատար և հետևողական այլընտրանքային մեխանիզմ մշտադիտարկման խմբին ներկայում հայտնի չէ: Այլ շահագրգիռ դերակատարների

կողմից իրականացվող ծրագրերը բազմադերակատար համակարգման ու խորհրդակցության համապատասխան մեխանիզմ կամ հարթակ չունեն, կամ ներկայում սահմանափակվում են դերակատարների նեղ շրջանակով:

222. Կարծիք ձևավորողների հետ հիմնական դերակատարների աշխատանքի կարևորագույն տարր է եղել կրոնական կառույցների, մասնավորապես՝ **Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (ՅԱԵ)** հետ համագործակցությունը: ՅԱԵ հետ համագործակցությունը զարգացել է գերազանցապես գենդերային հավասարության, աղջիկ երեխայի արժևորման հարթության մեջ: Եկեղեցու ներկայացուցիչները, առաջնորդներն ու կրոնական համայնքների հոգևոր հովիվները կարևոր դերակատարում են ստանձնել և ակտիվորեն մասնակցել են թե՛ հայեցակարգային քննարկումներին և քարոզարշավների ուղերձների ձևավորմանը, թե՛ քաղաքականության նախաձեռնությունների մշակումներին, թե՛ տեղերում կարողությունների զարգացման գործողություններին, թե՛ հանրային իրազեկման քարոզարշավին: համագործակցությունն ընթացել է հիմնականում ընդհանուր արժեքների, մոտեցումների և գործողությունների հարթության մեջ:

223. Պետական քաղաքականության իրականացման, ուղերձների հաղորդման և քարոզարշավի միջոցառումներում կարևորագույն դրական դերակատարում են ունեցել **զանգվածային լրատվության միջոցները**, լրագրողները և խմբագրությունները: Միաժամանակ, ՄՁՄԿ իրականացրած ՉԼՄ-ների մոնիթորինգի նախնական եզրակացությունները փաստում են, որ երկարաժամկետ հատվածում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ հասարակական կարծիքի ձևավորման գործում ՉԼՄ-ների շարունակական դրական դերակատարմանը կարող են խոչըդոտել ՉԼՄ-ների կարողությունները, ինչպես նաև մասնագիտական Էթիկայի շրջանակներում առանձին հարցերի անհստակությունը:

224. Մտահոգիչ է նաև 2017թ. ապրիլին ԵՄ կողմից ֆինանսավորվող ծրագրի ավարտից հետո պետական քաղաքականության և պետական ծրագրերի ֆինանսավորման և ջանքերի **շարունակականության** ապահովման խնդիրը: Այսպես, համապատասխան միջոցառումների իրականացման ապահովման համար անհրաժեշտ **միջոցներ** 2017թ. 33 պետական բյուջեում նախատեսված

չեն: Սա ենթադրում է, որ առնվազն 2017թ. երկրորդ կիսամյակում գործողություններն իրականացվելու են հատվածական՝ առանձին շահագրգիռ կազմակերպությունների իրականացնելիք ծրագրերի և դրանց **ֆինանսական ապահովման** մասով: Այսպիսով, մտահոգիչ է այս ոլորտում համապարփակ հանրային քաղաքականության իրականացման շարունակականությունը **երկարաժամկետ** հատվածում:

8. Առաջարկություններ

225. Ստորև ներկայացված են պտղի սեռի խտրական ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելման քաղաքականության և ծրագրերի, ինչպես նաև տրամախաչվող գենդերային խնդիրների վերաբերյալ առաջարկություններ, որոնք ուղղված են դերակատարների լայն խմբի, այդ թվում՝ պետական մարմիններին, քաղաքացիական հասարակության կառույցներին և միջազգային գարգացման գործընկերներին:

8.1. Հանրային քաղաքականության մշակում, մշտադիտարկում և գնահատում

226. Պտղի սեռի խտրական ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելման, **արդյունքների կայությունը** երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է ապահովել **համապարփակ** հանրային **քաղաքականության և ծրագրերի շարունակականությունը**:

227. Հանրային քաղաքականության և ծրագրերի մշակման գործընթացում անհրաժեշտ է **հավասարակշռված** կերպով ներառել ներգործության համալիր **գործիքակազմ**: Այս առումով հատկապես կարևորվում են.

- երևույթի տարածվածության և պատճառների վերաբերյալ **փաստական հիմքի** ձևավորումը (հետազոտություններ), քաղաքականությունը, ծրագրերը, գործողություններն ու միջոցառումները կառուցել բացառապես փաստական տվյալների և դրանց վերլուծության հիմքի վրա.

- կարծիք ձևավորողների, որոշում կայացնողների և հիմնական դերակատարների **կարողությունների** զարգացումը, այդ թվում՝ քարոզարշավների մշակման և իրականացման համար անհրաժեշտ հաղորդակցության **հմտությունները**, երեխայի սեռի նախաձեռնողյան ընտրության երևույթի և դրա խորքային պատճառների՝ ծնելիության մակարդակի անկման, տղա երեխայի նախապատվության և բժշկական տեխնոլոգիաների հասանելիության ու մատչելիության վերաբերյալ **գիտելիքները**։
- պտղի սեռի խտրական ընտրության նախապայմանների վրա ազդելու ոլորտային քաղաքականությունների մշակումն ու ներդնումը։
- հանրային **իրազեկման և քարոզարշավների** մշակումն ու իրականացումը, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության տեղական կառույցների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով։
- շահագրգիռ կողմերի և հիմնական դերակատարների միջև **ինստիտուցիոնալ համագործակցության և համակարգման** ապահովումը։
- փոխլրացնող գործողությունների հաջորդականության և գույքորոշության ապահովումը և միջնաժամկետ հատվածում դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովումը։
- պետական քաղաքականության և ծրագրերի արդյունքների շոշափելիության և չափելիության, ծրագրերի մշտադիտարկման և արդյունքների պարբերական (տարեկան) գնահատման կառուցակարգերի ապահովումը։
- պտղի սեռի խտրական ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը քաղաքացիական հասարակության լայնածավալ և արդյունավետ մասնակցայնությունը։

- հանրային քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում պետական կառույցների, հասարակական և զարգացման միջազգային կազմակերպությունների միջև հանրային քաղաքականության շուրջ երկխոսության ծավալումը:

228. Առանձին, այդ թվում՝ գենդերային հավասարության ապահովմանը, գենդերային բռնության դեմ պայքարին, ժողովրդագրական մարտահրավերներին դիմակայելու, զբաղվածության ապահովման, վերարտադրողական առողջության պահպանման և այլ հարակից ոլորտներում վարվող պետական քաղաքականության փաստաթղթերում արտացոլել այդ ոլորտների հիմնախնդիրների վրա **խտրականության** տարբեր դրսևորումների, այդ թվում՝ պտղի սեռի խտրական ընտրության ազդեցությունը, դրա կանխարգելման գերակայությունն ու համապատասխան միջոցառումները:

8.2. Փաստական հիմքի ապահովում և հետազոտությունների իրականացում

229. Անհրաժեշտ է ապահովել Հայաստանում **նորածինների սեռերի համամասնության միտումների շարունակական մշտադիտարկումը**, այդ թվում՝ վարչական վիճակագրության ձևավորման և պարբերական հրապարակման միջոցով:

230. Անհրաժեշտ է նաև ապահովել պտղի սեռի խտրական ընտրության երևույթի դրսևորումների և ընկալումների, երևույթը սնող պատճառների ու առանձնահատկությունների, դրանց փոփոխման դինամիկայի, սելեկտիվ աբորտների և ընտանեկան բռնության միջև կապի, տղա երեխայի նախապատվության և սելեկտիվ աբորտների մարզային առանձնահատկությունների, անհատի, ընտանիքի, համայնքի և պետության համար երևույթի սոցիալական հետևանքների վերաբերյալ **հետազոտությունների և վերլուծությունների** պարբերականությունը, այդ թվում՝ դրանց հետազոտական շրջանակների պարբերական վերանայման, տվյալների համադրելիության և վստահելիության, հետազոտությ-

յունների իրականացման ֆինանսական ռեսուրսների ապահովման միջոցով:

8.3. Կարողությունների հզորացում և իրազեկում.

231. Բժշկական մասնագիտական հաստատությունների ուսանողների, կլինիկական օրդինատորների, նախաձննդյան հսկողություն և խնամք իրականացնող մանկաբարձ-գինեկոլոգների, մանկաբարձուհիների, ռադիոլոգների, ընտանեկան բժիշկների և բուժքույրերի նախա- և հետ-որակավորման կրթական ծրագրերում և մասնագիտական վերապատրաստման դասընթացներում մշակել և ներդնել պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված **ուսումնական մոդուլներ**, այդ թվում՝ վերարտադրողական առողջության բժշկական տեխնոլոգիաների կիրառման մասնագիտական Էթիկայի խնդիրների վերաբերյալ: Ապահովել վերապատրաստման դասընթացների իրականացումն ու դրանցում համապատասխան թիրախ խմբերի ընդգրկումը հանրապետության ողջ տարածքում:
232. Ապահովել ՀՀ մարզերում և Երևան քաղաքում քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպությունների, իրավապաշտպանների, պետական կառավարման մարմինների տարածքային կառույցների, ՏԻՄ-երի, առողջապահության, կրթության ոլորտի մասնագետների, սոցիալական աշխատողների, քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինների աշխատակիցների, հոգևոր սպասավորների և համայնքային գործիչների **կարողությունների զարգացումը**՝ գենդերային հավասարության, խտրականության, վերարտադրողական իրավունքների և երեխայի սեռի խտրական ընտրության խնդիրների, ինչպես նաև արդյունավետ հաղորդակցության, վարքագծի փոփոխության և այլ հարակից թեմաների վերաբերյալ՝ հնարավորինս լայն ծածկույթով:
233. Աջակցել երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելմանը, վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների, ընտանիքի առողջությանն ուղղված **քարոզչական** և հանրային **տեղեկատվական-իրազեկման միջոցառումներ**,

քարոզարշավների և ծրագրերի մշակման և իրականացման նախաձեռնություններին՝ ուղղված **աղջիկ երեխայի արժևորմանը**, գենդերային **կարծրատիպերի փոխակերպմանը**, **խտրականության** անթույլատրելիությանն ու վտանգավոր հետևանքներին, **հավասար իրավունքների** և **հնարավորությունների** ապահովման անհրաժեշտության ու օգուտներին, **գենդերային բռնության** կանխարգելմանը: Խթանել ՀՀ մարզերում և համայնքներում գործող քաղաքացիական հասարակության ակտիվ **տեղական կառույցների** իրազեկման քարոզարշավների նախաձեռնություններին, խրախուսել այդ նախաձեռնություններում **նորարակական** ու **ավանդական** ձևաչափերի համադրությունը:

234. Բարձրացնել հասարական **կարծիք ձևավորողների, մշակութային հաստատությունների և զանգվածային լրատվամիջոցների** ներկայացուցիչների, լրագրողների և խմբագիրների իրազեկությունը խնդրի վերաբերյալ: Աջակցել լրատվամիջոցներին և մշակութային հաստատություններին՝ աղջիկ երեխայի արժևորմանը, հասարակության, տնտեսության և քաղաքականության մեջ կնոջ դերի բարձրացմանը, գենդերային կարծրատիպերի փոխակերպման ուղղված նախաձեռնություններին: Աջակցել զանգվածային լրատվության միջոցներում կանանց և տղամարդկանց ներկայացման վերաբերյալ մասնագիտական էթիկայի հստակեցման նախաձեռնություններին: Քարոզարշավները ծրագրելիս հավի առնել ՉԼՄ-ների մշտադիտարկման զեկույցի եզրակացություններն ու առաջարկները:

235. Շարունակել համագործակցությունը **Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու** հետ՝ հավասարության, աղջիկ երեխայի արժևորման խնդիրներում: Աջակցել կրոնական կառույցների՝ երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելման, գենդերային հավասարության ապահովման և աղջիկ երեխայի արժևորման վերաբերյալ հայեցակարգային քննարկումներին, քարոզարշավների ուղեբժնների ձևավորմանը, հանրային իրազեկման քարոզարշավներին և քաղաքականության նախաձեռնությունների մշակումներին մասնակցությանը, կարողությունների զարգացմանը: Աջակցել երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված՝ հոգևոր սպասավորների համար մշակված ուղեցույցի կիրառմանն ու համապատասխան կարողությունների զարգացմանը:

8.4. Իրավական կարգավորում և քաղաքականության ուղղություններ

236. Ապահովել երեխայի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի **քաղաքականության նպաստավոր միջավայրի** ձևավորմանն ուղղված գործողությունների շարունակականությունն ու արդյունավետությունը, այդ թվում՝ քաղաքականության վերլուծության, մշակման և հաղորդակցության միջոցով:
237. Խթանել **աշխատաշուկայում** կանանց մասնակցության, աշխատաշուկայում խտրականության վերացման, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կանանց հնարավորությունների ընդլայնմանն ուղղված, այդ թվում՝ կին գործարարների համար ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը բարձրացնող նախաձեռնություններին, միաժամանակ ընդլայնելով կանանց՝ **աշխատանքն ու երեխայի խնամքը համատեղելու** հնարավորությունները, մեխանիզմները, ենթակառուցվածքները:
238. Մշակել և ներդնել մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատող մայրերին՝ **երեխայի խնամքի աջակցության** գործուն մեխանիզմներ, մոդելներ և ենթակառուցվածքներ:
239. Աջակցել **տարեց հասակում** անձանց սոցիալական խնդիրների լուծումը երաշխավորող կուտակային կենսաթոշակային գործող համակարգի կատարելագործմանը:
240. Ապահովել առանց բժշկական ցուցման պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության մշակած ու ներդրած գործիքների հետևողական կիրարկումն ու օրենսդրության պահանջների կատարման հանդեպ **վերահսկողությունը**, ներառյալ 12-ից մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատման՝ բացառապես բժշկասոցիալական ցուցիչների առկայությամբ պայմանավորված իրականացման վերահսկողությունը և արբոտ առաջացնող գրանցված և չգրանցված ու ժամկետանց դեղերի նկատմամբ հսկողության խստացումը:
241. Ընդլայնել առանձին ոլորտներում մշակվող և իրականացվող ծրագրերի շուրջ քաղաքականության երկխոսությունը, այդ թվում՝

քաղաքականության քննարկումների և համառոտագրերի մշակման ու տարածման միջոցով:

242. Չգուշորեն կիրառել իրավական կարգավորման գործիքները և խուսափել վերարտադրողական իրավունքների անհարկի իրավական սահմանափակումներից, հատկապես այնպիսի սահմանափակումներից, որոնք պատասխանատվության բեռը ծանրացնում են կնոջ ուսերին:

8.5. Ինստիտուցիոնալ համագործակցություն.

243. Ապահովել պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված հանրային քաղաքականության և ծրագրի ներկայացումն ու քննարկումը **ինստիտուցիոնալ համագործակցության** տարբեր **հարթակներում**, այդ թվում՝ գենդերային թեմատիկ խմբի շրջանակներում:

244. Նպաստել պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման շուրջ **ինստիտուցիոնալ բազմադերակատար համակարգման և համագործակցության** կայացմանը, այդ թվում՝ պետական գերատեսչությունների, քաղաքացիական հասարակության կառույցների և զարգացման միջազգային դերակատարների միջև փոխվստահության հետագա ամրապնդման, դերերի ֆորմալ ամրագրման ու փոխլրացման և ակնկալիքների հստակեցման միջոցով:

245. Ապահովել Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի պետական ծրագրի իրականացման համակարգման պետական աջխատանքային խմբի գործունեության արդյունավետությունը, այդ թվում՝ հանդիպումների պարբերականությունը, պարբերական ամփոփագրերի ու արձանագրությունների կազմումը:

Հավելված

Խորը հարցազրույցների մասնակիցների ցանկ

(13.09.2016 - 26.09.2016)

Ազգանուն Անուն	Պաշտոն
Անահիտ Գևորգյան	Նախագահ, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ (ՄԿՀԽ)
Անի Թովմասյան	Ծրագրի ղեկավարի օգնական, «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ (ԱԶԿ)
Անուշ Սուբիասյան	Փորձագետ, ՀՀ Աժ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով
Արժնուհի Թանաշյան	Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ, ՀՀ ԱՍՀՆ
Արժնե Հովակիմյան	Ենթադրամաշնորհային ծրագրի համակարգող, Գորիսի նոր սերունդ ՀԿ
Արուսյակ Պողոսյան	Ծրագրերի իրականացման ծառայության ղեկավար, Հայաստանի երիտասարդական հիմնադրամ
Գայանե Ավագյան	Մոր և մանկան առողջության պահպանման վարչության մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ, ՀՀ ԱՆ
Լիա Մխիթարյան	Հիժադիբ տնօրեն, «Էյվա» արվեստների հիմնադրամ

Լիանա Աղաբեկյան	Գենդերային հարցերի պատասխանատու, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ
Լիանա Ասոյան	Նախագահ , «Բլեջան» ՀԿ
Լուսինե Երեմյան	Երեխաների իրավունքների մոնիթորինգի և գնահատման բաժնի ղեկավար, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ ՅՈՒՆԻՍԵՖ
Լուսինե Սարգսյան	Իրավական վերլուծության վարչության պետ, ՄԻՊ աշխատակազմ
Ծովինար Հարությունյան	Ծրագրերի պատասխանատու, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ (ՄԱԲՀ)
Կարինե Կույունջյան	Ժողովրդագրության բաժնի պետ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
Կարինե Սարիբեկյան	Մոր և մանկան առողջության վարչության պետ, ՀՀ ԱՆ
Մարգարիտ Սեդրակյան	Նախագահ , Հուլյսի Մեծամոր ՀԿ
Մերի Ներսիսյան	Նախագահ , «Ընտանիքի ակադեմիա» ՀԿ
Միեր Մանուկյան	Հաղորդակցության գծով օգնական, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ (ՄԱԲՀ)
Նաիրա Առաքելյան	Նախագահ , «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ (ԱԶԿ)
Ռիմա Ներսիսյան	Ենթադրամաշնորհային ծրագրի համակարգող, «Կենսաց ծառ» ՀԿ
Ռուզաննա Մելյան	Ծրագրի ղեկավար, «Սեյվ դը Չիլդրեն Ինթերնեյշնլ» կազմակերպություն (ՄԴՉ)

Սաթիկ Իսահակյան	Լրագրող, 3 անրային ռադիո
Սուսաննա Մկրտչյան	Դասընթացների և զարգացման գծով պատասխանատու, ՄԴԶ
Սուսաննա Շահնազարյան	Նախագահ, Գորիսի մամուլի ակումբ
Սոֆիկ Մինասյան	Համայնքային համախմբման պատասխանատու, ՄԴԶ
Սևան Պետրոսյան	Ծրագրի ղեկավար, Վորլդ Վիժն 34

Գրականություն ցանկ

RA Law on Making Amendments to the Republic of Armenia Code on Administrative Offences, HO-135-N, adopted on June 29, 2016, effective since August 6, 2016;

RA Law on Making Change and Amendments to the Republic of Armenia Law on Temporary Disability Allowance, HO-206-N, adopted on December 1, 2014, effective since January 1, 2015;

RA Law on Making Amendments to RA Law on Human Reproductive Health and Reproductive Rights, HO-134-N, adopted on June 29, 2016, effective since August 6, 2016;

RA Law on State Benefits, HO-154-N, adopted on December 12, 2013, effective since January 1, 2014;

RA Government Decree № 303-N on Approving the Action Plan of the National Strategy on Human Rights Protection, adopted on February 27, 2014, effective since April 12, 2014;

RA Government Protocol Decree on Approving Gender Policy Strategic Program 2011-2015 and Gender Policy Action Plan 2011;

RA Government Protocol Decree № 24 on Approving the Strategy on Reproductive Health Improvement and its Action Plan 2016-2020 dated June 23, 2016;

Joint Order of the RA Minister of Labour and Social Affairs /№ 1129-Ս, May 13, 2015/ and RA Minister of Health /№ 75-Ս/1, May 8, 2015/ on approving the State Program 2015-2017 on Preventing Sex-Selective Abortions and its Action Plan Timetable;

RA Health Minister's Order №2138-Ս on Approving Research Program on Women's Reproductive Behavior, Abortions and Causes of Giving Birth to a Small Number of Children issued on August 10, 2015;

2016-2018 National Program on RA Demographic Situation Improve-

ment and its Action Plan;

International Center for Human Development, 'Combating Gender-Biased Sex Selection in Armenia' Project, interim report May 1, 2015 – April 30, 2016;

Policy Briefs, International Center for Human Development official website, <http://ichd.org/?laid=1&com=module&module=menu&id=21>

International Center for Human Development, Analysis of social affairs policies and practices of preventing sex selection, 2016;

International Center for Human Development, Analysis of healthcare sector policies and practices of preventing sex selection, 2016;

ICHD official website, <http://ichd.org/?laid=1&>

UNFPA, Sex Imbalances at Birth in Armenia: Demographic Evidence and Analysis study factsheet, 2013;

Christophe Z. Guilмото, "Sex Imbalances at Birth in Armenia: Demographic Evidence and Analysis", Yerevan, 2013, http://www.unfpa.am/sites/default/files/Sex_Imbalance_report_Arm_final-with%20cover-final.pdf;

Youth Foundation of Armenia, Programs on Reproductive Health and Prevention of Sex-Selective Abortions Factsheet;

RA Ministry of Health (MoH), the Republican Institute of Reproductive Health, Perinatology, Obstetrics and Gynecology and UNICEF, Prevalence of and Reasons for Sex Selective Abortions in Armenia Report, Strengthening Sexual and Reproductive Health Services Project, 2011;

Discussion at RA NA Standing Committee on Healthcare, Maternity and Childhood Issues, official website of RA National Assembly, http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=20&month=05&year=2014&NewsID=6612&lang=arm;

Caring for Equality Project factsheet, World Vision Armenia official website, <http://www.wvarmenia.am/en>;

Chen W. Zhongguo de Rengonliuchan (Abortion in China). (Chapter 6) Beijing: Scientific & Technical Documents Publishing House, 2005:

Chu J. Prenatal sex determination and sex-selective abortion in rural central China, *Popul Dev Rev* 2001; 27: 259-81:

Das Gupta, Monica. 2015. "Missing girls" in the south Caucasus countries: trends, possible causes, and policy options. Policy Research working paper; no. WPS 7236. Washington, D.C.: World Bank Group. <http://documents.worldbank.org/curated/en/233691467992010518/Missing-girls-in-the-south-Caucasus-countries-trends-possible-causes-and-policy-options>.

Dudwick, Nora. 2015. "Missing Women" in the South Caucasus: Local perceptions and proposed solution:

Nie J.-B. Non-medical sex-selective abortion in China: Ethical and public policy issues in the context of 40 million missing females. (2011) *British Medical Bulletin*, 98 (1), pp. 7-20:

Peng P (ed). *Zhongguo Jiefa Shengyu Quanshu (The Complete Book of Family Planning in China)*. Beijing: China Population Press, 1997, 939, 959, 984:

Rahm, Laura. 2012. International Best Practices for the Prevention of Prenatal Sex Selection Recommendations for Action for Armenia. Presented to Garik Hayrapetyan, UNFPA Armenia Assistant Representative:

Stump, Doris. 2011. Prenatal sex selection. Report to the PACE Committee on Equal Opportunities for Women and Men. N 19, 20.05.2011:

Ajzen, I. and Fishbein, M. (1980) *Understanding attitudes and predicting social behaviour*. Upper Saddle River, NJ: Prentice Hall:

Bhuyan, A., A. Jorgensen, and S. Sharma. 2010. *Taking the Pulse of Policy: The Policy Implementation Assessment Tool*. Washington, DC: Futures Group, Health Policy Initiative, Task Order 1. Available at: http://pdf.usaid.gov/pdf_docs/PNADX728.pdf:

Catholic Agency for Overseas Development (CAFOD), Christian Aid, and Trocaire. 2013. Monitoring Government Policies: A Toolkit for Civil Society Organisations in Africa. London: CAFOD, Christian Aid, Trocaire. Available at: http://commdev.org/files/1818_file_monitoring-governmentpolicies.pdf:

Carden, F. (2009) Knowledge to policy: making the most of development research. Ottawa: IDRC:

Chapman, J. and Mancini, A. (eds) (2005) Critical webs of power and change: resource pack for planning, reflection and learning in people-centred advocacy. Action Aid (http://moodle.vsoint.org/file.php/1/mod-data/data/6/10/166/CRITICAL_WEBS_booklet.pdf):

Chapman, J., and A. Wameyo. 2001. "Monitoring and Evaluating Advocacy." PLA Notes 43: 48-52. Available at: http://www.g-rap.org/docs/monitoring_and_evaluation/chapman-wameyo_2001_me_on_advocacy.pdf:

Clarke, J., Mendizabal, E., Leturque, H., Walford, V. and Pearson, M. (2010) DFID influencing in the health sector: A preliminary assessment of cost effectiveness. DFID Working Paper 33. London: DFID:

Coen, D. (2002) 'Business interests and European Integration', in Balme, R., Chabanet, D. and Wright, V. (eds) L'action collective en Europe, Sciences Po Press, Paris:

Coffman, J. (2007) 'Evaluation based on theories of policy process', The evaluation exchange, vol.XIII, no. 1&2, Spring (www.hfrp.org/evaluation/the-evaluation-exchange/issue-archive/advocacy-and-policy-change/evaluation-based-on-theories-of-the-policy-process):

Court, J., Hovland, I. and Young, J. (2005) Bridging Research and Policy in Development: evidence and the change process. ITDG/Practical Action:

Davies, R. (2008) 'The Social framework as an alternative to the logical framework' (<http://mande.co.uk/2008/topic-bibliographies/networksanalysisandevaluation/the-social-framework-as-an-alternative-to-the-logical-framework>):

DFID (2010) 'HTN on How to plan an influencing approach to multilateral organisations'. London: DFID:

Duer, A. (2008) 'Measuring Interest Group Influence in the EU: A Note on Methodology', in European Union Politics, Vol. 9, No. 4, 559-576:

Ekboir, J. (2003) 'Why impact analysis should not be used for research evaluation and what the alternatives are', *Agricultural systems* 78: 166-184 (www.sciencedirect.com/science/article/B6T3W-49D2CX0-1/2/8202e4134825afebcf61030745846fc2):

Frankel, N., and A. Gage. 2007. "M&E Fundamentals." Chapel Hill, NC: MEASURE Evaluation. Available at: <http://www.globalhealthlearning.org/course/m-e-fundamentals> and <https://training.measureevaluation.org/certificate-courses/m-e-fundamentals-en>:

Fretheim, A., A.D. Oxman, J.N. Lavis, and S. Lewin. 2009. "SUPPORT tools for Evidence-Informed Policymaking in Health 18: Planning monitoring and evaluation of policies." *Health Res Policy Syst.* 7 Suppl 1. S18. Available at: <http://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/20018108>:

Gladwell, M. (2000) *The Tipping Point: how little things can make a big difference*. Back Bay Books:

Greenhalgh, T., Kyriakidou, O. and Peacock, R. (2004) 'How to Spread Good Ideas: A systematic review of the literature on diffusion, dissemination and sustainability of innovations in health service delivery and organisation'. Report for the National Co-ordinating Centre for NHS Service Delivery and Organisation R & D (NCCSDO), April (www.sdo.nihr.ac.uk/files/project/38-final-report.pdf):

Group, Health Policy Project. Available at: http://www.healthpolicyproject.com/pubs/186_HealthPolicySystemOutcomesConceptualALDec.pdf:

Hardee, K., L. Irani, R. MacInnis, and M. Hamilton. 2012. "Linking Health Policy with Health Systems and Health Outcomes: A Conceptual Framework." Washington, DC: Futures:

Health Policy Project. 2013. "Policy Monitoring." Washington, DC: Futures Group, Health Policy Project. Available at: <http://www.healthpoli->

cyproject.com/index.cfm?id=topics-policyMonitoring:

Innaer, S., Vist, G., Trommald, M. and Oxman, A. (2002) 'Health Policy-makers' perceptions of their use of evidence', *Journal of Health Services Research and Policy*, vol.7 no.4, p239-244:

International HIV/AIDS Alliance and International Council of AIDS Service Organizations. 2010. "Measuring Up: HIV-Related Advocacy Evaluation Training Pack." Brighton, UK: International HIV/AIDS Alliance. Available at: <http://www.aidsalliance.org/Publicationsdetails.aspx?id=477>:

Iverson, A. (2003) 'Attribution and Aid Evaluation in International Development: A Literature Review', for the International Development Research Centre Evaluation Unit, May (www.idrc.ca/uploads/user-S/10557699520iverson-final2.doc):

Jones, H. (2011) 'A guide to monitoring and evaluating policy influence' Background Note for Overseas Development Institute:

Jones, H. and Mendizabal, E. (2010) 'Strengthening learning from research and evaluation: going with the grain', report for IACDI. London: ODI:

Jones, N. with Villar, E. (2008) 'Situating children in international development policy: challenges involved in successful evidence-informed policy influencing' in *Evidence and Policy*, vol4, no.1: p53-73:

Judice, R., J. Lane, A. Katz, R. MacInnis, M. Hijazi, et al. 2013. "Roadmap for Implementing and Monitoring Policy and Advocacy Interventions." Washington, DC: Futures Group, Health Policy Project. Available at: <http://www.healthpolicyproject.com/index.cfm?id=publications&get=publID&pubID=325>:

Keck, M. and Sikkink, K. (1998) *Activists beyond borders: advocacy networks in international politics*. Ithaca, NY: Cornell University Press:

Kingdon, J. (1995) *Agendas, alternatives, and public policies*. New York: Longman:

Klein, G., Moon, B., et al. (2006) 'Making sense of sensemaking 1: alternative perspectives', *Intelligent Systems* 21(4): 70-73:

Lehmann, W. (2003) Lobbying in the European Union: Current rules and practices. European Parliament working paper, Luxembourg (http://ec.europa.eu/civil_society/interest_groups/docs/workingdocparl.pdf):

MacDonald, L., and R. Levine. 2008. "Learning While Doing: A 12-Step Program for Policy Change." Washington, DC: Center for Global Development. Available at: http://www.cgdev.org/files/15417_file_Policy-Change.pdf:

Malajovich, L. 2011. Handbook for Budget Analysis and Tracking in Advocacy Projects. New York, NY: International Planned Parenthood Federation. Available at: <https://www.ipfwhr.org/en/publications/handbook-for-budget-analysis-and-tracking-in-advocacy-projects>:

McGrath, C. (2002) 'Comparative lobbying practices: Washington, London, Brussels' (www.psa.ac.uk/journals/pdf/5/2002/mcgrath2.pdf):

MEASURE Evaluation. 2011. "Data Demand and Use Concepts and Tools: A Training Tool Kit." Chapel Hill, NC: MEASURE Evaluation. Available at: <http://www.cpc.unc.edu/measure/tools/data-demand-use/data-demand-and-use-training-resources/data-demand-use-concepts-tools/data-demand-and-use-3-day-training-materials.html>:

Nielson, S. (2001) 'Knowledge Utilization and Public Policy Processes: A Literature Review', IDRC supported research and its influence on public policy, IDRC Evaluation Unit (www.idrc.ca/uploads/user-S/105223752702-literature_review_final11_by_Nielson.doc):

Pawson, R. (2002) 'Evidence-based policy: the promise of "realist synthesis"', *Evaluation* 8(3) 340-358:

POLICY Project. 1998. "Policy Environment Score." Washington, DC: POLICY Project, Futures Group. Available at: <http://www.policyproject.com/policycircle/content.cfm?a0=2c>:

Reisman, J., Gienapp, A. and Stachowiak, S. (2007a) 'A Guide to Measur-

ing Advocacy and Policy'. Baltimore: Organisational Research Services (www.organizationalresearch.com/publications/a_guide_to_measuring_advocacy_and_policy.pdf):

Rogers, P. (2008) 'Using Programme Theory to Evaluate Complicated and Complex Aspects of Interventions', Evaluation Vol 14(1):29-48:

Ross, J., and E. Smith. 2010. The Family Planning Effort Index: 1999, 2004, and 2009. Washington, DC: Futures Group, USAID | Health Policy Initiative, Task Order 1. Available at: http://www.health-policyinitiative.com/Publications/Documents/1110_1_FP_Effort_Index_1999_2004_2009_FINAL_05_08_10_acc.pdf:

Smutylo, T. (2001) 'Crouching Impact, Hidden Attribution: Overcoming Threats to Learning in Development Programs', IDRC (www.crdi.ca/uploads/user-5/10899909431CROUCHING_IMPACT.pdf):

Spaapen, J., Dijkstra, J. and Wamelink, F. (2007) Evaluating Research in Context: a method for comprehensive assessment. Den. Haag: COS:

Stachowiak, S. (2007) 'Pathways for change: 6 theories about how policy change happens, Organisational research services':

Start, D. and Hovland, I. (2004) Tools for policy impact: a handbook for researchers. London: ODI (www.odi.org.uk/resources/download/156.pdf):

Tilley, N. (2000) 'Realistic evaluation: an overview, Paper presented at the Founding Conference of the Danish', Evaluation Society, September (<http://fm8-10042.nt.uni2.dk/pdf/Nick%20Tilley.pdf>):

Tversky, A. and Kahneman, D. (1981) 'The framing of decisions and the psychology of choice', Science, 211, 453-458:

Whelan, J. (2008) Advocacy evaluation: review and opportunities: Brisbane, AU: The Change Agency:

«Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագիրն իրականացվում է 2015 թվականի մայիսից, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից, Մեյվ դը չիլդրեն նեդերլենդի, Արմավիրի գարգացման կենտրոնի, Մարտունու կանանց համայնքային խորհրդի և Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլի հետ համագործակցությամբ: Այն ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, որի ներդրումը կազմում է շուրջ 750,000 եվրո:

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության մակարդակի նվազեցմանը:



Եվրահանձնաժողովը Եվրոպական միության գործադիր մարմինն է

«Եվրոպական միությունը կազմված է 28 անդամ-պետություններից, որոնք որոշել են միակցել իրենց նորարարական մտեցումները, ռեսուրսներն ու ճակատագրերը: Հիսունամյա ծավալման արդյունքում նրանք ստեղծել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման մի միջավայր, որտեղ պահպանվում է մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունն ու անձի ազատությունը: Եվրոպական միությունը պարտավորություն է ստանձնել՝ կիսելու նվաճումներն ու արժեքները իր սահմաններից դուրս գտնվող երկրների ու իր սահմաններից դուրս բնակվող ժողովուրդների հետ»:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները: